

Մորիս Բարրաթ

«Արմատական քրիստոնեություն»
մաս 2



**ԱՂ ԵՎ
ԷՈՒՅՍ**

ԱՇԱԿԵՐՏԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ջրաժարում հեղինակային իրավունքներից

**Դուք ազատ կարող եք մեջբերել,
կրկնօրինակել ու տարածել այս գրքի նյութը:
«Barratt Ministries»-ը ոչ մի բնօրինակ նյութի
նկատմամբ չի կիրառում հեղինակային
իրավունքի քաղաքականություն:**

Մորիս Բարրաթ

«Արմատական քրիստոնեություն» շարք
մաս 2

ԱՂ ԵՎ ԼՈՒՅՍ

ԱՇԱԿԵՐՏԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Գիրքն առաջին անգամ լույս է տեսել 2003թ.:
Երկրորդ հրատարակություն՝ 2009 թ.:

«Barratt Ministries» հրատարակչություն
Մանչեսթեր M14 5QH, Մեծ Բրիտանիա



Էլ. փոստ: info@barrattministries.org.uk
Ինտերնետային կայք: www.barrattministries.org.uk

Բովանդակություն

Ներածություն	5
--------------------	---

Մաս 1

1. Կարգուկանոն՝ արդյունքին հասնելու միջոց	12
2. Ամբոխից հեռանալը.....	18

Մաս 2

3. Երանությունները	23
4. Խոնարհություն.....	33
5. Սգավորություն	43
6. Հեզություն	52
7. Ճիշտն անելը	63
8. Ողորմածություն	73
9. Սրտի մաքրություն	82
10. Խաղաղարարություն	93
11. Հալածանք՝ նախանձի պատճառով	104
12. Ցնծություն՝ հայիոյանքի դեմ	118

Մաս 3

13. Աստծո հեռանկարը	127
14. Աղ՝ արարչությունում	130
15. Լույս՝ հասարակության մեջ	143
16. Խոնարհ բարեպաշտություն	157

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աստուծոյ շնորհքին համեմատ՝ որ տրուեցաւ ինձի, հիմ գրի իմաստուն ճարտարապետի մը պէս, բայց ուրիշ մը կը շինէ անոր վրայ. սակայն իւրաքանչիւրը թող զգուշանայ թէ ինչպէս կը շինէ անոր վրայ: Արդարեւ ո՛չ մէկը ա՛յլ ուրիշ հիմ կրնայ դնել՝ զրուածէն զատ, որ Յիսուս Քրիստոսն է: Եթէ մէկը այս հիմին վրայ շինէ ոսկիով, արծաթով, պատուական քարերով, փայտով, խարով, խողանով, իւրաքանչիւրին գործը բացայայտ պիտի ըլլայ. քանի որ օրը պիտի բացայայտէ, որովհետեւ կրակով պիտի յայտնուի եւ իւրաքանչիւրին գործին ինչպէս ըլլալը կրա՛կը պիտի փորձարկէ:

Ա Կորնթացիս 3:10-13

«Արմատական քրիստոնեութիւն» շարքի իմ առաջին գրքում ես փորձեցի դնել այն սկզբունքների հիմքը, որոնք օգտակար կլինեն իրական քրիստոնեության հետագա ուսումնասիրություններում: Սակայն հիմքը միայն պիտանի է, եթե նրա վրա շինություն է կառուցվում: Այժմ մենք պետք է տեսնենք այն պարզ պատկերը, թե ինչպիսի տեսք պետք է ունենա ավարտուն շինությունը: Պողոս առաքյալն իր՝ Եբրայեցիս 6:1-2-ում ասում է, որ *մենք պետք է մի կողմ ձգենք մեր հիմքերը* (և նա նշում է սկզբնական ուսմունքները) *և տենչանք կատարելության հասնել:* Երբ Պողոս առաքյալը խոսում է «կատարելության» մասին, նա անմեղությունն ի նկատի չունի, այլ խոսում է հասունության մասին, այն է՝ մի պարագա ու տեղ, ուր մենք կարող ենք Աստծուն պիտանի լինել:

Պողոս առաքյալն իր՝ Եփեսացիս 2:6-ում խոսում է *Յիսուս Զրիստոսի հետ երկնային վայրերում բազմաժ* լինելու մասին, իսկ մենք հասկանում ենք, որ սա ոչ թե ֆիզիկական, այլ հոգևոր գտնվելու վայր է: Այնուամենայնիվ, այս տեղեկությունը մեզ որևէ օգուտ չի բերի, եթե մենք չգիտենք այդ վայրի պատասխանատվությունները: Յիսուսը երկնային վայրերում է՝ Աստծու աջ կողմում, որը միջնորդության վայրն է: Ահա, թե որտեղ է նրա հոգևոր ծառայությունը, որպես Աստծու սեփական քահանայապետ՝ Մելքիսեդեկի կարգի համեմատ: Եթե մենք մտադրված ենք Յիսուսին պիտանի լինել, ապա մենք նույնպես պետք է լինենք հաշտության ու միջնորդության քահանաներ: Աշակերտությունը միայն վերջնական արդյունքին հասնելու միջոց է: Կարգուկանոնը երբեք չպետք է վերջնական արդյունքը դառնա, այլապես այն կկորցնի իր նպատակը: Աշակերտության ավարտն այն է, որ մարդն այնպիսի սերտ հարաբերություն ունենա Աստծու հետ, որ դա նրան թույլ կտա լինելու միջնորդ՝ մի մարդ, որին Աստված սիրում է, հարգում ու լսում:

Իրավական համակարգում իմաստուն է այն, որ դատապաշտպանը կամ միջնորդը գիտենա իրավաբանական օրենսդրությունը: Սա նրան հնարավորություն է տալիս դատավորին պատշաճ կերպով դիմելու: Իմաստուն է նաև մեղադրյալի երկությունը հասկանալը, եթե նա որևէ կերպ օգտակար կարող է լինել իր պաշտպանության գործում: Քանի որ Աստված բարձրագույն դատավորն է, մենք պետք է գիտենանք նրա երկությունն ու մտերիմ, սերտ հարաբերություն ունենանք նրա հետ: Մենք նաև պետք է գիտենանք մարդու ընկած բնույթն ու պատրաստ լինենք տեսնելու մարդկանց սրտերի նենգությունը՝ ներառյալ մեր սրտինը:

Այն անձը, որ սուրբ չէ, չի կարող արդյունավետ կերպով պաշտպանել մյուսներին Աստծու առաջ, իսկ փարիսեցիները, որ մոռացել են, թե որտեղից են գալիս, երբեք Աստծու սիրտը չեն շարժի մյուսների համար:

Աշակերտություն. շինություն, այլ ոչ վրան

Աշակերտությունը շինություն կառուցելու նման մի բան է: Այն պահանջում է բազմաթիվ դժվար տարիների ֆիզիկական տաժանակիր աշխատանք: Այն նման չէ վրանի, որ կարող է մի քանի րոպեում բարձրացվել: Սա վախկոտի կամ անհամբեր էնտուզիաստի համար չէ: Այս շինությունը պետք է դիմակայի քամուն, անձրևին ու փոթորիկներին և պետք է կառուցվի Յիսուսի վարդապետություններին հնազանդվելու ժայռի վրա: Բոլոր այլ հիմքերն ու ժամանակավոր շինությունները չեն դիմակայի այս փորձությանը: Ես այս եզրահանգմանը չեմ եկել աստվածաբանական կամ դոկտրինային հետազոտությունից, այլ իմ անձնական կյանքում ու հոգևոր ծառայությունում ունեցած դժվար ու ցավոտ փորձից: Յիսուսն իր Լեռան քարոզը եզրափակում է՝ իր աշակերտներին ասելով, որ եթե հիմքերը ճիշտ չեն, *ապա նրանց տան փլուզումը ահռելի կլինի*:

Վկայություն

Շատ տարիներ առաջ ես մեկն էի քրիստոնյաների այն փոքր խմբում, որ զգաց միջնորդության աղոթքի կանչը: Կանչը եկավ մի աստվածավախ կնոջ մարգարեությունից հետո, որ արվեց խնդրանքի տեսքով: Այն նման էր միսսիոներական համաժողովների, ուր կոչ է արվում մարդկանց վերցնելու լրիվ պարտականություն իրենց հոգևոր կյանքում: Մեզանից ոմանք դրականորեն պատասխանեցին այդ կոչին, ու յուրաքանչյուրս պարտականություն վերցրեց՝ աղոթքի տեսքով: Մենք ժրաջան էինք ու սկսեցինք պարբերաբար հանդիպել՝ աղոթելու և ծոմապահության համար, որպեսզի միջնորդության աղոթք անեինք Աստծուն՝ մեր երկրում հոգևոր զարթոնք բերելու համար: Աստված չափազանց պարզ կերպով խոսեց ու ասաց մեզ, որ Անգլիան ազատելու համար նա ստիպված կլինի հեռացնել չար ոգիները, որ իշխում են ողջ երկրում: Յիսուսի աշակերտները խիստ դժվարանում էին դևին դուրս

հանել մի տղայի միջից անգամ: Իսկ արդյոք մենք միջնորդության այնպիսի դիրքում էինք, որ Աստված պատասխաներ մեր աղոթքի մեծ լեռանը:

Մենք գիտակցեցինք, որ մենք բավականին հանդուգն էինք, ու մեր հավատքն այդքան էլ մեծ չէր, այսպիսով, մենք սեղմեցինք մեր մտահորիզոնն ու սկսեցինք աղոթել մեր քաղաքի՝ Մանչեսթերի համար (ուր միայն երկուս ու կես միլիոն բնակչություն կա): Մի քանի շաբաթ այս կերպ աղոթելուց հետո Աստված կրկին խոսեց ու հարցրեց, թե մենք ինչպես էինք պատրաստվում հոգևոր զարթոնք բերել մեր մեծ քաղաքում, երբ մենք այն անգամ մեր եկեղեցում չէինք բերել: Մենք նորից ապաշխարեցինք, բայց այժմ ապահով զգացինք ու խանդավառությամբ աղոթեցինք մեր հավատացյալ բազմության համար՝ հասկանալով, որ մենք պետք է սկսեինք այնտեղից, որտեղ մենք էինք, ու որ պետք է երբեք լեռներ չտեղաշարժեինք, եթե դժվարանում էինք չնչին բլուրների դեպքում:

Ինքներս մեզ ազատելը

Աստված, սակայն, անգամ չէր էլ սկսել մեզ այս մեծ գործի համար նախապատրաստելու գործընթացը, և նա մեզ նորից ասաց այն, ինչ պետք է որ ակնհայտ լիներ ի սկզբանե: Քանի դեռ մենք **ինքներս մեզ** չենք ազատել այս աշխարհի ազդեցությունից, ինչպե՞ս կարող ենք ազատել մեկ այլ անձի, էլ չասած մեր եղեկեցին: Հաջորդ տասնութ ամիսների ընթացքում Աստված սկսեց մեր անհատական կյանքի ու բնավորության հետ հաշիվները պարզել: Նա սկսեց մեզ հեզ դարձնել ու փոխել մեր վերաբերմունքը: Այդ երկար ամիսներից հետո Աստված մեզ ասաց, որ նա մեզ փոքր-ինչ իմաստությունն ցույց կտա: Այն, ինչ նա ասաց, մեզ անակնկալի բերեց: Ես ինձ ազատ չեմ զգում կիսելու այն ամենն, ինչ նա մեզ ասաց, բայց հետևանքներն ավերիչ էին ու դեռ իրենց ազդեցությունն ունեն մեր կյանքում: Մենք, հանկարծակի, դարձանք մի հոգևոր մարտի մասնակից, որ կարող էր մեզ

ամբողջությամբ ոչնչացնել, եթե մենք անցած չլինեինք այն մի քանի ամիսների նախավարժանքը՝ չնայած նրան, որ ես արդեն տասնհինգ տարի շարունակ գործնականում կիրառում էի Լեռան քարոզը:

Ես համոզված եմ, որ Լեռան քարոզի կենսակերպը միայն նախապատրաստում է մեզ իրական հոգևոր ծառայության և այն միայն նախավարժանքն է, որ կարող է մեզ իրապես դարձնել Աստծո համար պիտանի՝ որպես միջնորդներ: Այս գիրքը ներառում է Լեռան քարոզի սկիզբը, երանությունները, որ Յիսուսը տվեց իր աշակերտներին: Սա այն բնավորության ուսումնասիրումն է, որի կարիքը մենք ունենք, որպեսզի լինենք աշակերտներ, ու այն արդյունքները, որ դա կբերի: Երանությունների վերջում Յիսուսն իր աշակերտներին ասաց, որ այդ երանությունների բնավորությունն ունեցող քրիստոնյային Աստված դիտարկում է՝ որպես աղ և լույս:

Ես շատ լավ եմ հիշում այն, երբ իմ հայրը 1980-ականներին սկսեց ուսուցանել երանությունների հիման վրա, և այն իմ կյանքի վրա խորն ազդեցություն ունեցավ ու անդառնալիորեն փոխեց այն: Կյանքիս այդ շրջանում ես շատ երգեր էի գրում: Ահա դրանցից մեկը, որն անգամ այսօր ինձ մարտահրավեր է նետում, երբ լսում եմ այն՝ կնոջս կատարմամբ:

*Ես երբեք չեմ գիտենա՝ ինչու ընտրեցիր
Ոգիս՝ թշվառ ու անհուն,
Անկարող եմ հասկանալ, թե ինչ տեսար ինձ անում,
Ինչպիսի՞ր Աստված ես դու, որն ինձ տեսավ
Հավիտենականությունում,
Այնուամենայնիվ, ընտրեց ինձ՝ գիտենալով,
Թե ով եմ ես իրականում:*

*Քանի դու, օ Տեր, դու ես միայն
Ինձ ճանաչում իրականում՝
Ոչ ընկերներիս, եկեղեցուս կամ ընտանիքիս պես,
Միայն դու գիտես մտքերն իմ,*

*Թաքնված ցանկությունները,
Աննար կրքերն իմ ու զաղտնի տենչանքները:*


*Տեր, ամաչում եմ, քանզի սերդ է ոգիս պահանջել,
Աջանամ առավել լավը լինել, քեզ ամեն օր ծառայել՝
Եվիրարար, անասան եռանդով ու կրքով,
Ամեն ինչում քո սիրուն նմանվելով:*

*Ուրեմն, Տեր, փորձություններիս,
Թուլություններիս միջոցով անգամ
Դարձրու ինձ քեզ պես, փոխիր ինձ անդարձ,
Թող, որ դատնամ ես սրբությանդ արտացոլանքը,
Քեզ հաճոյանամ,
Քանզի տեսնում ես ինձ այնպես, ինչպես կամ
Ու ինչպիսին կարող եմ լինել:*

*Քանզի տեսնում ես ինձ այնպես, Տե՛ր,
Ինչպես էլ ոչ ոք ինձ չի տեսնում,
Ինչպիսին կարող եմ լինել այս կյանքում
Ու հավիտենականությունում,
Դու ես ինձ պահանջել, ու ես էլ իմը չեմ,
Քո կամքը թող կատարվի իմ կյանքում՝
Ամեն օր ու հավիտյանս հավիտենից,*

Ամեն

*Բոլոր մեքերումները Աստվածաշնչից բերված են այս կայքից՝
http://armenianbiblechurch.org/armenian_bible.htm*



ԳԼՈՒԽ 1

Կարգուկանոն՝ արդյունքին հասնելու միջոց

Պայքարեցէ՛ք՝ որ մտներ նեղ դռներն. քանի որ կ'ըսեմ ձեզի թէ չատե՛ր պիտի ջանան մտնել՝ բայց պիտի չկարողանան:

Ղուկաս 13:24

Աշակերտությունը ներառում է կարգապահության դասավանդում ուսուցչի կողմից, մեր դեպքում՝ հենց Հիսուսի: Այդ դեպքում, ինչպե՞ս կարող ենք մենք հավասարեցնել այս կարգուկանոնն այն փաստի հետ, որ Հիսուսը եկավ մեզ ազատելու ու մեզ գերությունից ազատագրելու համար: Մի՞թե կարգուկանոնը պատկանում է մեռած կրոնական սովորությանը, այլ ոչ ազատությանն ու կյանքին: Մի՞թե Հիսուսը եկավ օրենքը չեղյալ հայտարարելու ու մեզ շնորհով ազատ արձակելու համար:

Գիտեցե՛ք ճշմարտությունը

Ես այս հարցերին քիչ ուշ կպատասխանեմ, բայց նախ եկեք դիտարկենք Հովհաննեսի ավետարանի մի հանրաճանաչ տող. *«...ու ճշմարտութիւնը պիտի գիտնաք, եւ այդ ճշմարտութիւնը պիտի ազատէ ձեզ» (Հովհաննես 8:32)*: Հիսուսը չի ասում. «Հավատացե՛ք ճշմարտությանը, և այդ ճշմարտությունը կազատի ձեզ»: Հակոբոս 2:19-ում ասվում է, որ դներն էլ են հավատում ու սառսռում, բայց ճշմարտությանը հավատալը, անկասկած, նրանց չի ազատում: Ես

համոզված եմ, որ մարդը կարող է հավատալ Աստվածաշնչի ողջ ճշմարտությանը, սակայն իրականում լինի անհավատ: Ճշմարտությունը գիտենալն ավելին է, քան դրան հավատալը: Ճշմարտությունը գիտենալը հավատքի արտաքուստ կիրառումն է, և հենց այստեղ էլ երևան են գալիս աշխատանքն ու կարգուկանոնը: Այս կյանքում ցանկացած բան **գիտենալը** ջանք ու էներգիա է պահանջում:

«Գիտենալ» բառն Աստվածաշնչում ի նկատի ունի հարաբերություն, իսկ ես հավատացած եմ, որ հարաբերության որակը ուղիղ համեմատական է այդ ուղղությամբ գործադրված ջանքին: Ծննդոց գրքում ասվում է, որ *Ադամը **գիտեցավ** իր կնոջը, և նա գավակ ծնեց*: Սա չի նշանակում, որ Ադամը գիտեցավ ամեն ինչ իր կնոջ մասին, այլ այն, որ Ադամը հարաբերություն ունեցավ, որն այնքան մտերիմ էր, ինտիմ, որ երեխան դրա արդյունքն էր: Պողոս առաքյալն իր՝ Փիլիպպեցիս 3:10-ում ասում է, որ իր նպատակն է *Քրիստոսին **գիտենալը***: Պողոս առաքյալն այստեղ խոսում է հարաբերության, այլ ոչ ուսմունքի գիտության մասին: Ճշմարտությանը հավատալը մեզ չի ազատի. մենք պետք է մեզ կարգուկանոնի բերենք, վարժեցնենք ինքներս մեզ հավատքով ճշմարտությունը հետապնդելուն, և ինչպես ասվում է Աստվածաշնչում՝ *հավատքն առանց գործերի ամենևին էլ հավատք չէ*. Այն միայն պասիվ հավատալիք է, որ մարդուն բերում է Աստծուն ոչ ավելի մոտ, քան սատանան է: Իրականում, սա ավելի է հեռվացնում մարդուն, որովհետև դները գոնե դողում են՝ սա գիտենալով (Յակոբոս 2:17):

Կարգուկանոնը վերջնական արդյունքը չէ

Սկզբունքը, որ ցանկանում եմ ձեզ հետ կիսել, այն է, որ կարգուկանոնը, դաստիարակությունը քրիստոնյայի ազատության համար անհրաժեշտ միջոց է: Այնուամենայնիվ, կարգուկանոնն ինքնին վերջնական արդյունքը չէ և երբեք էլ չպետք է լինի: Այն միայն իրական ազատության հասնելու միջոց է:

Ես կարող եմ պնդել, որ որևէ մեկը չի կարող հայտարարել, թե ազատ է, եթե նա երբևէ սահմանափակված կամ կապված չի եղել (այս կոնտեքստում կարգուկանոնի, դաստիարակության միջոցով):

Որպես միջազգային կարգի մարմնամարզիկ և Անգլիայի հավաքականի անդամ, ես պետք է ինքս ինձ յուրաքանչյուր օր վարժեցնեի խիստ մարզման: Այդ ընթացքում իմ ողջ կյանքը նվիրված էր Անգլիայի հավաքականում լինելու նպատակին: Ինձանից երկու տարվա մարզում պահանջվեց կամովին ձեռքերիս վրա կատարելապես հանգիստ կանգնելու համար, բայց այժմ, քառասուն տարի անց, առանց որևէ նախավարժանքի ես դեռևս ունեմ հավասարակշռություն անելու այն, ինչն ինձնից այդքան մեծ ջանք պահանջեց: Ես այժմ կարգուկանոնից ազատ եմ, բայց դեռևս կարողանում եմ անել այն, ինչ երկու տարվա կարգուկանոնն ինձ հնարավորություն տվեց կատարելու: Ես երբեք չեի կարողանա այս ազատությունը ձեռք բերել՝ առանց կարգուկանոնի, վարժեցման սահմանափակմանը:

Կենսակերպ դառնալը

Ահա թե ինչպիսին պետք է լինի մեր քրիստոնյա կյանքը: Անձնական, գաղտնի աղոթքներին ու ծոմապահությանը դժվար է սովորել, սակայն եթե համառենք, ապա որոշ ժամանակ անց այն կդառնա մեր կենսակերպը: Դրանից հետո շատ հեշտ է շարունակել այս ամենը կատարելը՝ առանց սեփական կարգուկանոնի ու անձնուրացության նախկին հոգեկան տրավմաների: Իրականում մարդը, ով գործնականում կիրառում է այն կենսակերպը, որը Հիսուսն է ուսուցանում, ակնհայտ պակասի զգացում կունենա, եթե հանգամանքները խոչընդոտեն նրան ապրել այդ կենսակերպով: Մենք բոլորս վաղ տարիքում վարժեցվել ենք մեր ատամներն ամեն օր մաքրել (ու, հավանաբար, բողոքել ենք դրա դեմ), սակայն այժմ, եթե մենք մեկ օր մեր ատամները չմաքրենք, ապա բերանի խոռոչում անհարմար ու

աղտոտ զգացում կունենանք: Սա այլևս վարժեցում, կարգուկանոնի դաստիարակում չէ, այլ կենսակերպ:

Ճամարտությունը հոգևոր մի՛ դարձրեք

Որոշ քրիստոնյաներ ասում են, որ Լեռան քարոզը ոչ թե այսօրվա եկեղեցու համար է, այլ միայն Հիսուսի աշակերտների համար էր, կամ էլ միայն հրեաների, որոնք դեռ օրենքի ազդեցության տակ էին: Նրանք պնդում են, որ քանզի մենք այժմ Աստծու շնորհքն ունենք, ապա ազատ ենք այս ելույթի որոշ լեզալիստական ուսմունքներից:

Շատերն էլ ընդունում են, որ Լեռան քարոզը կիրառելի է այսօր, սակայն քանի որ այն այդքան հակասում է մեր նյութապաշտ, եսասիրական կենսակերպին, նրանք մի կողմ են դրել Հիսուսի դժվար խոսքերն ու դրանք կիրառելի դարձրել միայն ոչ-քրիստոնյաների համար: Եթե Հիսուսն ակնհայտորեն խոսում է քրիստոնյաների մասին, ապա նրանք անհրաժեշտ են համարում «հոգևորականացնել» այդ ասույթները: Սա անելով նրանք նոսրացնում, մինչև անգամ հակասում են նրան, ինչ Հիսուսն իրականում ի նկատի ուներ: Օրինակ, Մատթեոս 7:13-14-ում Հիսուսը խոսում է *ընդարձակ ճանապարհի* ու *նեղ ճանապարհի* մասին: Կոնտեքստը, ակնհայտորեն, աշակերտներին է ուղղված՝ ցույց տալով այն երկու ուղիները, որ մենք կարող ենք ընտրել որպես քրիստոնյա, սակայն սա հաճախ քարոզվում է՝ որպես բարի լուրի խոսք: Նրանք ասում են, թե ընդարձակ ճանապարհը դեպի դժոխք տանող ուղին է, որի վրա ոչ-քրիստոնյաներն են գտնվում, իսկ նեղ ու անձուկ ճանապարհը քրիստոնյայի ուղին է: Սակայն կիրառության ուղղությունը քրիստոնյաներից դեպի անհավատներին շրջելով՝ կորում է եկեղեցուն արված կոչը:

Ժա՞յռ, թե՞ ավագ

Միննույն սխալն է արվել Լեռան քարոզի եզրափակիչ նկարագրության վերաբերյալ, այն է՝ ժայռի կամ ավագի վրա կառուցված տունը: Ճիշտ պարզաբանումը հասկանալի է, քանի որ Հիսուսն ինքն է բացատրում, որ երկու շինարարներն էլ լսում են Լեռան քարոզի խոսքերը (հետևաբար, նրանք ոչ-քրիստոնյաներ չեն) ու նրանք կամ **լսում են ու հնազանդվում**, կամ էլ **լսում են ու չեն հնազանդվում**, այսինքն մերժում են կատարել այն, ինչ Հիսուսը նրանց խնդրում է: Ժայռը կամ ավագը հնազանդվել կամ չհնազանդվելն է: Չարմանալին այն է, որ այս այլաբանությունը նույնպես քարոզվում է՝ որպես բարի լուրի խոսք, չնայած նրան, ինչ Հիսուսը հստակորեն պնդել է: Հիսուսի օրինակում տունն է փլվում, այլ ոչ թե տուն կառուցողը: Նրա գործերն են ոչնչացվում, այլ ոչ նա¹: Իհարկե, Աստվածաշնչից կամ ցանկացած այլ գրքից կարելի է վերցնել յուրաքանչյուր նկարագրություն ու գործածել այն՝ որպես բարի լուրի խոսք: Սակայն աստվածաշնչյան նկարագրությունը կոնտեքստից դուրս կիրառելու վտանգն այն է, որ մենք կորցնում ենք այն, ինչ Աստվածաշունչը պարզորոշ կերպով ասում է, ու փոխարինում ենք դրա իրական իմաստը մեկ այլով, որ հաճախ ճշմարիտ չէ:

Հավատացե՛ք ու կատարե՛ք

Այսպիսով, եթե մենք դիտարկենք Լեռան քարոզն ու ընդունենք և հավատանք դրան ամբողջությամբ, բայց մեզ չվարժեցնենք այն իրականում կիրառելու, ապա մենք, փաստորեն, մերժում ենք այն ու կառուցում ենք ավագի վրա: Հիսուսն ասաց, որ դրա հետևանքն այն է, որ մեր **շինությունը** Քրիստոսի դատաստանի առջև որևէ արժեք չի ունենա: Գրքերի այս շարքը աստվածաբանական ուսմունքների վերաբերյալ չէ. սրա ողջ իմաստն է խրախուսել քրիստոնյաներին հասկանալ ու կիրառել Լեռան քարոզը: Նպատակն է ամենասուրբ

հավատքով վեր ելնել՝ որպես պատշաճ մի շինություն, որին Յիսուսը չի ամաչի ներկայացնելու իր Յորը՝ որպես անբիծ հարսնացու:

Նշումներ

1. Պողոս առաքյալը շինության մի նմանատիպ նկարագրություն է կիրառում իր՝ Ա Կորնթացիս 3:11-15-ում: «Արդարեւ ո՛չ մէկը ա՛լ ուրիշ հիմ կրնայ դնել՝ դրուածէն զատ, որ Յիսուս Քրիստոսն է: Եթէ մէկը այս հիմին վրայ շինէ ոսկիով, արծաթով, պատուական քարերով, փայտով, խարով, խոզանով, իւրաքանչիւրի գործը բացայայտ պիտի ըլլայ. քանի որ օրը պիտի բացայայտէ, որովհետեւ կրակով պիտի յայտնուի եւ իւրաքանչիւրի գործին ի՛նչպէս ըլլալը կրա՛կը պիտի փորձարկէ: Եթէ մէկուն գործը՝ որ շինած է անոր վրայ՝ մնայ, ինք վարձատրութիւն պիտի ստանայ, եթէ մէկուն գործը այրի՝ պիտի կորսնցնէ, իսկ ինք պիտի փրկուի, սակայն իբր թէ կրակի մէջէն»:

Պողոս առաքյալը հաստատում է, որ **գործն է** փորձվում ու կործանվում: Նա ասում է, որ մարդկանց այս երկու դասերն էլ կառուցված են միևնույն՝ Քրիստոսի հիմքի վրա, բայց նրանց գործը, այսինքն այն շինությունը, որ նրանք կառուցում են, կարող է լինել բարի կամ չար, և հենց այդ շինությունն էլ կործանվում է: Անձը կորուստ կկրի, բայց ինքը կփրկվի:



ԳԼՈՒԽ 2

Ամբոխից հեռանալը

Ան ալ ըսաւ անոնց. «Դո՛ւք առանձին եկէ՛ք ամայի տեղ մը, եւ հանգչեցէ՛ք քիչ մը». քանի որ շատեր կու գային ու կ'երթային, եւ հաց ուտելու իսկ ժամանակ չէին ձգեր:

Մարկոս 6:31

Նախքան երանությունները դիտարկելը մենք պետք է հաշվի առնենք այն հանգամանքներն ու իրադարձությունները, որոնք Հիսուսին նախապատրաստեցին քարոզելու Լեռան քարոզն իր աշակերտներին:

Մատթեոսի ավետարանն ասում է մեզ, որ *«Անոր (Հիսուսի) համբաւը տարածուեցաւ ամբողջ Սուրիայի մէջ, եւ բերին անոր բոլոր հիւանդները՝ որ զանազան ախտերով ու տանջանքներով կը տուայտէին, նաեւ դիւահարներ, լուսնոտներ, եւ անդամալոյծներ, ու բուժեց զանոնք: Մեծ բազմութիւններ կը հետեւէին անոր՝ Գալիլեայէն, Դեկապոլիսէն, Երուսաղէմէն, Հրէաստանէն եւ Յորդանանի միւս կողմէն»* (Մատթեոս 4:24):

Հիսուսը մի մեծ բազմություն էր գրավել իր կատարած հրաշքներով, ու ամբոխը դեռ գալիս էր բոլոր շրջակա տարածքներից: Հիւանդորդ գլխի սկիզբը, հետևաբար, անակնկալ է, քանի որ այն ասում է, թե բազմությունը տեսնելով (իսկ սա, վստահաբար, ներառում էր կաղ ու դիվահար ու կարիքավոր մարդկանց)՝ նա լեռն ի վեր գնաց, ու երբ նստած էր իր աշակերտները եկան իր մոտ: Այլ կերպ ասած՝ նա թողեց ամբոխն ու դրա կարիքներն ու լեռն ի վեր գնաց, որպեսզի առանձին խոսի իր աշակերտների հետ:

Մեզ համար նույնպես գալիս է մի ժամանակ, երբ պետք է թողնենք մեր եկեղեցական գործունեությունն ու մեր ավետարանչությունը, որպեսզի կարողանանք առանձնանալ՝ մեր Տիրոջ ոտքերի տակ նստելու ու նրա կողմից անձամբ ուսուցանվելու համար: Հիսուսն իրեն առանձնացրեց ամբոխից ու նրանց կարիքներից. նմանապես, կան ժամանակներ, երբ մենք պետք է անենք միևնույնը: Լեռան քարոզից հետո Հիսուսն իջավ լեռն ի վար ու շարունակեց իր հրաշագործ հոգևոր ծառայությունը: Մենք պետք է հավասարակշռենք մեր կյանքն ու հոգևոր ծառայությունը:

Սկսնակների համար չէ

Այն, ինչ այստեղ ընդգծում եմ, հետևյալն է. մենք երբեք չենք հասկանա Լեռան քարոզը, եթե մենք չառանձնանանք ու այն չսերտենք «Լեռան գագաթի» նման միջավայրում:

Չափից ավելի շատ քրիստոնյաներ հոգևոր ծառայության են անցնում՝ նախքան կարգուկանոնի, դաստիարակության որևէ փորձի: Պողոս առաքյալն ասաց Տիմոթեոսին, որ հոգևոր ծառայությունը *սկսնակների համար չէ*: Պողոս առաքյալը սա գործնականում իր սեփական կյանքում էր հասկացել, քանզի նա բազում տարիներ անց էր կացրել եկեղեցուց հեռու՝ Աստծուն փնտրելու ու հարության առած Քրիստոսի մասին անձամբ հայտնությունն ստանալու համար:

Մարդկային եռությունը արագ չի փոխվում: Այն փոխվում է *փառքից փառք*, այն է՝ քիչ-քիչ, հետզհետե, և մի սովորություն հաղթահարվում է մեկ այլ սովորությամբ: Հետևաբար, Ադամի եռությունից Քրիստոսի եռությանը փոխվելը դանդաղ, ցավոտ փորձ է: Երբ մենք վերածնվում ենք, մենք նոր կյանք ենք սկսում, բայց մենք հոգևոր մանուկներ ենք, և, ինչպես բնականում, այնպես էլ հոգևորում, աճը հասունության հասնելու բազում տարիների գործընթաց է: Այն պատահաբար կամ էլ զգացմունքային ու ներշնչման մեթոդների միջոցով չի ստացվում:

Անգամ անկեղծ հոգևոր զգացումները փոխարինողներ չեն ու չեն կարող լրացնել մեր կյանքում կարգուկանոնի, դաստիարակության պակասը:

Պետք է ընգծեմ, որ այս գիրքը կարգուկանոնի մասին չէ, այն ազատության մասին է. բայց առանց կարգուկանոնի և դաստիարակության միջոցի իրական ազատություն գոյություն ունենալ չի կարող: Արևմտյան հասարակությունն ապացուցել է, որ բարոյական ազատությունը միայն ստրկության է հանգեցնում. երիտասարդներն այժմ ավելի խորն են թակարդված անառակությամբ ու թմրադեղերով, քան երբևէ եղել են: Նրանք հեշտ որս են դառնում նորաձևության ու երաժշտության աչքակապությանը, և այդ չարիքների հետևանքները ճշմարտացիորեն տարբերելու հարցում մեծ պակաս ունեն: Ինքնաբավարարման մտածելակերպն արմատապես անասոված նիհիլիզմ է¹: Մեր հասարակություններում տանը, դպրոցում ու եկեղեցում առկա կարգուկանոնի պակասն արտադրել է մի շփոթված սերունդ՝ հասունացած Աստծու դատաստանի համար, ու մի շփոթված եկեղեցի, որ սրընթաց կերպով ընթանում է դեպի Բաբելոն²:

Նշումներ

1. *Նիհիլիզմը փիլիսոփայական դիրք է, որ պնդում է գոյությունն՝ առանց օբյեկտիվ իմաստի, նպատակի կամ ներքին արժեքի: Նիհիլիստները սովորաբար հայտարարում են, որ օբյեկտիվ բարոյականություն գոյություն չունի, հետևաբար, գոյություն չունի այնպիսի մի օբյեկտիվ բարոյական արժեք, որով պետք է տրամաբանորեն մի արարքը գերադասել մյուսի նկատմամբ: Նիհիլիստները, որ համոզում են, թե օբյեկտիվ բարոյականություն գոյություն չունի, կարող են պնդել, որ գոյությունը չունի որևէ ներքին ավելի բարձր արժեք կամ նպատակ: Նրանք նաև կարող են պնդել, որ չկա որևէ խելամիտ ապացույց կամ փաստարկ բարձրագույն ղեկավարի կամ արարչի*

գոյության վերաբերյալ, կամ էլ ենթադրում են, որ անգամ եթե գոյություն ունեն բարձրյալ ղեկավարներ կամ արարիչներ, ապա մարդկությունը որևէ բարոյական պարտավորություն չունի նրանց երկրպագելու:

2. *Բաբելոն բառը նշանակում է շփոթություն: Այստեղ էր, երբ Աստված խառնեց, շփոթեց աշխարհի լեզուները: Բաբելոն ասելով ես ի նկատի ունեմ շփոթության հոգևոր վիճակ: Երբ Աստծու թագավորությունը ներծծվում է աշխարհիկ համակարգերից ցանկացածով, շփոթություն է առաջ գալիս: Չիտեսն ասաց, որ իր թագավորությունն այս աշխարհից չէ, ուրեմն, այս խառնուրդը պետք է բացատրվի՝ որպես Աստծու կեղծ թագավորություն, որը Բաբելոնի մասն է:*





ԳԼՈՒԽ 3

Երանությունները

*Երանի՛ր անոնց՝ որ իրաւունքը կը պահեն,
Եւ ամէն ժամանակ արդարութիւնը կը կիրարկեն:
Սաղմոս 106:3*

*Երանի՛ր անոնց՝ որ ճամբայով պարկեշտ են,
Որոնք Տէրոջ Օրէնքին համաձայն կրն՞թանան:
Երանի՛ր անոնց՝ որ անոր վկայութիւնները կը պահեն,
Եւ ամբողջ սրտով զինք կը փնտռեն:
Սաղմոս 119:1-2*

Նախքան երանությունները մեկ առ մեկ դիտարկելը, ցանկանում եմ ձեզ հետ կիսել մի քանի ընդհանրական գաղափար, որ վերաբերվում է դրանց բոլորին:

Սրանք են յուրաքանչյուր երանության երեք մասերը.

- Ա.** պնդում, որ մենք օրհնյալ ենք, այն է՝ մեզ երանի տալը:
- Բ.** պայման, որ կժառանգի այդ օրհնութիւնը:
- Գ.** խոստում կամ հետևանք, եթե մենք բավարարենք պայմանը:

Եկեք ավելի մանրամասն դիտարկենք այս երեք մասերից յուրաքանչյուրը:

ՄԱՍ Ա - Օրհնություններ

Երբ Աստված ասում է, որ մենք օրհնյալ ենք (երանի է տալիս մեզ), սա ոչ թե մեր զգացմունքների հետ կապ ունի, այլ այն է, թե ինչպես է Աստված տեսնում մեզ: Աստված մեզ տեսնում է՝ որպես արտոնյալ ու օրհնյալ ժողովուրդ: Մենք, հնարավոր է, որ օրհնյալ **չզգանք**, բայց մենք **օրհնյալ ենք**: Սա Աստծու հեռանկարն է, մտապատկերը: Մենք արտոնյալ ենք, որովհետև Աստված մեզանից գոհ է, երբ մենք միևնույն եռությունը, բնավորությունն ունենք, ինչ ինքը: Հրեշտակն ասաց Մարիամին. «Օրհնյալ ես դու կանանց մեջ». նա Աստծու աչքին չափազանց արտոնյալ էր: Սգալը, վստահաբար, օրհնության զգացողությունն չի բերում, ոչ էլ հալածանքը, բայց Հիսուսը պատգամում է մեզ ուրախանալ, երբ մեզ հալածում են իր անվան պատճառով, որովհետև Աստված գոհ է մեզանից, հետևաբար, մենք **օրհնյալ ենք**, այն է՝ Աստծու համար արտոնյալ:

Մենք չպետք է օրհնությունն փնտրենք

Աստվածաշնչը մեզ չի խրախուսում օրհնությունն փնտրել: Սա այն պարզ պատճառով է, որ օրհնությունը միշտ էլ հնազանդության բնական հետևանք է: Միևնույն կերպ էլ անհնազանդությունը կբերի օրհնության հակառակը. Այն Աստծու անեծքը կբերի մեզ վրա: Հետևաբար, մենք ոչ թե պետք է փնտրենք օրհնյալ լինել, այլ Աստծու ցուցումներին հնազանդ լինել, ու այնուհետև մենք ինքնաբերաբար օրհնյալ կլինենք: Աստվածաշնչում օրհնության խոստումները միշտ էլ ուղեկցվում են պայմաններով: Աստծուց պահանջել պահել իր խոստումը, առանց բավարարելու հնազանդ լինելու պայմանը, կհանգեցնի ձախողության ու այն բանի թյուրիմացության, թե ինչ է Աստված պատվիրում: Մենք օրհնյալ ենք, որովհետև հնազանդ ենք: Հնազանդությունը միշտ էլ գոհացնում է Աստծուն: Օրհնանքը քրիստոնյայի բացառիկ իրավունքը չէ, այլ հնազանդության բնական հետևանք: Երբ մենք բավարարենք

պայմանները, խոստումը կհաջորդի: Սա այնքան բնական է, ինչքան ցանելու ու հնձելու օրերը:

Չին ուխտը

Չին կտակարանում Աստված հարայելի զավակներին ասաց, որ եթե նրանք ուշադրությամբ ականջ դնեին, պահեին ու պահպանեին իր պատվիրաններն ու գործադրեին դրանք, ապա օրհնությունները կհետևեին: Մովսեսն ասում է սա Բ Օրինաց 28:1-ում, նախքան բոլոր օրհնությունները թվարկելը, և կրկին տող 15-ում: Այնուհետև նա թվարկում է այն բոլոր անեծքերը, որ Աստված կբերի իր ժողովրդի վրա, եթե նրանք չհնազանդվեն իր պատվիրաններին (տող 16-68): Խոստացված օրհնությունների այս հատվածը խիստ հանրաճանաչ է, որովհետև այն վերաբերում է արևմտյան հասարակության նյութապաշտ արժեքներին, բայց մենք պետք է տեսնենք այն, որ հակառակը նույնպես ճշմարիտ է. եթե մենք չհնազանդվենք, ապա Աստված մեզ կանիծի¹:

Նոր ուխտը

Նոր կտակարանն այս ամենը չի փոխում, որովհետև Աստծու սկզբունքները չեն փոխվում նոր ուխտի հետ: Աստծու Էությունն ու սկզբունքները **մնում են** նույնը, հետևաբար, Լեռան քարոզում էլ խոստումներն ու օրհնություններն ի կատար են ածվում, երբ մենք բավարարում ենք պայմանները, իսկ դրանք ինն են: Երկիրը ժառանգելու համար մեր պայմանը հեզ լինելն է: Թագավորությունը մերն է, միայն եթե մենք համեստ ենք. գոռոզներն ու հպարտները չեն կարող երկնքի թագավորություն մուտք գործել ու նրանք չեն կարող դրան տիրանալ: Եթե մենք օրհնություններն ենք ուզում ստանալ, մենք պետք է կենտրոնանանք սգալու, հեզության ու համեստության վրա, իսկ օրհնությունները կհետևեն՝ որպես բնական հետևանք:

Հավատացած եմ, որ մեծ սխալ է հավատալ նրան, թե Աստուծու եռությունը անփոփոխ չէ ողջ Աստվածաշնչում: Կարծել, թե Հին կտակարանում Աստված դաժան դատավոր էր ու ցույց էր տալիս իր զայրույթը, իսկ Նոր կտակարանում Աստված միայն ցույց էր տալիս իր ողորմածությունն ու շնորհքը, մոլորություն է: Թվում է, թե որոշ քրիստոնյաներ հավատում են նրան, որ Աստուծու սիրտը փոխվել է Մաղաքիայի մարգարեության ու Մատթեոսի ավետարանի միջև: Այս մտածելակերպը վտանգավոր է ու ոչ ճշմարիտ: Հին կտակարանը լի է Աստուծու ողորմածությամբ ու շնորհքով մի ապստամբ ու անհնազանդ ժողովրդի հանդեպ, իսկ Հովհաննեսի հայտնության գիրքը Նոր կտակարանում պարունակում է ավելի դաժան դատաստաններ, քան Հին կտակարանի որևէ այլ գիրք:

Ավելի ծանրակշիռ բաները

Մատթեոս 23:23-ում Հիսուսը նախատում է դպիրներին ու փարիսեցիներին և անվանում նրանց կեղծավորներ, որովհետև նրանք բաց էին թողել օրենքի *ավելի ծանրակշիռ բաները*, որոնք էին *կարեկցությունը, իրավունքն ու հավատը*: Լեռան քարոզի հետագա ուսումնասիրություններում մենք կտեսնենք, որ Հիսուսը հստակորեն ասում է, որ նա եկել է ոչ թե օրենքը ոչնչացնելու, այլ այն իրագործելու: Հիսուսն ու առաքյալները մեջբերումներ էին կատարում Հին կտակարանից շատ ու շատ ավելի անգամներ, քան քրիստոնյաների մեծամասնությունը գիտակցում է, իսկ երանությունները դրա վառ օրինակն են:

ՄԱՍ Բ - Պայմանները

Ինն անգամ Հիսուսը մեզ երանի է տալիս, ասում, որ մենք օրինյալ ենք՝ իր աչքին արտոնյալ, երբ մենք իր բնավորության գծերն ունենք: Աստվածաշնչում ինը թիվը հաճախ չի նշված, բայց Պողոս առաքյալի՝

Գաղատացիս 5:22-23-ում նշված են Յոգու պտուղների ինը հատկություններ, ինչպես նաև Ա Կորնթացիս 12:7-11-ում բերված Է Սուրբ Յոգու ինը դրսևորումների ցանկը: Ես չեմ հավատում, որ պատահականություն է այն, որ այս բոլոր ցանկերն ունեն ինը հատկություններ կամ բացահայտումներ: Յավատացած եմ, որ ինը թիվը Աստծու բուն Էության ու նրա բնավորության ներկայացուցիչն է: Սուրբ հոգու ինը շնորհներն Աստծու ուժի լիությունն են, իսկ պտղի ինը բնորոշ հատկանիշների ցանկը Աստծու բնավորության, նրա Էության լիությունն են: Ինը երանությունները նույնպես կապ ունեն Էության, բնավորության հետ: Երանություններն ամփոփում են Քրիստոսի ողջ բնույթը և, հետևաբար, քրիստոնյայի ողջ Էությունը, բնավորությունը:

Վերաբերմունք

Այս ինը պայմանները հատկություններ չեն, որոնց մենք տիրապետում ենք. սրանք իրենցից մտածելակերպ կամ վերաբերմունք են ներկայացնում: Սրանք այն չեն, **ինչ մենք կատարում ենք**, այլ այն, թե **ինչպես ենք մենք մտածում**: Յամեստությունը գործողությունների հետ որևէ կապ չունի: Այն վերաբերմունք է: Յեզությունը վերաբերմունք է, որի արդյունքն է մերժել փոխհատուցում պահանջելը, երբ մենք ունենք դա անելու իրավունքն ու ուժը: Ողջ սրբությունը բխում է սրտից, այլ ոչ մեր գործողություններից: Յամեստ կամ հնազանդ գործողությունը, իրականում, կարող է մեզ հպարտ դարձնել, եթե մենք զգույշ չլինենք: Սա ավելի ակնհայտ կդառնա, երբ մենք ավելի մոտիկից ուսումնասիրենք սրտի այս հատկությունները: Մենք երբեք չենք կարող «տիրապետել» ողորմածության, կամ սրտի մաքրության, կամ Էլ հեզության: Դրանք երբեք մերը չեն դառնա: Դրանք միայն Աստծու բնավորության գծերն են՝ բացահայտված մեզանում, և կախված նրանից, թե որչափ ենք մենք Յոգով ընթանում, այդչափ Էլ մենք կունենանք այս վերաբերմունքը: Ճիշտ այնչափ, որքանով մենք մարմնով ենք ընթանում, մենք անկարող կլինենք երանությունները

բացահայտելու մեր ամենօրյա կյանքում: Այնուամենայնիվ, մենք կարող ենք ցուցադրել արտաքին գործողություն, բայց սա կեղծավորություն կլինի, եթե մեր սրտի վերաբերմունքը չի համապատասխանում դրան²:

Պայմաններն աստիճանաբար աճում են

Չիսուսը մեծ ուսուցիչ է ու այս երանությունները չի արտաբերել կամայական հերթականությամբ: Երկնքի արքայություն մուտք գործելը պայմանավորված է մեր համեստությամբ (հոգու աղքատություն): Մենք չենք կարող գալ Աստծու մոտ ու ասել. «Դե, Աստված, ես համոզված եմ, որ քո թագավորության համար մեծ արժանիք կլինեմ, որովհետև ես բավականին լավ մարդ եմ, ես ժամանակին վաճառող եմ եղել ու կարողացել եմ իրոք ազդեցություն գործել ուրիշների վրա, ես բնույթով առաջնորդ եմ, ուրեմն դու իրոք իմ կարիքն ունես քո թագավորությունում...»:

Մենք գալիս ենք, որպես երեխաներ, ու ասում. «Ես քո կարիքն ունեմ իմ կյանքում, ես մեղսավոր եմ, ես չեմ կարող ինքս ինձ ազատագրել: Խնդրում եմ, ներիր ինձ»: Այս բոլորը մեղանչելու ու հոգու աղքատության պնդումներ են: Սա է արքայության մուտքը: Քրիստոնյայի կյանքն այսպես է սկսում: Սա մեր կյանքում Աստծու բնավորության կազմավորման սկիզբն է: Չոգու աղքատությունը միշտ էլ հպարտության հակառակն է: Չաջորդ երանությունը սգալն է: Այս հատկությունը կախված է համեստությունից: Միայն համեստ մարդիկ սգալու ունակություն ունեն: Չպարտ մարդիկ երբեք չեն սգում: Նրանք ինքնաբավարարված են: Երբ մենք սգում ենք, մենք պատրաստ ենք Աստծո բնավորության հաջորդ գծին՝ հեզություն, հնազանդություն, ուսուցանելի լինել: Չես կարող ուսուցանել հպարտ մարդուն, որովհետև նա ամեն ինչ գիտի: Միայն այն անձը, որ ինքն իրեն տեսնում է այնպիսին, ինչպիսին Աստված է տեսնում նրան, կսգա իր պակասը, ուսուցանելի կլինի, քաղցած ու ծարավ կլինի արդարության համար, մաքուր սիրտ կունենա և այլն:

Իհարկե, սա այդքան էլ պարզունակ չէ, ինչպես թվում է: Սա չի նշանակում, որ մենք պետք է մեր քրիստոնյա կյանքի առաջին հատվածն անցկացնենք համեստություն սովորելու վրա, որպեսզի համապատասխանենք հաջորդ բնորոշ գծին: Սրանք նաև փուլային են, և մեր քրիստոնյա կյանքի ընթացքում մենք միշտ էլ վերադառնում ենք մեր արմատներին ու մեզ Աստծու առաջ խոնարհեցնելուն, որովհետև հպարտությունը մուտք է գործել մեր սիրտ: Յուրաքանչյուր անգամ, երբ մենք խոնարհեցնում ենք ինքներս մեզ, պարզում ենք, որ իրականում մենք բնավորության բոլոր բնագավառներում էլ աճել ենք, քանզի Աստծու Էության ցանկացած մաս ընդհանուրից անբաժան է:

Սուրբ կյանքի հետևանքը

Չիսուսը գիտեր ճիշտ և ճիշտ այն աստիճանական գործընթացը, որին հետևում էր, որովհետև վերջին երկու օրհնությունները հալածանքների վերաբերյալ են: Անհնարին է բնավորությամբ Չիսուսի նման լինել ու հալածանքների չենթարկվել: Սա սրբության նշան ու ապացույց է: Պատմությունն ապացուցել է դա՝ սկսած առաքյալներից ու շատերից, որ նահատակվել են, մինչև բարեփոխականներն (ռեֆորմիստներն) ու ներկայիս օրվա սրբերը, որոնք հալածանքներ են կրում աշխարհի շատ երկրներում: Պողոս առաքյալն իր՝ Բ Տիմոթեոս 3:12-ում ասում է նրան՝ երիտասարդ հոգևոր ծառային. *«Եւ բոլոր անոնք՝ որ կ'ուզեն բարեպաշտութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսով, պիտի հալածուին»:*

ՄԱՍ Գ - Խոստումները

Չափատացած եմ, որ երանություններում եղած խոստումները չեն կարող ամբողջությամբ ի կատար ածվել, քանի դեռ Քրիստոսն իր ֆիզիկական երկրային թագավորությունը չհաստատի: Դրանք բոլորը

կարող են մասամբ իրագործվել, ու հավատացած են, որ դրանք գալիք արքայության կանխաճաշակումն են, բայց դրանցից և ոչ մեկն իրապես չի իրագործվի նախքան դա: Օրինակ, *սգավորները պիտի մխիթարվեն*: Իհարկե, այս կյանքում շատերն են մխիթարվել, բայց շատերը Քրիստոսի համար մահացել են սարսափելի նահատակությամբ ու որևէ մխիթարություն չեն ստացել մահվանից առաջ: Աստծու խոսքը ճշմարիտ է, հետևաբար միակ բացատրությունն այն է, որ նրանք կմխիթարվեն, երբ Քրիստոսի թագավորությունը լինի երկրի վրա: Հեգերը պիտի ժառանգեն երկիրը, սակայն ե՞րբ: Քրիստոնյաները երկու հազար տարի շարունակ անհաջող փորձեր են ձեռնարկել թագավորությունը հաստատել՝ սկսած Հռոմեական կայսրությունից մինչև ուխտագնաց հայրերը, որոնք փորձեցին կրկին սկսել «Նոր աշխարհում», ու վերջացրած ժամանակակից՝ «թագավորությունն այժմ» ուսմունքը. բայց հավատացած են, որ սա չի կարող իրագործվել նախքան Հիսուսն իր արքայությունը հաստատի երկրի վրա:

Ուխտադրուժ եկեղեցին

Եկեղեցին չի կարող ժառանգել երկիրն ու որպես ժառանգակից իշխել՝ նախքան Հիսուսը կրկին կգա իր թագավորությամբ: Եկեղեցու համար ֆինանսական և քաղաքական ուժ ձեռք բերելն ուխտադրուժ եկեղեցի դառնալն է: Այս նյութը մեր ուսումնասիրությունների առարկայից դուրս է, սակայն պատմությունն այսպիսի տապալման շատ օրինակներ ունի³:

Ղուկաս 19-ում գրված է, որ Հիսուսը մի առակ պատմեց, *«քանի որ ինք երուսաղեմի կը մօտենար եւ անոնք կը կարծէին թէ Աստուծոյ Թագաւորութիւնը անմիջապէս պիտի երեւնար: Ուրեմն ըսաւ. «Ազնուական մարդ մը գնաց հեռաւոր երկիր մը՝ իրեն Թագաւորութիւնը ստանալու եւ վերադառնալու ...բայց երբ նա վերադարձաւ՝ Թագաւորութիւնը ստանալով...» (Ղուկաս 19:11-27)*: Աստվածաշնչի գիտակաների մեծամասնությունը համաձայն է, որ Հիսուսն ազնվականն

Է: Յետևաբար, առաջին. Յիսուսը կգա՝ իր **թագավորությամբ**, այլ ոչ՝ **դեպի** իր թագավորություն. և երկրորդ, նա կգա **իր** թագավորությամբ, այլ ոչ այն թագավորությամբ, որ եկեղեցին է կառուցել, որը, հավատացած եմ, կեղծ թագավորություն է: Նրանք՝ Քրիստոսի ծառաները, ովքեր պետք է զբաղվեին դրանով, կանգնել էին դատի առաջ, թե արդյոք պիտանի էին կառավարելու գալիք թագավորությունում:

Առաջին հարցերից մեկը, որ աշակերտները տվեցին Յիսուսին նրա՝ մեռելներից հարություն առնելուց հետո, հետևյալն էր. *«Տէ՛ր, այս ժամանակի՞ն պիտի վերահաստատես Իսրայելի Թագավորութիւնը»: Ըստ անոնց. «Ձեզի չի վերաբերիր գիտնալ ժամանակներն ու ատենները, որ Հայրը իր իշխանութեան մեջ դրաւ...» (Գործք Առաքելոց 1:6-7):* Յին կտակարանում մարգարեացվել էր, որ Յիսուսը *պիտի ժառանգի ամեն բան, նստի իր հոր՝ Դավթի գահին, ու ժողովուրդներին կառավարի երկաթե գավազանով:* Սա հոգևոր այլաբանությունն է, այլ ֆիզիկական խոստում, ու քանզի Յիսուսը չիրագործեց մարգարեություններից շատերը երկրի վրա առաջին անգամ լինելիս, ապա միայն ողջամիտ է ենթադրել, որ դրանք կիրագործվեն նրա երկրորդ գալստյան ժամանակ: Քրիստոնյաներից չի ակնկալվում ֆիզիկական թագավորությունը երկրի վրա հաստատել, քանզի Յիսուսն ասաց, որ *Աստծու թագավորությունը մեզանում է:*

Յատկություններ, այլ ոչ պատվիրաններ

Օրենքը հաճախ ասում է՝ «դու չպիտի...», և բացասական է այն իմաստով, որ այն մեզ ասում է, թե ինչ չպիտի անենք: Երանությունները խիստ տարբերվում են: Սրանք դրական են, ու դեռ ավելին. Յիսուսը չի ասում՝ «Դու պետք է խոնարհ լինես, կամ պետք է հեզ լինես», այլ ասում է, որ **երթե** դու հեզ ու խոնարհ ես, Աստված քեզանից գոհ է, ու դու կստանաս նրա խոստումները: Այսպիսով, աշակերտությունը պատվիրան է, այլ Յիսուսի մարտական կոչին կամավոր պատասխան:

Այժմ եկեք դիտարկենք յուրաքանչյուր երանությունն ու դրա գործնական կիրառությունը յուրաքանչյուր քրիստոնյայի համար:

Նշումներ

1. Սա մեր ուսումնասիրության նյութից դուրս է, սակայն որևէ արժեք չունի այն, որ անեծքներն աստվածաշնչում սատանայի կողմից չեն, այլ հենց Աստծու կողմից են՝ տող 15-28: Մենք պետք է, իհարկե, ընդունենք, որ սատանան կարող է դրանք կատարել՝ Աստծու անունից, կամ Աստծու թույլտվությամբ: Անգամ Ճննդոց գրքի 3-րդ գլխից սկսած՝ Աստված անիծեց հողն ու օձին, իսկ Օրենքի երկրորդ գրքից մեջբերված տողերում օրհնություններն ու անեծքները երկուսն էլ գալիս են Աստծոց: Սատանան երբեք որևէ մեկին չի անիծել: Նա մարդուն գայթակղում է Աստծուն անհանազանդ լինել, և մենք դրանից հետո հայտնվում ենք Աստծո, այլ ոչ սատանայի դատաստանի տակ:

2. Պողոս առաքյալի՝ Ա Կորնթացիս 13:1-3-ը համեմատում է արտաքին գործողությունները սրտի հետ, իսկ դա լուրջ մարտահրավեր է: Սխալ վերաբերմունքի հետևանքներն են. տող 1՝ ես նյարդայնացնում եմ Աստծուն, տող 2՝ ես ոչինչ եմ, և տող 3՝ իմ գործողություններն ինձ որևէ օգուտ չեն բերում:

3. Ժակ Էլլուլի հեղինակությամբ *The Subversion of Christianity* (Eerdmans, 1986) գիրքը մտածողության ավելի շատ նյութ է տալիս, ու շատ օրինակներ՝ իր պնդումն ապացուցելու:



ԳԼՈՒԽ 4

Երանութիւնն առաջին

Խոնարհութիւնն

Երանի՛ հոգիով աղքատներուն, որովհետեւ երկինքի թագաւորութիւնը անոնցն է:

Մատթեոս 5:3

Կամ կը կարծէք թէ Գիրքը ընդունա՞ն կ'ըսէ. «Նախանձի կը տենչայ մեր մէջ բնակող հոգին»: Սակայն աւելի մեծ շնորհք մը կու տայ, ուստի կ'ըսէ. «Աստուած կ'ընդդիմանայ ամբարտաւաններուն, բայց շնորհք կու տայ խոնարհներուն»: Ուրեմն, հպատակեցէ՛ք Աստուծոյ: Դիմադրեցէ՛ք Չարախօսին, եւ ան պիտի փախչի ձեզմէ: Մօտեցէ՛ք Աստուծոյ, եւ ան պիտի մօտենայ ձեզի: Մաքրեցէ՛ք ձեր ձեռքերը, մեղաւորներ, ու սրբացուցէ՛ք ձեր սիրտերը, երկմիտներ: Զգացէ՛ք ձեր թշուառութիւնը, սգացէ՛ք եւ լացէ՛ք. ձեր խնդուքը թող փոխուի սուգի, ու ձեր ուրախութիւնը՝ տրտմութեան: Խոնարհեցէ՛ք Տէրոջ առջեւ, եւ ան պիտի բարձրացնէ ձեզ:

Հակոբոս 4:5-10

Ուրեմն խոնարհեցէ՛ք Աստուծոյ հօր ձեռքին տակ, որպէսզի ժամանակին բարձրացնէ ձեզ:

Ա Պետրոս 5:6

Յոգու աղքատությունը և խոնարհությունը հաճելի զգացում չէ։ Աղքատության ցանկացած տեսակը մեր հին եռության համար նողկալի է ու ավտորժելի չէ մեր զգացմունքներին և մեր եսին։ Նախքան ավելի խորը կոփտարկենք այս բնորոշ գիծը, մենք պետք է որոշենք, թե արդյոք Յիսուսը **որ** հոգին ի նկատի ունի։ Ո՞ր հոգին պետք է աղքատ լինի։ Յնարավոր չէ, որ սա վերաբերի Աստծու Յոգուն, քանզի մենք ցանկացած ժամանակ պետք է նրա Յոգով լի լինենք։ Մենք օրհնյալ ենք, երբ **լի** ենք Աստծով, և մահացու վտանգի տակ, երբ Աստծու Յոգուց **դատարկված** ենք։ Պետք է որ խոսքը գնա մեր սեփական հոգու մասին, մեր իրական եսի, մեր եռության, որը պետք է աղքատ լինի։ Աստված ասում է, որ մենք արտոնյալ ենք ու նրա աչքին օրհնյալ ենք, երբ խոնարհ ենք։ Յետևաբար, տարօրինակ է այն, որ ժամանակակից ուսմունքի մեծամասնությունը պնդում է, որ մենք կարիք ունենք ավելի լավ ինքնապատկերացման ու որ մենք պետք է մեզ ավելի բարձր գնահատենք։

Մուտք դեպի թագավորություն

Մենք թագավորություն մուտք ենք գործում միայն խոնարհության միջոցով։ Մեր փրկությունը չի կարող սկսվել առանց այս հատկության։ Մենք պետք է խոստովանենք, որ Աստծու պակասը և նրա կարիքը ունենք, որ մենք խեղճ կորուսյալ մեղսավորներ ենք։ Վստահաբար, սա հոգու աղքատություն է։ Ոչ ոք երբեք փրկություն ձեռք չի բերել հպարտության, գոռոզության միջոցով, հետևաբար, ինձ համար ապշեցուցիչ է այն, որ մարդիկ ուսուցանում են, որ մենք այժմ պետք է այս հատկությունը մի կողմ նետենք ու մեր ինքնագնահատականը բարձրացնենք։ Մեր սեփական անձի բացահայտումն ահռելի մեծ ազատություն է բերում, սակայն գործընթացը ցավոտ է։ Մենք պետք է ջանք գործադրենք շարունակելու մեր քայլքն այնպես, ինչպես սկսել ենք՝ միշտ գիտակցելով մեր մարմնական թուլությունները, ինչպես

Պողոս առաքյալն է ասում իր Յովմեացիս 12:3-ում, որ մեր մասին ավելի բարձր կարծիք չունենանք, քան այն, ինչ պետք է մտածենք:

Ուեսլիի սահմանումը

Միգուցե Ձոն Ուեսլիի սահմանումը մեզ օգնի: Նա ասում է, որ «խոնարհ են նրանք, որոնք ճանաչում են իրենք իրենց», այսինքն նրանք, ովքեր գիտեն իրենց ճշմարիտ գնահատականը: Սակայն, սա հաճելի չէ, որովհետև չնայած նրան, որ մենք ներված ենք, ու մեղքն այլևս որևէ դատապարտող ուժ չունի մեզ վրա, մենք դեռևս կատարյալ չենք, երբ խոսքը վերաբերում է Քրիստոսի եռությանն ու գործողությունների հասունությանը:

Մարդ արարածի համար ամենացավոտ փորձությունը իր մասին ճշմարտությունը գիտենալն է: Երեմիա 17:9-ում ասվում է, որ *սիրտն ամեն բանից ավելի խաբեբա է ու անուղղելի չար, ո՞վ կարող է այն ճանաչել*: Մեր եսի բացահայտումը ցավալի ու անասելի կերպով տհաճ է, բայց մեր եռությունում որևէ իրական փոփոխություն չի կարող տեղի ունենալ առանց մեր մասին այս ճշմարտության բացահայտման: Աստված չի կարող մեր կյանքում որևէ բանի հետ գործ ունենալ, նախքան մենք կգիտակցենք ու կխոստովանենք այն. իսկ մենք չենք կարող դա խոստովանել, նախքան այն չբացահայտվի, ու մենք ինքներս այն չտեսնենք: Շատ քրիստոնյաներ շատ տարիների ընթացքում չեն փոխվում այն պարզ պատճառով, որ նրանք վախենում են բացահայտվելուց՝ անգամ իրենք իրենց աչքին:

Ընտրություն

Երանությունների բոլոր պայմաններն ընտրություն են պահանջում: Դրանք մեր մտքի նորացման ու մեր վերաբերմունքի փոփոխման գործընթացի մի մասն են: Դրանք պարզապես

մտածելակերպ են: Սխալ է երանությունների մասին որպես միայն գործողություն մտածելը: Հնարավոր է խոնարհ կերպով գործել, սակայն հպարտ, գոռոզ լինել: Օրինակ, ես կարող եմ լինել տարեց մարդկանց հերթի սկզբում՝ սպասելով ավտոբուսին, որ միայն մի քանի ազատ տեղ ունի: Հասկանալով, որ ես պետք է խոնարհվեմ, ես գնում ու կանգնում եմ հերթի վերջում: Վստահաբար, սա խոնարհ **գործողություն** է, բայց իմ սիրտը (ենթագիտակցական մտածողությունը) կարող է այս գործողությունով հպարտանալ:

Խոնարհությունն այն է, թե ինչպես եմ ես մտածում, և ոչ այն, թե ինչպես եմ ես գործում: Հիսուսն ամեն ժամանակ խոնարհության հենց բուն եությունն էր, սակայն նա տաճարում խիստ ագրեսիվ կերպով վարվեց, երբ մի քանի պարան մտրակի վերածեց, շուռ տվեց սեղաններն ու դուրս նետեց դրամափոխներին: Հավատացած եմ, որ նրա սիրտը վայրկյան անգամ չկորցրեց խոնարհությունը:

Խնդիր

Արդյոք սա նշանակում է, որ մենք չպետք է ինքներս մեզ խոնարհեցնենք: Ճիշտ հակառակը, մենք, իրոք, պետք է դա անենք, բայց մենք պետք է հասկանանք, որ միայն գործողությունը ճշմարիտ խոնարհությունն չի լինի, քանի դեռ սիրտը համաձայնության չգա: Մեր դրդապատճառները պետք է մեր գործողությունների հետ համընկնեն: Փարիսեցիներն այս ծուղակն ընկան՝ չնայած նրան, որ նրանց արտաքին գործողությունները շատ բարի էին: Նրանք կեղծավորներ էին՝ ոչ այնքան իրենք գործողությունների, որքան իրենց սրտերի ու դրդապատճառների համար: Նրանց սրտի դրդապատճառներն էին սխալ, սակայն նրանք դա չէին գիտակցում: Չափազանց հեշտ է քրիստոնյաների համար խաբեության ենթարկվելը, այն է՝ գիտենալ, թե մենք ինչ ենք մտածում ու ինչ ենք անում, բայց չգիտենալ մեր դրդապատճառները՝ սրտի թաքուն ցանկությունները:

Ես դա թույլ կտամ

Եկեք ենթադրենք, թե ընդունում ենք այն փաստը, որ մենք պետք է խոնարհ լինենք, ու ասում. «Դե, եթե Աստված կամենում է ինձ խոնարհեցնել, ուրեմն ես նրան չեմ ընդդիմանա: Ես թույլ կտամ Աստծուն ինձ խոնարհեցնել»: Սա կարող է, առաջին հայացքից, լավ աղոթք թվալ, քանի դեռ մենք չենք դիտարկել սուրբ գրություններն ու հայտնաբերել, որ սա կարող է լինել գոռոզ ու ինքնագոհ պնդում: Հակոբոս 4:6-7-ն ասում է մեզ **հպատակվել ինքնակամ** ու չսպասել, որ Աստված մեզ հպատակեցնի, խոնարհեցնի: Պողոս առաքյալի՝ Փիլիպպեցիս 2:1-8-ը ևս կհաստատի իմ փաստարկը, քանզի Պողոս առաքյալը բերում է Հիսուսի օրինակը, ով հպատակեցրեց իրեն: Հիսուսը «թույլ չտվեց Աստծուն խոնարհեցնել իրեն», այլ **նա խոնարհեցրեց ինքն իրեն**, *նույնիսկ մինչև մահ խաչի վրա*: Ո՛չ փարիսեցիները, ո՛չ էլ սատանան չխոնարհեցրեցին Հիսուսին խաչի վրա, քանզի նա ուներ իր կյանքն ընծայելու կամ հետ վերցնելու գործությունը: Նրա խոնարհությունն ինքնակամ խոնարհվելու որոշում էր: Պողոս առաքյալն իր՝ Փիլիպպեցիս 2:3-ում նշում է. *«Ո՛չ՝ մեկ բան ըրեք հակառակութեամբ կամ սնափառութեամբ, հապա՝ խոնարհութեամբ ուրիշը ձեզմէ գերազանց համարեցէք»*: Պողոս առաքյալը չի քարոզում «**ինքնագնահատում**», ինչպես բազմաթիվ ժամանակակից հոգևոր ծառաներ են անում, այլ նա քարոզում է «**ուրիշների կողմից գնահատում**»: Սերը, որ բոլոր երանությունները մարմնավորող մի բան է, եսից զուրկ հատկություն է: Սերը տալիս է, այն չի վերցնում: Սերը միշտ էլ մյուսների մասին է մտածում: Եսը միայն իր մասին է մտածում: Տող 5-ն ասում է մեզ ունենալ Քրիստոսի մտածողությունը: Մի՞թե սա հնարավոր է: Իհարկե: Փառավոր կերպով հնարավոր է ձեզ և ինձ համար ունենալ Քրիստոսի վերաբերմունքը և մտածել Լեռան քարոզի նման: Սա գործընթաց է, իսկ մեր միտքը չի կարող նորացվել մի գիշերում: Մեզանից կպահանջվի ավելին, քան մի հուզումնալից որոշում, որպեսզի փոխվի մեր՝ տարիների սխալ մտածելակերպը, ու մենք համաձայնվենք Քրիստոսի մտքի հետ:

Ոչ մի համբավ

Պողոս առաքյալի՝ Փիլիպպեցիս 2:7-ն ասում է, որ Հիսուսն **ինքնիրեն ունայնացրեց, դարձրեց առանց համբավի**: Սա չի նշանակում, որ նա վատ համբավ ձեռք բերեց, ոչ էլ անգամ լավ համբավ: Սա նշանակում է, որ եթե մարդիկ Հիսուսին գովաբանում էին, դա որևէ ազդեցություն չէր ունենում նրա սրտի վրա, քանզի *նա գիտեր, թե ինչ է մարդու սրտում*: Սա նաև նշանակում էր, որ եթե նա քննադատվում էր կամ գրպարտվում, ապա դա նույնպես նրա վրա որևէ ազդեցություն չէր ունենում: Մարդկանց կարծիքները չէին տատանում նրա սիրտը: Երբ մենք միևնույն վերաբերմունքն ունենք, այն է՝ թույլ տալ մարդկանց ունենալ իրենց կարծիքը մեր մասին, թե լավ և թե վատ, առանց մեզ վրա որևէ ազդեցություն ունենալու, մենք, իրոք, խոնարհ ենք և ապահովված շատ հպարտ մտքերից ու գործողություններից:

Իմ կինը պրոֆեսիոնալ երգչուհի է, և նա եկել է այնպիսի մտածելակերպի, որ այս դեպքում օգտակար կլինի նկարագրել: Մարդիկ ասել են, որ նա երգում է Բարբարա Սթրեյզանդի նման, որը կնոջս համար հաճոյախոսություն է, բայց նա նաև ճանաչում է մարդկանց, որ խորությամբ ատում են Բարբարա Սթրեյզանդի ձայնը, ուրեմն, սա նաև կարող է անարգանք լինել: Նրա եզրակացությունն այն է, որ եթե որևէ մեկը կարծում է, թե իր ձայնը լավն է, դա նրանց կարծիքն է, այլ ոչ ճշմարտությունը: Միևնույն պնդումն իրավացի է, եթե մեկը կարծում է, թե նրա ձայնը սարսափելի է: Սա ճշմարտությունը չէ, այլ նրանց կարծիքը:

Այսպիսով, որևէ մեկի քննադատությունը կամ գովեստն այլևս նրա վրա ազդեցություն չի ունենում: Նա այժմ միայն երգում է Աստծուն գոհացնելու համար: Միակ բանը, որ նրա համար կարևոր է, այն է, թե ինչպիսին է Աստծու կարծիքը: Սա նրան ազատել է մարդկանց կարծիքների նկատմամբ ունեցած վախից: Միևնույն կերպ, Հիսուսին միայն հետաքրքրում էր իր Հոր կարծիքը, հետևաբար, մարդկանց գովեստը կամ քննադատությունը նրա վրա ազդեցություն կամ հետևանք չէին թողնում:

Չպարտութեան հակառակը

Չպարտ մարդը ակնկալում է և ազդվում մարդկանց կարծիքներից: Սա նշանակում է, որ նա կվախենա մարդկանց կարծիքներից ու նրանցից գովեստ կաղաչի: Խնդիրն այն է, որ երբ վախենում ես մարդկանցից ու հարգում նրանց, ապա չես վախենում Աստծուց ու չես հարգում նրան: Աստծու կարծիքը հաշվի առնելը նշանակում է մարդկանց կարծիքը հաշվի չառնել: Խոնարհ մարդը վախենում է Աստծուց, հարգում նրան, ու չի մտահոգվում մարդկանց քննադատութեան կամ էլ նրանց կողմից հավանութեան արժանանալու մասին:

Աստծու վախը մեզ ազատում է ցանկացած մահկանացու արարածի կամ իրավիճակի նկատմամբ ունեցած վախից: Խոնարհ մարդը տիեզերքում ամենաազատ մարդն է, քանզի նա իր ճշմարտացի գնահատականը գիտի: Նա ինքն իրեն տեսնում է այնպիսին, ինչպիսին կա իրականում: Չպարտ մարդն իր ու իր իրավիճակի մասին սխալ կամ աղավաղված պատկերացում ունի և երբեք ազատ չէ, քանզի հպարտութունը մարդկութեան առավելագույն մոլորեցնողն է: Խոնարհ մարդն անհանգստացած չէ, երբ նրան մեղադրում են հպարտ լինելու մեջ:

Չպարտ մարդիկ արդեն անիծված են

Սատանան հպարտութեան մարմնացումն է և Աստծու արարածներից ամենակույրն ու ամենամոլորվածն է: Նրա նեռերն էլ են ցույց տալիս նրա եռթյունը: Վեհութեան մոլուցքով տառապող մարդիկ, ինչպես Չիտլերը, Ստալինն ու Սադամ Յուսեփը, ցուցաբերում են գոռոզություն և հպարտություն և կատարելապես մոլորված են ու կուրացած իրենց իսկ ետով: Նրանք իրենց կյանքն ավարտում են ողբերգությամբ ու առանց հույսի: Չպարտ մարդիկ երբեք օրհնյալ չեն լինի: Նրանք արդեն իրենք իրենց անիծել են:

Եթե խոնարհ դառնալն ու մեր մասին ճշմարիտ գնահատականն ունենալը միշտ էլ ցավոտ փորձություն է, ապա ինչու՞ է Հիսուսն ասում, որ մենք օրհնյալ ենք, երբ խոնարհ ենք: Օրհնությունը, ինչպես մնացած բոլոր երանությունների դեպքում, գալիս է խոստման հետ. *Նրանցն է երկնքի թագավորությունը*: Երբ Հիսուսին հարցրեցին, թե ով է երկնքի թագավորության մեջ մեծագույնը, նա երեխային օրհնակ բերեց ու ասաց, որ նրանք, ովքեր իրենց կխոնարհեցնեն փոքր երեխաների նման, կլինեն մեծագույնը երկնքի թագավորության մեջ (Մատթեոս 18:4): Դժբախտաբար, եկեղեցիներն այս խոսքերը մեկնաբանում են՝ որպես մանկահասակների ընծայում Աստծուն, ու բաց են թողնում այն, ինչ Հիսուսն ասում է:

Կոնտեքստը պարզ է. անպատվել այս փոքրիկներից մեկին, այսինքն՝ այն քրիստոնյաներին, որոնք խոնարհեցնում են իրենց՝ փոքր երեխաների **պես**, շատ լուրջ վիրավորանք էր, որ արժանի էր ամենադաժան պատժի: Հիսուսը փոքր երեխաների մասին չէր խոսում, այլ այն քրիստոնյաների, ովքեր իրենց խոնարհեցնում են:

Ահա որոշ օրհնություններ, որ Աստված խոստանում է նրանց, ովքեր իրենց կխոնարհեցնեն:

1. Թագավորությունը մերն է

Վստահաբար, երկնքի թագավորությունը ժառանգելն օրհնություն է: Մենք ժառանգություն ունենք երկրի վրա Աստծու ապագա թագավորությունում: Մի օր Հիսուսը կիշխի այս երկրի վրա: Ներկայիս պահին Աստծու թագավորությունը թաքնված է ու մարդու մեջ է: *Այն չի գալիս արտաքուստ երևացող բաներով*, բայց օրն արագորեն մոտենում է, երբ թագավորությունը \$իզիկապես բացահայտ կդառնա: Խոնարհները կիշխեն Քրիստոսի հետ: Ինչպիսի օրհնություն սա կլինի:

2. Աստված կբուժի մեր երկիրը

Եթե մենք ինքներս մեզ խոնարհեցնենք, երբ մեր հավատքից հետո ենք կանգնել և դարձել ուխտադրուժ, ապա Աստված մեր երկիրը կբուժի: Հանրաճանաչ սուրբ գրությունը, որ միջնորդության աղոթքի համար է օգտագործվում, Բ Մնացորդաց 7:14-ում, ասում է, որ եթե Աստծու ժողովուրդը չորս գործողություն կատարի, այն է՝ *խոնարհվի, աղոթի, Աստծու երեսը խնդրի ու իր չար ճամփաներից հեռանա*, ապա Աստված կբուժի նրանց երկիրը: Եթե որևէ ժամանակ կա, երբ մենք կարիք ունենք, որ Աստված բուժի ուխտադրուժ արևմտյան ազգերին, ապա դա այս ներկայիս դարն է: Այս պայմաններից առաջինը խոնարհվելն է: Արդյոք մենք օրհնյալ չենք, եթե Աստված մեր երկիրը բուժի:

Այնպիսի զգացողություն ունեմ, թե արևմտյան եկեղեցիները մոռացել են այս հատկությունը: Ես մասնակից եմ եղել միջնորդության աղոթքի հավաքույթների, ուր տոնախմբությունից հետո քրիստոնյաներն սկսում են գոռալ սատանայի վրա ու պահանջել, որ Աստված հոգևոր զարթոնք բերի, գրեթե գոռոզ վերաբերմունքով, կարծես թե հոգևոր զարթոնքը մեր բացառիկ արտոնյալ իրավունքն է: Երբ մենք ուխտը դրժում ենք, մեր հավատքից ետ կանգնում, մենք արժանի ենք դատաստանի, այլ ոչ հոգևոր զարթոնքի: Հաջողությունը, փառասիրությունը, բարգավաճումն ու աշխարհի մեթոդները կուրացրել են մեզ վերականգնման առաջնային պայմանի նկատմամբ, այն է՝ խոնարհություն ամենակարող Աստծու առաջ: Մեծ օրհնություն կլիներ, եթե **Աստված** բուժեր մեր երկիրը, այլ ոչ թե **եկեղեցին** իր ուժերով փորձեր քրիստոնեացնել սատանայի համակարգը²:

3. Մենք պիտի մեծարվենք

Մատթեոս 23:12-ում Հիսուսը բացահայտում է փարիսեցիների՝ հպարտության հոգին ու մարդկանց փառաբանության նկատմամբ սերը, և եզրափակում է մի պնդմամբ՝ ասելով, որ *ով ինքն իրեն մեծարի, պիտի խոնարհվի, իսկ ով խոնարհեցնի ինքնիրեն, պիտի մեծարվի*:

Ահռելի տեղափոխում տեղի կունենա, երբ թագավորությունը գա: Նրանք, որ խոնարհ էին, պիտի իշխեն հպարտներին: Խոնարհ մարդն իրոք օրհնյալ է, երբ Աստված նրան մեծարում է:

4. Մենք շնորհ կատանանք

Ա Պետրոս 5:5-ում ասվում է, որ *Աստված ընդդիմանում է ամբարտավաններին, հպարտներին, բայց շնորհ է տալիս խոնարհներին*: Քանզի չնայած նրան, որ մենք, որպես քրիստոնյաներ, շնորհ, ողորմածություն ենք ստացել մեր փրկության համար, մենք պետք է *ածենք շնորհով*: Մենք շնորհի կարիք ունենք ամեն օր: Այստեղ խոստումն այն է, որ եթե մենք խոնարհ ենք, ապա կատանանք շնորհ, իսկ սա, վստահաբար, օրհնություն է:

Այս օրինակներից տեսնում ենք, որ խոնարհությունն Աստծու բազմաթիվ օրհնանքները ստանալու բանալին է:

Նշումներ

1. John Wesley, *Sermons on Several Occasions* (Epworth Press, 1944), էջ 191
2. *Յոզևուր սպասավորները հազվադեպ են մեջբերում F Մնացորդաց 7-րդ գլխի Նախորդող տողերը: Եթե նրանք դա անեին, ապա կտեսնեին, որ Աստված ինքն էր անիծել երկիրը: Մեր արդի ժամանակներում սեռական այլասերությունը, բռնությունը, ժանտախտներն ու վիուկությունը սաստանայի գործերը չեն: Սատանան միայն իրագործում է Աստծու դատաստանը: Պողոս առաքյալի՝ Հռովմեացիս 1:24-32-ն ասում է, որ Աստված մարդուն կհանձնի հենց այս բաներին, երբ նրանք չեն ցանկանում պահպանել Աստծուն իրենց գիտակցությունում: Արևմտյան երկրները չեն կամեցել գիտակցել ու պահպանել Աստծուն, և Աստված նրանց հանձնել է անբարո մտքին: Մինևույն սկզբունքը կիրառելի է անհատի, եկեղեցու կամ ազգի համար: Իսրայելի և եկեղեցու պատմությունը, ցավոք սրտի, միայն ապացուցում է, որ սա ճշմարիտ է:*



ԳԼՈՒԽ 5

Երանութիւն Երկրորդ

Սգալորութիւն

Երանի սգալորներուն, որովհետեւ անոնք պիտի մխիթարուին:

Մատթեոս 5:4

Իմաստուններուն սիրտը սուգի տունը կ'ըլլայ, իսկ անմիտներուն սիրտը՝ ուրախութեան տունը:

Ժողովող 7:4

Մենք տեսանք, որ հոգու աղքատութիւնը հաճելի պայման չէ, միևնույնը ճիշտ է նաև սգալու մասին: Սգալը նույնպէս ցավոտ փորձութիւն է, և սխալ կլինի փորձել այն դարձնել հաճելի պայման: Գոյութիւն չունի «երջանիկ սգի» պայման ճիշտ այնպէս, ինչպէս գոյութիւն չունի հոգու պտուղ՝ «կարճատև համբերութիւն» անվանմամբ: Սա մարդկային զգացողութիւններից ամենցավոտն է: Գոյութիւն չունի մարդկութեան համար այնպիսի տառապանք, որ կարող է համեմատվել վշտի հետ: Ամենաակնհայտ օրինակը մեծ կորուստն է: Վերջնականապէս բաժանվելու փաստը մի մեծ հարված է, որ մեկը պետք է զգա այն հասկանալու համար: Սա անօգնական, անհույս իրավիճակ է, և երբեք չպետք է թերագնահատվի:

Պետք է ավելացնեմ, որ ինքս գտնում եմ, որ սուգն ինքնախղճահարութեան հետ որևէ կապ չունի. վերջինս չափազանց բացասական, անզգա ու հպարտ իրավիճակ է, և երբեք չպետք է վերագրվի քրիստոնյային: Վիշտը հոգևոր իրավիճակ է, բայց ազդում է մեր ողջ գոյութեան վրա: Յաճախ ախորժակն է անհետանում, ու

արտաքին միջավայրն անհրապակ է թվում: Միակ իրականությունը սգավորի համար ներքին զգացմունքային ցավն է: Չնայած նրան, որ մենք սովորաբար վիշտը կապում ենք սիրված անձնավորության մահվան հետ, մենք կարող ենք սգալ ցանկացած սեփականության, որ մենք սիրում կամ թանկ ենք համարում, կորցնելու դեպքում՝ լինի ավտոմեքենա, տուն կամ էլ դիրք:

Օրհնությունն՝ տառապանքով

Կրկին, մենք պետք է պատասխանենք այն հարցին, թե ինչպես կարող ենք արդյոք օրհնյալ լինել, երբ մենք գտնվում ենք այսպիսի ցավոտ ու հոգին մաշող իրավիճակում: Եկեք ինքներս մեզ հիշեցնենք այն, որ «օրհնյալն» այն չէ, թե ինչպես ենք մենք տեսնում ինքներս մեզ, այլ սա Աստծու հեռանկարն է: Մենք սգում ենք ու սարսափելիորեն վատ զգում, բայց Աստված ուրախանում է ու տեսնում մեզ՝ որպես արտոնյալ անձ, որովհետև մենք նրա նման ենք:

Չենց այս հակասությունն է, որ այդքան տհաճ է քրիստոնյաների համար, քանզի նրանց չեն սովորեցրել հասկանալ Աստծու մտածելակերպը: Օրհնակ, կենդանուն մորթելը, արյան հոտն ու մսի այրումը մեզ համար գարշելի է ու անտանելի, սակայն Աստվածաշունչն ասում է մեզ, որ զոհաբերությունները (այն է՝ այն ամենը, ինչ մեզ համար շատ թանկ է) Աստծու համար *հաճելի բույր* են, ու նա դրանցով հիանում է:

Աստծուն ճանաչել

Երբ մենք սգում ենք, մենք նույնություն ենք հաստատում Աստծու հետ, ճանաչում ենք նրան, քանզի նա էլ է սգում: Սա նրա էության մի մասն է: Դատավորաց 10:15-16-ն ասում է մեզ, որ Աստված վշտացած էր իր ժողովրդի՝ Իսրայելի դժբախտության համար: Աստված դոկտորինա

կամ ուսմունք չէ: Նա կենդանի էակ է՝ զգացմունքներով ու կրքերով: Եթե Աստծու ժողովուրդը տառապում է, ապա Աստված էլ է տառապում, ճիշտ այնպես, ինչպես ծնողը կտառապի, եթե իր զավակը տառապում է: Երկար տառապանքը, հանդուրժողականությունը հոգու պտուղ է, որովհետև այն Աստծու բուն էության մի մասն է: Աստված երկար ժամանակ է տառապել: Իրականում, նա տառապել է վեցը հազար տարի շարունակ՝ սկսած այն պահից, երբ մարդը մոլորվեց:

Պողոս առաքյալի՝ եբրայեցիներին ուղղված նամակի 3:10-ն ասում է մեզ, որ *Աստված քառասուն տարի վշտացած էր*, քանի իր զավակները մոլորված էին ամայությունում ու սպասում էին մահվան: Դա Աստծու դատաստանն էր, բայց Աստված թանկ վճարեց այդ դատաստանն իրագործելու համար, ճիշտ այնպես, ինչպես հայրը որդուն կասի. «Սա ինձ ավելի շատ ցավ կպատճառի, քան քեզ»: Աստված տառապում է, վշտանում, սգում շատ ավելի խորը, քան իր ողջ արարած բնությունը:

Արդյոք Աստված չէր տառապում Իսրայելի շարունակական ուխտադրժումից: Արդյոք Աստված չէր տառապում՝ տեսնելով, թե ինչպես էր եկեղեցին շարունակ հեռանում իր հավատքից՝ վերակենդանացնելով նրանց կրկին, միայն որպեսզի նորից ուխտը դրժեին:

Չիսուսը մեզ օրինակ

Չիսուսը հաճախ պատկերվում է՝ որպես հրաշագործ գերիերոս, բայց ճշմարտությունն այն է, որ իր հոգևոր ծառայության մեծ մասի ընթացքում (որը միայն երեք տարի տևեց) նա թաքնված էր, որովհետև հրեաները ջանում էին նրան սպանել: Եսայիա մարգարեն իր հանրաճանաչ մարգարեության գլուխ 53-ում ասում է, որ իրականում Չիսուսը պիտի լինի կտտանքի, վշտի մարդ, ու որ կսկիծը նրա մտերիմ ընկերը պիտի լինի:

Արդյոք ինչպես է սա հարմարեցվում մեր՝ խարիզմատիկ հրաշագործի պատկերացմանը, այն է՝ «Չիսուս Քրիստոս գերաստղ»:

Արդյոք Յիսուսն ի կատար ածեց Եսայիի մարգարեությունը: Դե՛, Ղազարոսի գերեզմանին, ինչպես ասվում է Յովհաննես 11:32-35-ում, *Յիսուսը լացեց*: Արդյոք սա Ղազարոսի համար էր: Չեմ կարծում, քանզի Յիսուսը գիտեր, որ նրան մեռելներից պիտի կյանքի բերի, ու որ ընտանիքը պիտի ցնծա ու ուրախանա: Նա լաց էր լինում, որովհետև կիսում էր Մարթայի և Մարիամի վիշտը: Նրանք տառապում էին, իսկ ինքը տառապում էր նրանց հետ: Սա, պարզապես, նրա բնավորության մի մասն էր:

Պողոս առաքյալն իր՝ Ա Կորնթացիս 12:26-ում ասում է, որ *եթե եկեղեցու մեկ անդամը չարչարվի, ապա մենք բոլորս ենք չարչարվում*: Եթե մեկը վշտի մեջ է, ապա բոլորս ենք վշտի մեջ: Պողոս առաքյալի՝ Յովմեացիս 12:15-ն ասում է, որ մենք պետք է *ուրախացողների հետ ուրախանանք, ու լացողների հետ լացենք*: Մարկոս 14:32-35-ը նշում է, որ Յիսուսը Գեթսեմանի այգում վշտացած էր: Նա ասաց. *«Իմ անձն չափազանց տրտում է՝ մեռնելու աստիճան»*, իսկ Մարկոս 3:5-ում նա *տրտմած էր փարիսեցիների սրտի կարծրության համար*:

Մոռացված հատկություն

Կրկին, հավատացած եմ, որ արևմտյան եկեղեցին մոռացել է այս հիասքանչ հատկությունն ու վերաբերմունքը: Բարգավաճությունը, ինքնաբավարարվածությունը, զվարճությունը (որը փախուստի մի տեսակ է) կուրացրել է մեզ՝ դարձնելով մեզ Լավոդիկեի եկեղեցու նման (Յայտնություն 3:14-22): Մենք *հարստացած ենք ու ոչնչի կարիք չունենք*: Այն ամենն, ինչ անում ենք, պետք է հաջողվի, կարծես թե հաջողությունը Աստծուն փառք է բերում: Սա մեծ մոլորություն է: Միայն մարդը իրականում կարող է ցույց տալ Աստծու հոգին:

Շինությունները չեն կարող խոնարհ լինել, բայց շինություններում եղած մարդիկ կարող են: Ռուս Ռոյս ավտոմեքենան չի կարող հեզ լինել, բայց վարորդը կարող է: Յավատացած եմ, որ միայն Աստծու երկությունը կարող է նրան փառք բերել: Այլ կերպ ասած՝ Աստծու փառքը Աստծու

Ներկայությունն է մարդու մեջ: Այն շարունակում մնալ Աստծու փառքը, քանզի երբեք չի հեռանում Աստծուց, բայց մենք կարող ենք ցուցադրել փառքը, այսինքն՝ եությունը, անգամ մեր թույլ մահկանացու մարմիններում:

Լրատվամիջոցների մեղքը

Ժամանակակից լրատվամիջոցները կուրացրել ու անզգայացրել են մեզ մյուսների հոգեվարքի ու ցավի նկատմամբ՝ շարունակաբար մեզ բռնություն ցույց տալով՝ որպես զվարճություն, նորություններում ու փաստագրական կինոնկարներում ցույց տալով ավերիչ տեսարաններ՝ առանց մեր ուղղակի մասնակցության: Իրականում սա մեզ կարծրացրել է մյուսների տանջանքների նկատմամբ: Մենք տեսնում ենք արյուն, բայց այն երբեք մեր մարմինն չի դիպչում: Մենք տեսնում ենք փտող դիակներ, բայց չենք զգում գարշահոտությունը: Ամեն անգամ, երբ մենք տեսնում ենք այս տեսարաններն ու ոչինչ չենք անում այդ ուղղությամբ, մենք ավելի ենք կարծրանում ու կորցնում ենք վշտանալու, կսկծի կարողությունը:

Եսայիա 22:12-ը ուսուցանող է, քանզի Աստծու վարվելակերպն ու սկզբունքները չեն փոփոխվում: Նա կարող էր բառ առ բառ միևնույնն ասել այսօրվա ուխտադրուժ եկեղեցուն: Աստված ծոմապահության ու սգի կոչ արեց (Բ Մաացորդաց 7:14), բայց ժողովուրդը տոնում էր: Տոնակատարությունն Աստվածաշնչում երկու բանի նշան կարող է լինել՝ կամ հաղթանակի, կամ էլ ուխտադրժման, հավատքից հեռանալու: Իսրայելի զավակները *Տիրոջ տոնն էին նշում*՝ ողջակեզ մատուցելով ու խաղախության զոհեր բերելով, բայց սա ոսկե հորթի շուրջ էր, ու նրանք դրժել էին ուխտը, հեռացել հավատքից (տես Ելից 32:1-6):

Յովսեփի դժբախտությունը

Մի քանի տարի առաջ ես ուսուցանում էր Յովանդիայի մի խումբ եկեղեցիներում: Նրանք բոլորը դժվարին ժամանակներ էին ապրում, և առաջնորդը խնդրեց կնոջս ու ինձ օգնել իրենց՝ երկու տարի իրենց հետ Յովանդիայում ապրելով: Ես Մեծ Բրիտանիայում իմ հոգևոր ծառայությունն ունեի ու աշխատակիցները, և զգացի, որ չեմ կարող օգնել այդքան երկար ժամանակ, բայց ես կիսում էի նրանց զգացմունքներն ու խնդրեցի Աստծուն ցույց տալ ինձ, թե արդյոք ինչպես կարող էի օգնել նրանց: Շատ տարօրինակ պայմաններում ես ուղղորդվեցի դեպի Ամովս 6:6-ը. *«Սակայն Յովսեփի փլուզումին վրայ չեք կսկծար»*: Այն, ինչ ինձ վրա ազդեցություն գործեց, Յովսեփ բառն էր. ինչու՞ ոչ Յակոբ կամ Իսրայել: Ո՞րն էր Յովսեփի փլուզումը, նրա դժբախտությունը: Ինձ համար հայտնություն էր, որ Յովսեփի դժբախտությունն այն էր, որ նա իր սեփական եղբայրների կողմից մերժված էր:

Սա ճիշտ այն խնդիրն էր, որ առկա էր Յովանդիայում՝ եկեղեցու առաջնորդների մեջ: Նրանց իսկ առաջնորդներն ու եղբայրներն իրենց մերժել ու հալածել էին: Ես շատ ուրախ էի գնալ ու ուսուցանել այնտեղ, սակայն ես չէի կսկծում նրանց դժբախտության վրա: Այս հայտնության համար ես թանկ վճարեցի: Ես կնոջս ու զավակիս հետ այնտեղ մնացի վեցը ամիս՝ իմ հոգևոր ծառայությունը ռիսկի ենթարկելով (եթե կարելի է ռիսկ անվանել Աստծու հույսին թողնելը), միարժամանակ այն անուշադրության մատնելով:

Չզացմունքները դեռ բավական չեն: Կսկիծը բերում է ակտիվ կարեկցանքի: Կարեկցանքը մեզ միշտ էլ ուղղում է գործողությունների, ինչպես Յիսուսի դեպքում: Կարեկցանքը, որ գալիս է կսկծից, թանկ է նստում մեզ վրա, ու հենց այս պատճառով է, որ զգում եմ, որ եկեղեցին գերադասում է այս հատկության մասին չքարոզել:

Ինչի՞ համար սգալ

Ես շատ անգամներ լսել եմ քրիստոնյաներից. «Մենք Աստծու ուրախությունն ունենք, ինչի՞ համար պիտի սգանք»: Մարդկանց այդ հարցում կարող եմ օգնել:

1. Մեր երկրի - ԱՄՆ, Եվրոպան ու բարգավաճ երկրները դեկադենտ են, անկումնային: Վիուկությունը, միասեռականությունն ու բռնությունն այն արարքներն են, որ երբ դառնում են բուռն ու կատաղի, միշտ բերում են Աստծու դատաստանը: Աստծու դատաստանն է, այլ ոչ հոգևոր զարթոնքը, սպասում այս երկրներին: Հոգևոր զարթոնքը մեր բացառիկ իրավունքը չէ. մենք պետք է աղերսենք դրա համար: Մենք երբեք չենք կարող այն պահանջել՝ որպես մեր իրավունքը: Մենք պետք է աղերսենք ու բավարարենք պայմանները: Միայն կսկծող մարդիկ կարող են այս ազգերում հոգևոր զարթոնք բերել:

2. Մեր եկեղեցիների - Որպես սրբության փոխարինող՝ քրիստոնյաները գրկաբաց ընդունել են զվարճությունն ու աշխարհիկ մեթոդները՝ կախված տաղանդից, ֆինանսներից, հաջողությունից, կարողություններից, կազմակերպչությունից, ու մենք անգամ ավետարանչական ու խարիզմատիկ եկեղեցիներում հանդիպում ենք ամուսնալուծության, միասեռականության, անբարոյականության, ուժի տենչի և քաղաքականության: Տեսնում ենք նաև ազնվության պակաս: Արդյոք սա վշտացուցիչ չէ: Քանի դեռ մենք չենք վշտում, կսկծում, ոչինչ չի փոխվի:

3. Ինքներս մեր - Արդյոք մենք հասել ենք մեր վերջնակետին: Արդյոք մեր գաղտնի կյանքն անարատ է: Արդյոք մենք թույլ ենք տվել Աստծուն գործ ունենալ մեր սնափառությունների, տենչանքների, հպարտության ու եսասիրության հետ: Արդյոք մենք ապրում ենք գալիք թագավորության համար, թե ամրոցներ ենք կառուցում երկրի վրա: Ես շատ բան ունեմ իմ կյանքում, որի համար պիտի վշտանամ: Ես դեռ չեմ

հասել նպատակակետին, և միայն ճշմարիտ գնահատականն ու սգալը Աստծուն թույլ կտա ավարտելու այն, ինչ նա սկսել է: Կարծում եմ, որ ազնիվ քրիստոնյաներից շատերը կարող են Պողոս առաքյալի հետ ասել. *«Ինչ թշուառ մարդ եմ...» (Հռովմեացիս 7:24)*: Մենք որևէ կերպ դատապարտված չենք, բայց մենք տեսնում ենք մեր իսկ սրտերում եղած իրականությունն ու ցավելու աստիճան տենչում ենք կատարելության, որը քրիստոնյա հասունությունն է:

Ապագա խոստումը

Մենք կրկին պետք է խոստովանենք, որ մխիթարվելու խոստումը պետք է որ գալիք թագավորության համար լինի: Եթե Հիսուսն ասում էր, որ բոլոր այն քրիստոնյաները, որոնք տառապում ու կսկծում են այս կյանքում նաև պիտի մխիթարվեն այս կյանքում, ապա մենք որևէ պատասխան չունենք հալածվող եկեղեցու շարունակական տառապանքների համար: Մենք ապրում ենք մի դարաշրջանում, երբ ավելի շատ մարդիկ են նահատակվել իրենց հավատքի համար, քան պատմության մնացած բոլոր դարաշրջանները միասին վերցրած: Յուրաքանչյուր երեք ընդամենը մեկ մի քրիստոնյա է սպանվում, ու միլիոնավոր քրիստոնյաներ հալածվում են ողջ աշխարհում:

Քարոզիչները, որ ասում են, թե մենք բոլորս պետք է հաճույք ստանանք նյութական ու ֆիզիկական օրհնություններից այս կյանքի ցանկացած պահին, իրականում անարգում են մեր եղբայրներին ու քույրերին, որոնք այժմ տառապում են իրենց հավատքի համար: Վստահաբար, նրանք պիտի մխիթարվեն, երբ իշխեն Քրիստոսի հետ ու ստանան իրենց պարգևատրությունը: Պողոս առաքյալն իր` Բ Տիմոթեոս 2:12-ում ասում է. *«...եթե տոկանք, պիտի նաև թագաւորենք ալ անոր հետ: Եթէ ուրանանք զինք, նա ալ պիտի ուրանայ մեզ»*:

Իհարկե, շատ քրիստոնյաներ մխիթարվում են այս կյանքում, բայց դա նրանց իրավունքը չէ, այլ Աստծու բարությունը: Մի բան հստակ է, որ մենք պիտի մխիթարվենք, երբ մեռելներից հարություն առնենք կամ

Էլ ցնծությամբ դեպի երկինք հափշտակվենք: *«...որպէսզի եթէ չարչարուինք իրեն հետ, նաեւ փառաւորուինք իրեն հետ» (Հոովմեացիս 8:17):*

Քրիստոսի Էության մեր ուսումնասիրությունում սգավորությունը, հստակորեն, խոնարհությունից մի քայլ առաջ է: Չպարտ մարդը չի կարող ինքն իրեն ճանաչել ու իր մեջ կամ էլ իր քրիստոնյա կենսակերպում որևէ բան չի տեսնի, որի համար պիտի վշտանա, սգա: Միայն խոնարհ մարդը, որ տեսնում է իր մասին ճշմարտությունը, կարող է կսկծալ ու սգալ՝ իր իսկ կյանքում, եկեղեցում կամ էլ իր երկրում սրբության պակասի համար:



ԳԼՈՒԽ 6

Երանութիւն Երրորդ

Յեզութիւն

Երանի հեզերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը:

Մատթեոս 5:5

Հանդարտ կեցիր Տէրոջ քով, սպասէ՛ անոր,

Ու մի՛ բորբոքիր իր ճամբան յաջողութեամբ գնացողին դէմ,

Նենգութեամբ վարուող մարդուն դէմ:

Թո՛ղ բարկութիւնը եւ լքէ՛ ցասումը.

Մի՛ բորբոքիր՝ որ չարիք չընես:

Արդարեւ, չարագործները պիտի բնաջնջուին,

Սակայն Տէրոջ վրա յուսացողները երկրին պիտի տիրանան.

Արդարեւ քիչ մը ատենէն ետք ամբարիչտը պիտի չքանայ,

Անոր տեղին ուշադրութիւն պիտի դարձնես, բայց պիտի

չգտնես:

Սակայն հեզերը երկրին պիտի տիրանան,

Ու շատ խաղաղութիւն պիտի վայելեն:

Սաղմոս 37:7-11

Վերը նշված սուրբ գրութիւնից կարող եմք տեսնել, որ երբ Յիսուսն ասում է. *երանի հեզերին, որովհետեւ նրանք պիտի ժառանգեն երկիրը*, նա իրականում նոր բան չի ասում, այլ պարզապէս մեջբերում է անում Յին կտակարանից:

Այժմ, եկեք դիտարկենք, թե ինչ է հեզութիւնը: Ի՞նչ ասել է հեզ լինելը: Սա կարևոր հարց է, որովհետեւ մեր ապագան սրանից է

կախված: Եթե հեզերը պիտի *երկիրը ժառանգեն*, ապա հեզությունը թյուրըմբռնելը կարող է նշանակել, որ մենք խիստ ցնցված կլինենք, եթե արդյունքում չստանանք մեր ժառանգությունը: Ղուկաս 6:24-ում ասվում է, որ *հարուստներն այս կյանքում են ստացել իրենց մխիթարությունը*, և որ *նրանք, ովքեր հիմա են խնդում հետո պիտի սգան ու լան*: Ծատ քրիստոնյաների համար սեղանները շուռ կգան, երբ Հիսուսը գա՝ որպես թագավոր երկրի վրա իշխելու:

Հեզ մարդը ուսուցանելի է, ըմբռնող կամ հնազանդ: Եսայիա 61:1-ն ասում է, որ Աստված Հիսուսին պիտի օժի ու նա **հեզերին**, ուսուցանելի, ըմբռնող մարդկանց, *պիտի ավետիս քերի*: Հիսուսի օրերի և ժամանակակից փարիսեցու մի նշան կարող է լինել այն, որ նրանց անհնարին է ուսուցանել, նրանք ըմբռնող չեն: Մատթեոս 13:10-15-ն ասում է մեզ, որ Հիսուսն այլաբանություններով էր խոսում, որպեսզի այն մարդիկ, ովքեր ունեն կարծր սիրտ ու ոչ ուսուցանելի հոգիներ, չհասկանան իր ասածը: Հիսուսը եկավ այն մարդկանց մոտ, ովքեր *ականջ ունեին լսելու*:

Վերաբերմունք

Ինչպես մյուս երանությունները, հեզությունը վերաբերմունք է, վարվելակերպ, ընտրություն, տեսակետ, այլ ոչ թե մի հատկություն, որին տիրապետում է **եսը**:

Ոչ-քրիստոնյաները Հիսուսի ուսմունքի մասին ունեցած իրենց սահմանափակ հասկացողությամբ հավատում են, որ երանությունները հիանալի հատկություններ են: Հանրախանութում երեք երեխաներով հոգեպես ճնշված կինը կարող է վեր նայել ու ասել. «Համբերություն տուր ինձ»: Այս կինը Աստծուն չի փնտրում. նա հույս ունի ստանալու համբերության **հատկությունը**, մի բան, որին նա կարող է տիրանալ ու իր առօրյա կյանքում ցուցաբերել՝ **իր կարգադրության ներքո**: Քրիստոնյան, սակայն, ոչ թե հատկությունն է փնտրում, այլ այն անձին, որ **ինքն է** այդ հատկությունը՝ Հիսուսին: Մենք ավելի շատ Հիսուսի

կարիքն ունենք: Նա է Յոգու պտուղը՝ այդ եռության բոլոր հետևանքներով հանդերձ: Իհարկե, մեր հին եռությանը միշտ էլ հաճելի է կատարելապես տիրապետել այս հատկությանը: Այդ դեպքում, երբ մենք մեր պարտքը կատարենք, կարող ենք փոխհատուցել, բայց երբ մենք մեռած ենք մեր անձի համար, այդ ժամանակ Քրիստոսն է կառավարում մեր կյանքը, ու մենք հայտնաբերում ենք, որ անգամ մեր թշնամիների հետ վարվում ենք բարի, ներողամիտ ու համբերատար կերպով, իսկ սա զարհուրելի է. սակայն սա է միակ իրական քրիստոնեությունը: **Մենք** չենք կարող ապրել քրիստոնյա կյանքը: Մենք պետք է մեր կյանքը վայր դնենք, հանձնենք, որպեսզի Քրիստոսի կյանքը ձեռք բերենք, և այդ դեպքում *Քրիստոսն է մեր մեջ փառքի հույսը*: Եռությունը, բնավորությունը միշտ էլ Աստծունն է, բայց այն բացահայտվում է, ցուցաբերվում մեր կյանքի միջոցով:

Յեզությունը թուլությունն է

Շատ մարդիկ հեզությունը նույնացնում են երկչոտության կամ ամաչկոտության հետ, բայց սա ամենահզոր հատկություններից մեկն է, որ անձը կարող է ցուցաբերել: Սա որևէ կապ չունի անհատականության հետ: Թե՛ վառ, բուռն անհատականություն ունեցող անձն ու թե՛ հանդարտ խանուվածքի տեր մարդը կարող է հեզ լինել, որովհետև հեզությունը չփոխհատուցելու կամ վրիժառու չլինելու որոշում է: Սա այնպիսի որոշում չէ, որ ընդունվել է վախից ելնելով, այլ մի որոշում, որ ընդունվել է ելնելով բնավորությունից ու Աստծու կամքին հնազանդ լինելուց:

Հին կտակարանում Յովսեփն այս բնութագրի լավ օրինակ է: Որևէ տեղ չի նշվում, որ նա Աստծու կամ մարդու դեմ փնթփնթում է այն դաժան վերաբերմունքի համար, որ նա ստացել էր իր ընտանիքից կամ էլ ձերբակալության համար, որ ստացել էր իր տիրոջ կնոջ կողմից՝ սուտ մեղադրանքի պատճառով: Աստվածաշնուն որևէ բան չկա, որ կապացուցի, թե Յովսեփը թույլ բնավորություն ուներ: Ոչ ոք Յովսեփին

չէր առաջարկի մեծ կայսրության կառավարիչը լինել, եթե նա անհաստատ ու թուլ լիներ: Նա թուլ չէր, այլ հեզ էր:

Այս ինքնամեծար դարում այդքան էլ հեշտ չէ գործել Յովսեփի նման: Նա Յիսուսի կատարյալ մարմնավորումն է, որը գառան պես մորթի գնաց: Յաճախ եմ լսում քրիստոնյաներից հետևյալը. «Ես, միգուցե, քրիստոնյա եմ, բայց ես հատակի լաթ չեմ և իմ իրավունքներն ունեմ»: Սա ճշմարիտ է. քրիստոնյան ունի այնքան իրավունքներ, որքան մնացած բոլորը, բայց իրական քրիստոնեությունը նշանակում է որոշել **չկիրառել** այդ իրավունքները: Սա հեզություն է: Մենք հետևում ենք գերագույն առաջնորդի, որը կատարյալ էր ու անմեղ և բացառիկ իրավունք ուներ խաչելության չգնալու: Փառք Աստծու, որ նա չկիրառեց իր՝ *հրեշտակների լեգեոն կանչելու* ու խաչից ազատվելու իրավունքը: Նրա սեփական ցանկությունն իր աղոթքում էր, «*Յայր, հեռացրու այս գավաթն ինձանից*», բայց նա իր ցանկությունն Աստծուն հանձնեց ու իր կամավոր որոշմամբ տարավ խաչի վրա մերկ տառապելու ամոթն ու նսեմացումը: Սա ուժի և հեզության մեծագույն արտահայտումն է և, ցավոք սրտի, այն պակասում է շատ քրիստոնյաների կյանքում: Մենք մերն ենք դարձրել աշխարհի արտաքին շուքը, ինքնասիրությունն ու հպարտությունը և ստեղծել աղքատության հասցված ինչ-որ քրիստոնեություն:

Թանկ գործ

Ոչ ոք չպետք է կարծի, թե հեզության վերաբերմունքը հեշտ է կիրառել, քանզի այն մեր հպարտության ու համբավի համար չափազանց թանկ արժեք ունի: Յիշում եմ մի դեպք, երբ մի անգամ Մանչեսթերում տնային եկեղեցում ունեցած Աստվածաշնչի դասից տուն էի վերադառնում: Դա 1980-ականներին էր, ու ես հին Morris Minor GPO ֆուրգոն էի վարում: Կինս ու երեխաներս ինձ հետ էին, ինչպես նաև մի այլ կին, որին տուն պիտի հասցնեի: Ոստիկանն ինձ ազդանշան տվեց, ու ես կանգնեցրեցի մեքենան՝ տեսնելու, թե ինչումն էր խնդիրը:

Ոստիկանը պահանջեց, որ ես իջեցնեմ ապակին, ու սկսեց բարձրաձայն բղավել ու հայհոյել: Նրա շնչառությունից ուժեղ ալկոհոլի հոտ էր գալիս: Անգամ հետևումս նստած կինը զգաց դա: Նա հրամայեց, որ դուրս գամ ֆուրգոնից ու ասաց, որ մեքենայի անվադողը ճաղատ էր, ու որ նա պատրաստվում էր ինձ տուգանել: Իմ հանդիմանությունները որևէ տարբերություն չունեցավ, և իմ անունը հայտնվեց գրանցամատյանում:

Վիրավորված հպարտություն

Նրա հեռանալուց հետո ես ցամառն մեջ էի, նախ որովհետև զգացի, որ անհրավացիորեն էի տուգանվել, երկրորդ որովհետև նա հայհոյում էր կանանց ներկայությամբ, և երրորդ որովհետև նա ծառայության ժամանակ ալկոհոլ էր օգտագործել: Ես կանանց տուն հասցրեցի ու անմիջապես ուղղվեցի դեպի ոստիկանության տեղամաս՝ այդ դեպքը զեկուցելու: Երբ ես ասացի հերթապահ սերժանտին, որ ինձ տուգանել էին ճաղատ անվադողի համար ու խնդրեցի նրան անձամբ զննել, նա մերժեց ու ասաց, որ քանի որ ես արդեն տուգանվել էի, ապա պետք է ինձ դատարանի առաջ պաշտպանեի: Սա, իհարկե, այն ամենն էր, ինչ նա կարող էր ասել, բայց դա ինձ ավելի բարկացրեց, քանզի ես գիտեի, որ դատարանում իմ խոսքը կլինի ոստիկանի խոսքի դեմ, իսկ ատենակալներն ու դատավորները նրան կհավատան: Այնուհետև ես նրան ասացի, որ ոստիկանն ալկոհոլ էր գործածել, ու որ ես ցանկանում էի բողոք ներկայացնել: Նա ինքնավստահ ու սպառնացող ձայնով ասաց, որ իր սպաները հերթապահության ժամանակ ալկոհոլ չեն օգտագործում, ու այլևս չէր ցանկանում լսել իմ հանդիմանությունը: Ես համառեցի, որ ցանկանում եմ օրինական բողոք ներկայացնել, և նա անհետացավ գրասենյակների կողմը՝ անհրաժեշտ փաստաթղթերի համար: Նա ինձ մոտ տասնհինգ րոպե թողեց «տապակվելու», սակայն ինձ դա ժամեր թվաց:

Ողջամտութիւն, վերջապէս

Իրավիճակի պատճառով սաստիկ զայրացած, ես սենյակում այս ու այն կողմ էի քայլում: Փառք Աստծու, որ սպան ինձ որոշ ժամանակ միայնակ թողեց, որովհետև ես սկսեցի սառել ու միջադեպից հետո առաջին անգամ մտածել բանականորեն: Ես հասկացա, որ ես հենց նոր ուսուցանում էի Լեռան քարոզը, որը մեզ ասում է *մյուս այտը շուռ տալ*, նաև հասկացա, որ որպէս քրիստոնյա ես պետք է սատարեմ ոստիկանությանը՝ իրենց բարդ գործում: Ես ոստիկանությանը տեղեկացրել էի ակրիոլ օգտագործած սպայի մասին, և դա բավական էր: Իմ կողմից կատարված ցանկացած այլ գործողություն կլինէր վրիժառության ակնկալում այն անարդարության համար, որ իմ կարծիքով ինձ էր ուղղված: Երբ սերժանտը վերադարձավ՝ փաստաթղթերը ձեռքին, ես նրան ասացի, որ միտքս փոխել եմ ու որ այլևս չեմ ցանկանում բողոք ներկայացնել: Նա քմծիծաղ տվեց, կարծես թէ ինձ հասկացնելով, որ իր ահաբեկությունն արդյունքի էր հասել, իսկ ես հեռացա՝ զգալով ավելի փոքր, քան իմ հինգ ֆուտ ու երկու մատնաչափ հասակը (157.5սմ). անգամ զգում էի նրա չար հայացքը հետևում: Պատկերացրեցի, թէ ինչպէս նա ինքն իրեն կասի. «Մեկ այլ թույլ փոքր մարդ, որին հեշտ էր ահաբեկելը»:

Սակայն ես գիտեի, որ այն, ինչ ես արել էի, բոլորովին էլ թուլություն չէր. այն հեզության գործողություն էր: Ես ամենևին էլ ահաբեկված չէի նրա ոճից. իրականում, նրա ահաբեկությունն ինձ ավելի համառ դարձրեց բողոք ներկայացնելու հարցում: Ինձ համար մի բարդ կամավոր որոշում էր գործի դնել այն, ինչ ես ուսուցանել էի: Ահա, թէ ինչու հեզությունն այդքան տհաճ է մեր մարմնին: Երբ մենք որոշում ենք կայացնում լինել հեզ ու չփոխհատուցել, ոչ ոք, բացի Աստծուց, չգիտի, թէ արդյոք դա թուլություն է, թէ հեզություն, և մենք պետք է տանենք ամոթն ու խայտառակությունը: Պետք է նշեմ, որ այդ միջադեպից ի վեր բազմաթիվ անգամներ եմ տանուլ տվել, բայց դա իմ կյանքում վերաբերմունքի փոփոխության սկիզբն էր, որ շարունակվում է մինչ օրս: Հիսուսը մեզ երանի է տալիս՝ ասելով, որ օրհնյալ ենք և

Աստծու կողմից արտոնված, երբ մենք մեր իրավունքները չենք կիրառում, երբ մենք խոնարհ ենք, հլու և հնազանդ:

Ահա մի քանի պատճառ, թե ինչու ենք մենք օրհնյալ, երբ հեզ ենք: Դրանք, պետք է որ, խրախուսեն մեզ այս վերաբերմունքն ունենալու մեր անձնական դեպքերում:

1. Աստված պաշտպանում է հեզերին

Մեր հին եռւթյան համար ինքնապաշտպանությունը բնական է, բայց մեր նոր՝ Քրիստոսի եռւթյան համար բնական է *մեր թշնամիներին ներելն ու նրանց բարին անելը, ովքեր պախարակում են մեզ* (Մատթեոս 5:44): Բոլոր ծնողներն էլ ցանկանում են պաշտպանել իրենց զավակներին: Ծնող լինելու օրհնություններից մեկն այն է, որ մեր զավակները, մանավանդ, երբ նրանք փոքր են, կախված են մեզանից ու մեզ վրա են հենվում իրենց պաշտպանության ու բարօրության համար: Աստված մեր Ջայրն է ու ցանկանում է մեզ պաշտպանել, բայց եթե մենք ինքներս մեզ պաշտպանենք, ապա Աստծուն զրկում ենք որպես Ջայր իր դերը կատարելու հնարավորությունից:

Մովսես, Մարիամ և Ահարոն

Թվոց 12-րդ գլխում մի հիանալի դիպված կա: Մովսեսի հեզության պատճառով Աստված է նրան պաշտպանում, նախքան անգամ ինքը ժամանակ կունենա պաշտպանելու ինքնիրեն: Մարիամն ու Ահարոնը, որոնք երկուսն էլ Մովսեսից տարիքով ավելի մեծ էին, արդարացում գտան նրա առաջնորդությունը քննադատելու: Նա ամուսնացել էր իրենց համայնքից, ազգից դուրս՝ եթովպացի կնոջ հետ, որը օրենքին հակառակ էր: Մենք այս հարցում չենք կարող արդարացնել Մովսեսի գործողությունները, սակայն թվում է, թե Աստծուն ավելի շատ հետաքրքրում է ավելի մեծ խնդիրը, այն է՝ իր ընկեր Մովսեսին պաշտպանելը:

Տող 3-ն ասում է, որ *Մովսեսը շատ հեզ մարդ էր՝ երկրի երեսին եղած բոլոր մարդկանցից ավելի*: Սա հիանալի գովասանք է ամենակարող Աստծու կողմից: Տող 4-ն ասում է, որ *Աստված իսկույն եկավ Մովսեսին օգնության՝ պաշտպանեց նրան*. Մարիամը բորոտ դառավ, և Մովսեսն ստիպված էր Աստծուն աղերսել նրա բուժման համար:

2. Հեզությունը բարեպաշտ կնոջ եռությունն է

Պետրոս առաքյալը եկեղեցուն ուղղված նամակում ասում է, որ լավ կինը պետք է ունենա *հեզ հոգու զարդը, որ թանկագին է Աստծու առջև* (Ա Պետրոս 3:1-4): Սա ոչ միայն կանանց է պատշաճ, քանզի նաև տղամարդիկ պետք է հեզ լինեն, որովհետև տղամարդիկ նույնպես Քրիստոսի հարսնացուի մասն են: Քրիստոսը տղամարդու գլուխն է, և տղամարդը նույնպես պետք է հեզ հոգի ունենա իր ապագա ամուսնու՝ Քրիստոսի նկատմամբ: Պողոս առաքյալն իր Բ Կորնթացիս 11:2-ում ասում է. *«Որովհետև նախանձախնդիր եմ ձեզի հանդեպ՝ Աստուծոյ նախանձախնդրութեամբ. քանի որ մէկ ամուսինի նշանեցի ձեզ, որպէսզի Քրիստոսի՝ ներկայացնեմ ձեզ՝ մաքրակենցաղ կոյսի մը պէս»*: Քրիստոսը երբեք չի ամուսնանա համառ, կամակոր, ինքնագոհ ու անհնազանդ հարսնացուի հետ: Եթե քրիստոնյաները տենչում են լինել Քրիստոսի հարսնացուն, ապա նախապայմաններից մեկը հոգով հեզ լինելն է:

3. Հեզությունը Քրիստոսի եռությունն է

Պողոս առաքյալի՝ Գաղատացիս 5:22-23-ում բերված Հոգու պտուղների ցանկում հեզությունը առանձնահատկություններից մեկն է¹: Հիսուսը միշտ էլ հլու, հնազանդ էր Աստծուն՝ անգամ մինչև խաչի վրա մահանալը, և մենք նույնպես պետք է տենչանք Քրիստոսի նման լինել մեր կյանքի բոլոր բնագավառներում:

4. Հեզուլթյունը խաղաղություն գտնելու ուղին է

Մատթեոս 11:28-30-ում Հիսուսն ասում է. *«Եկէ՛ք ինձի, դուք բոլորդ որ կը յոգնիք ու բեռնաւորուած էք, եւ ես պիտի հանգստացնեմ ձեզ: Առէ՛ք իմ լուծս ձեր վրայ ու սորվեցէ՛ք ինձմէ՝ որ հեզ եմ եւ սիրտով խոնարհ, ու հանգստութիւն պիտի գտնէք ձեր անձերուն. որովհետեւ իմ լուծս հեշտ է, եւ իմ բեռս՝ թեթեւ»:* Ինքնարդարացումը, ոչ ուշիմ կամ անհնազանդ ոգին երբեք խաղաղ տեսակետի չի հանգեցնի: Սխալ վերաբերմունքը միշտ էլ հանգեցնում է անհանգստության ու ոգու խռովության, այսպիսով Հիսուսն ասում է. *«հեկվեք ինձ վրա, քանզի իմ լուծը հեշտ է, իսկ իմ բեռը՝ թեթեւ»:* Լծին հանդիմանալը լարվածության է հանգեցնում: Հիսուսը միշտ խաղաղ էր, քանզի նա երբեք չէր պայքարում հանգամանքների դեմ, այլ միշտ *ճանաչում էր Աստծուն իր բոլոր ճամփաներում*՝ գիտենալով, որ իր երկնային Հայրը կարող էր ու պիտի *շտկեր իր ուղիները*: Հիսուսը չհանդիմանեց հալածանքին ու իր նկատմամբ գործածված անարդարությանը և, հետևաբար, նա երբեք իր սրտում հակասություն չունէր: Սա է ուղին դեպի խաղաղություն:

5. Մենք Աստծուն պիտանի ենք, երբ հեզ ենք

Ես հենց նոր էի ավարտել Լեյլանդում (Լանքաշիր) մի տնային խմբում այս երանության մասին ուսուցանելն, ու մենք սկսեցինք աղոթել միասին: Մի կին տեսիլք ունեցավ ու այն մեզ հետ կիսեց, և ես այն երբևէ չեմ մոռացել՝ որպես հեզության նկարագրություն: Նա տեսնում էր սեղան, որին խաղողի մի կուլյտ կար: Սեղանի մյուս ծայրին մի մեծ պողպատե գլան կար, ու այն սկսեց գլորվել խաղողի ուղղությամբ: Ողկոլյզները հասկացան, որ նրանք ճմլվելու են, ու վրդովվեցին այդ փաստից՝ չնայած նրան, որ չէին կարող դադարեցնել գործընթացը. և մինչ գլանակն սկսեց ճմլել նրանց, Աստծու ձեռքը եկավ՝ գավաթով, ու սկսեց լցնել գավաթը

խաղողի հյութով: Նա մի կում արեց հյութից, ու որովհետև այն դառն էր, նա թափեց հյութն՝ ասելով, որ այն պիտանի չէր իրեն: Սեղանին խաղողի մեկ այլ կույտ էր դրված, ու մինևույն գործընթացն սկսեց, բայց չնայած նրան, որ այս ողկույզները գիտեին, որ գործընթացը ցավոտ է լինելու, նրանք ընդունեցին այն ու չբողոքեցին դրա դեմ: Կրկին ձեռքը եկավ ու հյութը գավաթի մեջ լցրեց ու համտեսեց այն: Այս անգամ հյութը քաղցր էր, և Աստված այն մի կողմ դրեց ու ասաց. «Սա կարող եմ ավելի ուշ օգտագործել»: Հեզուլթյան ինչպիսի կատարյալ պատկերավորում է այս տեսիլքը մեզ համար: Մենք բոլորս էլ փորձություններ ունենալու ենք, քանզի դրանք մարդուն բնորոշ են, սակայն մեր վերաբերմունքն այդ փորձություններում կորոշի՝ արդյոք մենք պիտանի կլինենք Աստծուն, թե՛ ոչ:

Վերին իմաստություն

Թույլ տվեք այս գլուխն ավարտել Հակոբոս 3:13-18-ից մի մեջբերմամբ: Հակոբոսն ասում է մեզ, որ վերին իմաստության հիմքը երանություններն են: Նա հակապատկերում է այն Ադամի մտածողությանը, որը երկրային ու դիվական է:

«Ո՛վ որ իմաստուն ու խելացի է ձեր մէջ, բարի վարքով թող ցոյց տայ իր գործերը՝ իմաստութեան հեզութեամբ: Բայց եթէ դառն նախանձ եւ հակառակութիւն ունենաք ձեր սիրտերուն մէջ, ճշմարտութեան դէմ մի՛ պարծենաք ու մի՛ ստէք: Այս իմաստութիւնը չ'իջներ վերէն, հապա՛ երկրային, շնչաւոր եւ դիւական է: Որովհետեւ ո՛ր կայ նախանձ ու հակառակութիւն, հո՞ն կայ խառնակութիւն եւ ամէն տեսակ չար բան: Բայց վերէն եղող իմաստութիւնը՝ նախ անկեղծ է, յետոյ՝ խաղաղարար, ազնիւ, հլու, լի ողորմութեամբ ու բարի պտուղներով, անկողմնակալ եւ անկեղծ: Արդարութեան պտուղը խաղաղութեամբ կը սերմանուի անոնց միջոցով՝ որ խաղաղութիւն կ'ընեն»:

Նշումներ

1. Ցավոք սրտի, Աստվածաշնչի շատ ժամանակակից տարբերակներ աղավաղում են այս բառի իմաստն ու «հեզությունը» փոխարինում են «մեղմությամբ»: Մեղմությունը չի նշանակում հեզություն, հնազանդություն կամ ուսանելի լինելու հատկություն: Միննույնը վերաբերում է նաև Ա Պետրոս 3:4-ին: Աստվածաշնչի ժամանակակից տարբերակներն ու դրանց աղավաղություններն ավելի խորությամբ հասկանալու համար կարդացեք *New Age Versions of the Bible` G.A. Riplinger հեղինակությամբ (AV Publications, 1993):*



ԳԼՈՒԽ 7

Երանութիւն չորրորդ ճիշտն անելը

*Երանի՛ր անոնց՝ որ անօթութիւն ու ծարաւ
ունին արդարութեան, որովհետեւ անո՛նք պիտի
կշտանան:*

Մատթեոս 5:6

*Երանի՛ր անոնց՝ որ ճամբայով պարկեշտ են,
Որոնք Տէրոջ Օրէնքին համաձայն կ'ընթանան:
Երանի՛ր անոնց՝ որ անոր վկայութիւնները կը պահեն,
Եւ ամբողջ սիրտով զինք կը փնտռեն.
Նաեւ անհրաւութիւն չեն գործեր,
Հապա անոր ճամբաներէն կ'ընթանան:
Դուն պատուիրեցիր որ շա՛տ զգուշութեամբ
Քու հրամաններդ պահենք:
Երանի՛ր թէ ճամբաներս հաստատուին,
Որպէսզի քու կանոններդ պահեմ.
Այն ատեն պիտի չամչնամ՝
Երբ քու բոլոր պատուիրաններուդ ուշադիր ըլլամ:
Քեզ պիտի ներբողեմ ուղիղ սիրտով,
Երբ քու արդար դատավճիռներդ սորվիմ:
Քու կանոններդ պիտի պահեմ.
Զիս բնաւ մի՛ լքեր:*

Սաղմոս 119:1-8

Այս պնդումն ակնհայտ է. միայն այն մարդն է տեսչում կուշտ լինել, ով անոթի է, և միայն պապակ մարդն է տեսչում իր ծարավը հագեցնել: Այնուամենայնիվ, կարևոր է շեշտել այս փաստը, քանզի մինչև մենք չհամեմատենք մեր կենսակերպն Աստծու կատարելության հետ, մենք երբեք անոթի ու ծարավ չենք լինի ավելի շատ նրան նմանվելու համար ու կդառնանք Հայտնություն 3:14-17-ում նշված Լավոդիկեի եկեղեցու նման: Նրանք պնդում էին, թե *հարուստ են, հարստացած ու ոչ մի բանի կարիք չունեն*: Սա նրանց իրավիճակի սեփական գնահատումն էր: Ցավոք սրտի, Հիսուսն ամենևին այլ տեսակետ ուներ: Նա հայտարարեց, որ նրանք կույր են, մերկ ու աղքատ: Ինչպիսի պատրանք են նրանք ապրում: Սրբություն փնտրելու մեծագույն խոչընդոտը հավատալն է, որ մենք արդեն սուրբ ենք: Ինքնաբավությունը Լավոդիկեի եկեղեցու մեղքն էր, և հավատացած եմ, որ նյութապաշտ եկեղեցիների ժանտախտն է:

Մեղքը սրտում է սկիզբ առնում

Սողոմոնի մեղքն, ի սկզբանե, միասեռականությունը չէր: Սողոմոնացիների կենսակերպը նրանց սրտում եղած մեղքի հետևանք էր: Ցանկացած մեղք սկսվում է սրտում: Սեռական մեղքերն արմատները չեն, դրանք միայն արտաքին ու ֆիզիկական հետևանք են սրտում եղած մի բանի: Սպանությունը, պարզապես, բարկության արտաքուստ արտահայտումն է: Ամուսնական դավաճանությունն ու գողությունը միայն սրտում եղած ազահության արտահայտումն են: Եզեկիել 16:49-ում ասվում է, որ Սողոմոնի մեղքի արմատներն էին *ամբարտավանությունը, հացի առատությունը և անհոգ հանդարտությունը*: Պատմությունն ապացուցում է, որ բարգավաճումն ու ինքնագոհությունն աշխարհում ու եկեղեցում միշտ էլ հանգեցրել են գոռոզության, ցոփության, անկման ու սեռական անբարոյականության: Պատմությունը նաև ապացուցում է այն փաստը, որ հալածանքն ու

փորձությունները միշտ էլ հանգեցնում են քրիստոնյաների շրջանակում Քրիստոսի նմանության աճին:

Կրկին տեսնում ենք, որ աշակերտի այս բնութագրությունում առաջխաղացում գոյություն ունի: Միայն այն ժամանակ, երբ մենք խոնարհվենք ու ընդունենք մեր մեղսագործ դրությունը, մենք կկարողանանք հաշտվել Աստծու հետ: Այնուհետև, որպես քրիստոնյա, եթե մենք սգանք և լինենք ուշիմ, ուսուցանելի ու հնազանդ, ապա մենք կտենչանք արդարացի լինել, այն է՝ կտենչանք անել այն, ինչ ճիշտ է:

Նախքան այս երանությունը խորությամբ դիտարկելը, մենք պետք է սահմանենք, թե ինչ ասել է արդարություն: Բառը, ըստ էությանմբ, ինքն իրեն սահմանում է: Սա նշանակում է լինել ու անել այն, ինչ ճիշտ է, իրավացի: Օրինական, արդարացի, արդարացված. այս բոլոր բառերն իմաստով միևնույնն են:

Սայթաքման քար

Այս երանությունը շատ քրիստոնյաների համար սայթաքման քար է եղել: Մյուսներն էլ անտեսել են այն, որովհետև առաջին հայացքից շփոթեցնող են համարել: Նրանք ասում են. «Ինչպե՞ս կարող է Հիսուսն ասել մեզ փնտրել մի բան, որ մենք արդեն ձեռք ենք բերել հավատքով: Վստահաբար, քրիստոնյան Քրիստոսի արդարությունն ունի, այն է՝ 100% արդարություն: Արդյոք ճիշտ չէ, որ արդարությունը *հավատքով է, այլ ոչ գործերով*»: Այս բոլոր պնդումները ճշմարիտ են, ու ես դրանց ողջ սրտով հավատում եմ: Քրիստոնյան երբեք չի կարող ավելի արդարացի լինել, քան Քրիստոսի նկատմամբ իր հավատքով, ոչ էլ նա ավելի քիչ արդարացի կարող է լինել, քան ներկայումս, քանզի խաչն է մեզ արդարացի դարձնում Աստծու առաջ, այլ ոչ մեր սեփական ջանքերը:

Շնորհները չեն աճում

Ես կատարելապես համոզված եմ, որ մեր փրկությունը, այսինքն Աստծու արդարությունը, անվճար նվեր է, շնորհ, սակայն այս երանության գաղտնիքն այն է, որ Հիսուսը չի խոսում չներված մեղսավորների հետ, որոնք այս անվճար շնորհի կարիքն ունեն, նա խոսում է աշակերտների հետ: Այսպիսով, եթե մենք արդեն այս շնորհն ունենք, ապա խոսքը կարող է գնալ միայն մի այլ տեսակ արդարության մասին:

Հավատացած եմ, որ սա արդարության **պտուղն** է, որի մասին Հիսուսը խոսում է: Աստվածաշունչը բազմաթիվ անգամ խոսում է արդարության **պտղի**, ինչպես նաև արդարության **շնորհի** մասին: Ճիշտ այնպես, ինչպես գոյություն ունեն Հոգու **շնորհներ**, նաև գոյություն ունեն Հոգու **պտուղներ**: Երանությունները միևնույնն են, ինչ Պողոս առաքյալի՝ Գաղատացիս 5:22-23-ում նշված հոգու պտուղները, քանզի երկուսն էլ կապ ունեն Աստծու Էության, բնավորության հետ:

Շնորհը չի կարող աճել կամ նվազել, սակայն այն կարող է զարգացվել ու վարժեցվել: Պտուղն աճում է, բայց այն նաև կարող է թորշոմել ու թառամել: Ահա հենց այս պտուղն է, որի համար մենք պետք է անոթի ու ծարավ լինենք: Այն որևէ կապ չունի հավատքով արդարության հետ: Այս արդարությունը նշանակում է **ճիշտն անել**, իսկ դա ջանք է պահանջում: Այն շատ մեծ կապ ունի գործերի հետ: Սա այն արդարությունն է, որը Հիսուսն այնուհետև նշում է Լեռան քարոզում (Մատթեոս 6:33): *Նախ փնտրեք Աստծու թագավորությունն ու նրա արդարությունը*: Փնտրելը ջանք է պահանջում: Սա տեղի չի ունենա հավատքով, այլ միայն գործով:

Արդարության պտուղը

Եկեք այժմ դիտարկենք որոշ սուրբ գրություններ, որ պարզորոշ կերպով հավատացյալներին են ուղղված ու որ խոսում են արդարության պտղի մասին: Աստվածաշնչյան նամակները լի են մեր տանը, աշխատավայրում ու եկեղեցում արդար ապրելու ցուցումներով: Քրիստոնեությունը որևէ կաժ չունի եկեղեցական ծառայությունների, ժամերգությունների կամ էլ աստվածաբանության հետ, այլ այն օրական քսանչորս ժամ արդար ապրելակերպ է:

Տիմոթեոս 2:22

«Փախի՛ր նաև երիտասարդական ցանկություններէն, ու հետամո՛ւտ եղի՛ր արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան, անո՞նց հետ՝ որ կը կանչեն Տէրոջ անունը մաքուր սիրտով»:

Պողոս առաքյալը հորդորում է երիտասարդ հոգևոր ծառային «հետամուտ լինել արդարության»: Տիմոթեոսն արդեն ուներ հավատքով արդարությունը, ուրեմն, Պողոս առաքյալը միայն կարող է նրան խնդրել հետամուտ լինել նրան, ինչ արդար է, այն է՝ անել այն, ինչ արդար է:

Չակոբոս 3:17-18

«Բայց վերէն եղող իմաստությունը՝ նախ անկեղծ է, յետոյ՝ խաղաղարար, ազնիւ, հլու, լի ողորմութեամբ ու բարի պտուղներով, անկողմնակալ եւ անկեղծ: Արդարութեան պտուղը խաղաղութեամբ կը սերմանուի անոնց միջոցով՝ որ խաղաղութիւն կ'ընեն»:

Այստեղ Չակոբոսը թվարկում է երանությունների մի մասն ու ասում, որ դրանք իմաստություն են՝ ի վերուստ, և ցանկն ընդգրկում է արդարության **պտուղը**: Այս քաղցը՝ անելու այն, ինչ արդար է, հաճախ բացակայում է եկեղեցում, և ցավում եմ ասել, որ նաև հայտնաբերել եմ, որ այն բացակայում է շատ հոգևոր ծառաների մեջ, որոնց հանդիպել եմ աշխարհով մեկ: Նրանք հաճախ հաճոյանում են մարդկանց, փոխարենն անելու այն, ինչ արդար է, ճիշտ: Իհարկե, ընդունում եմ, որ դա միշտ չէ, որ հեշտ է, և գին կա վճարելու, բայց սա

արդարացում չէ այն մարդու համար, որ Աստծու կողմից մի կողմ է դրվել՝ որպես իր եկեղեցու օրինակ: Տապալման ճանապարհներից մեկն է դադարել անոթի ու ծարավ լինել ճշմարտության համար: Յետևանքները մահացու են, որովհետև երբ մենք չենք տեսչում դեպի այն, ինչ արդար է ու ճիշտ, մենք փոխզիջման ենք գնում, իսկ փոխզիջումը միշտ էլ թույլ ու աղավաղված քրիստոնեության սկիզբն է:

Փիլիպպեցիս 1:9-11

«Ու սա՛պէս կ'աղօթեմ՝ որ ձեր սէրը հետզհետէ աւելի առատանայ գիտակցութեամբ եւ ամբողջ դատողութեամբ, որպէսզի դուք դատորոչէք տարբեր բաները՝ անկեղծ եւ անսայթաք ըլլալու համար մինչև Քրիստոսի օրը, լեցուած արդարութեան պտուղներով Յիսուս Քրիստոսի միջոցով՝ Աստուծոյ փառքին ու գովութեան համար»:

Պողոս առաքյալը հորդորում է այս քրիստոնյաներին արդար, ճիշտ ապրել: Սա նշանակում է «լցված արդարության **պտուղներով**»: Մենք պետք է քաղցած լինենք, անոթի, որպեսզի ունենանք լցված լինելու ցանկություն: Քանի դեռ քրիստոնյան չունի արդար ապրելու այրող ցանկություն, նրա կյանքը միշտ էլ կավարտվի գաղջությամբ, որն Աստծու աչքին զգվելի է: Միայն տաքը կամ սառը կարող են լինել ընդունելի տարբերակներ նրա համար (տես Հայտնություն 3:15-16):

Մատթեոս 5:20

«Որովհետեւ կը յայտարարեմ ձեզի. "Եթե ձեր արդարութիւնը չգերազանցէ դպիրներու եւ փարիսեցիներու արդարութիւնը, բնա՛վ պիտի չմտնէք երկինքի թագավորութիւնը" »:

Խոսքը կարող է միայն գնալ արդարության պտղի մասին, քանզի Հիսուսը փարիսեցիների մասին ասում է, որ *նրանք ասում են ու **չեն անում***: Նրանք հավատում են Աստծուն, բայց մերժում են **անելու** այն բաները, որ Աստված է պահանջում: Պտուղն ասելն ու **անելն է**:

Որպես քրիստոնյաներ մենք պետք է ոչ միայն ասենք այն, ինչ արդարացի է, ճիշտ, այլ նաև պետք է կիրառենք այն, ինչ արդար է: Պտուղը, հետևաբար, արդար ապրելու ցուցադրումն է և

արտահայտումը: Եթե մենք ասենք, որ մենք մնում ենք, ապրում որթատունկի մեջ, ապա մենք պետք է տանք որթատունկի բերքը՝ Հիսուսի Էությունը՝ Հոգու պտուղը՝ երանությունները:

Բ Կորնթացիս 9:7-10

«Իւրաքանչիւրը թող տայ՝ ինչպէս որոշած է իր սիրտին մէջ, ո՛չ թէ տրտմութեամբ կամ հարկադրաբար. որովհետեւ Աստուած կը սիրէ ցնծութեամբ տուողը: Եվ Աստուած կարող է բոլոր շնորհներով ճոխացնել ձեզ, որպէսզի դուք՝ ամէն բանի մէջ ամէն ատեն լման ինքնարավութիւն ունենալով՝ ճոխանաք ամէն բարի գործով, ինչպէս գրուած է. «Սփռեց եւ աղքատներուն տուաւ. անոր արդարութիւնը յավիտեան կը մնայ»: Ուրեմն ա՛ն՝ որ սերմ կը հայթայթէ սերմնացանին, կերակուրի համար հաց հայթայթէ ձեզի ու բաղմացնէ ձեր հունտը, եւ աճեցնէ ձեր արդարութեան պտուղները»:

Պողոս առաքյալն այս տողերում խոսում է բարի գործերի մասին: Այն, ինչ նա ասում է, որևէ կապ չունի ողորմածության անվճար շնորհի հետ, այլ արդարը, ճշմարիտն անելու պտղի հետ, որն այս դեպքում շռայլորեն տալն է:

Բ Տիմոթեոս 3:16

«Ամբողջ Գիրքը աստուածաշունչ է, եւ օգտակար՝ սորվեցնելու, կշտամբելու, ուղղելու եւ արդարութեան մէջ կրթելու համար»:

Ահա մեկ այլ սուրբ գրություն արդարության մասին, որը որևէ կապ չունի հավատքով ձեռք բերած արդարության հետ: Մենք ցուցումների կարիք ունենք, թե ինչպես պետք է արդար ու բարեհաճ ապրենք Աստծու առաջ:

Ա Հովհաննես 2:29, 3:7-10

«Եթէ գիտէք թէ ինք արդար է, կ'ըմբռնէք թէ ո՛վ որ արդարութիւն կը գործէ՝ իրմէ ծնած է»:

«Որդեակներ, ո՛չ մէկը թող մոլորեցնեն ձեզ. ո՛վ որ արդարութիւն կը գործէ՝ արդար է, ինչպէս ան արդար է... ..Ասո՛վ բացայայտ կ'ըլլան

Աստուծոյ դաւակներն ու Չարախոսին դաւակները: Ո՛վ որ արդարութիւն չի գործեր՝ Աստուծմէ չէ, ո՛չ ալ ա՛ն՝ որ չի սիրեր իր եղբայրը»:

Յովհաննէս առաքյալի այս խոսքերը ամենահամոզիչ սուրբ գրութիւններից է, որ կարող եմ մեջբերել, որովհետև Յովհաննէս առաքյալն ասում է, որ եթէ մենք արդար ենք և եթէ մենք ընդունել ենք հավատքով Քրիստոսի արդարութիւնը, ապա մենք միայն կարող ենք սա ապացուցել **արդարութիւն գործելով**: Այս «գործելը» մեզ ընդունելի կամ Աստուծու հետ արդար, ճիշտ չի դարձնում, բայց սա ապացույցն է այն բանի, որ մենք արդէն ընդունել ենք ողորմածության շնորհը: Յովհաննէս առաքյալն, ըստ էության, ասում է, որ եթէ մենք հավատքով արդարութիւնը կիրառենք՝ որպէս արդար գործեր չանելու արդարացում, ապա մենք ապացուցում ենք, որ Աստուծուց չենք ծնված: Ես ավելի շուտ կասեի, որ մենք ծնված ենք «փրկութիւն՝ հավատքով» կոչվող ուսմունքից, որը լոկ մի համոզմունք է, առանց որևէ գործնական հետևանքների:

Յավատքի գործե՞ր

Ես այս բոլոր մեջբերումները գործածել եմ ցուցադրելու այն, որ Աստվածաշունչը հետևողականորեն տարբերակում է գործերով արդարության պտուղը՝ հավատքով արդարության շնորհից: Քրիստոնյաների համար պարտադիր է հասկանալ այս երկուսն էլ, հակառակ դեպքում նրանք այս կամ այն կողմում անկում կապրեն. նրանք կամ կասեն, որ արդարութիւնը գործերով չէ, և կթաքնվեն ողորմածության ետևում՝ որպէս բարի գործեր չանելու արդարացում, կամ էլ նրանք կմտածեն, որ բարի գործերով նրանք փրկութիւնը կվաստակեն: Յուսով եմ, որ սուրբ գրութիւններից ապացուցել եմ, որ այս երկու դիրքորոշումներն էլ սխալ են:

Գինը

Մենք երանություններից յուրաքանչյուրում տեսանք, որ պայմանը գինն է, և այս երանությունը բացառություն չի կազմում: Գոյություն ունի արդարություն գործելու գին: Դա կարող է լինել ֆինանսական գին՝ մեր բիզնեսն արդարացի և բարեպաշտ կերպով կառավարելու հարցում, քանզի քրիստոնյայի համար բավական չէ ասել, որ մենք օրենքի սահմաններում ենք գործում: Այսօրվա գործարար համայնքում շատ բաներ են օրինական, բայց դրանք բարոյական չեն: Որպես քրիստոնյաներ մենք չպետք է օրենքը շրջանցելու ուղիներ կամ էլ օրենքում ճեղքեր փնտրենք. մենք պետք է *վճարենք Կեսարին* բարի սրտով և արդար լինենք Աստծու առաջ, այլ ոչ միայն մեր՝ մշտապես փոփոխվող օրենսդրական համակարգի:

Գոյություն ունեն նաև այս գնի այլ տեսակներ, քանզի արդար ապրելը կարող է հանգեցնել մեր ընկերների ու մեր ճանաչման կորստին: Երբ մենք հնազանդվում ենք Լեռան քարոզի կենսակերպին, դա կարող է հանգեցնել քննադատության՝ անգամ եկեղեցու կողմից: Մյուս այտը շրջելն ու լրացուցիչ մղոն քայլելն այնպիսի ցուցումներ չեն, որոնց շատ քրիստոնյաներ կցանկանան հետևել: Արդար ապրելը կբերի շատ փորձություններ ու հալածանքներ և, ըստ էության, վերջին երկու երանությունները, ինչպես կտեսնենք, ապացուցում են, որ թյուրիմացությունն ու հալածանքը սուրբ կյանքի միակ եզրահանգումներն են:

Աշակերտությունը, առաքյալ լինելը միայն բարենպաստ եղանակի նավաստիների համար չէ, իսկ եկեղեցին շատ հաճախ պարզապես անկեղծորեն չի ընդունել այն փաստը, որ մենք կոչված ենք մեր խաչը վերցնելու, որպեսզի հետևենք Քրիստոսին:

Փառավոր խոստում

Խոստումը, ինչպես միշտ էլ լինում է մեր Աստծու հետ, շատ ավելի մեծ է, քան գիևր: Եթե մենք անոթի լինենք արդարության համար, ապա մենք պիտի լցվենք: Չկա ավելի մեծ խաղաղություն և բավարարվածություն այս կյանքում, քան Աստծու բացահայտված կամքը կատարելն ու նրա նման լինելը: Ինչպես բոլոր մնացած երանությունների դեպքում, արդարության պտուղը կարող է միայն ի կատար ածվել, երբ Աստծու թագավորությունը գա երկրի վրա, և Հիսուսն իշխի արդարությամբ: *«Ահա՛ թագաւոր մը արդարութեամբ պիտի թագաւորէ, եւ իշխանաւորները իրաւունքով պիտի իշխեն» (Եսայիա 32:1):*

Նրանք, ովքեր կիշխեն Քրիստոսի հետ, կունենան համբարձված մարմինը, քանզի *միս ու արյունը չի կարող ժառանգել Աստծու թագավորությունը*, և այդժամ մենք միշտ արդարություն կգործենք, ամեն ժամանակ, քանզի *երբ մենք տեսնենք նրան, պիտի նրա նման լինենք*: Մենք լիովին արդարացի կլինենք մեր գործերում միայն Հիսուսի վերադառնալուց հետո: Մինչ այդ օրը կգա, եկեք քաղցած ու ծարավ լինենք արդարության համար:



ԳԼՈՒԽ 8

Երանութիւնն հինգերորդ

Ողորմածութիւնն

*Երանի՛ր ողորմածներուն, որովհետեւ անո՛նք
ողորմութիւն պիտի գտնեն:*

Մատթեոս 5:7

*Կարեկից մարդը իր անձին բարիք կ'ընէ,
Բայց անգութը իր մարմինը կը դժբախտացնէ:*

Առակաց 11:17

*Ուստի՛ ունենալով շնորհներ, որոնք կը
տարբերին այն շնորհքին համեմատ՝ որ մեզի
տրուած է... ...ա՛ն որ կ'ողորմի՛
ուրախութեամբ:*

Հոովմեացիս 12:6-8

*Ուստի Տէրոջ բարկութիւնը բորբոքեցաւ իր
ժողովուրդին դէմ,*

Ու գարչեցաւ իր ժառանգութենէն.

Զանոնք հեթանոսներուն ձեռքը մատնեց...

...Սակայն ինք նայեցաւ անոնց տազնապին՝

Երբ անոնց պաղատանքը լսեց,

Եւ անոնց համար իր ուխտը յիշեց.

Իր մեծ կարեկցութեան համեմատ արգահատեցաւ:

Սաղմոս 106:40-45

Մենք երանելի, օրհնյալ, Աստծու կողմից արտոնված ժողովուրդ ենք, եթե ողորմած ենք: Եկեք հիշենք, որ այս երանություններն այն են, ինչպես Աստված է մեզ տեսնում, այլ ոչ այն, թե մենք ինչպես ենք զգում: Միշտ չէ, որ հեշտ է ողորմած լինել, մանավանդ եթե մենք իրոք հասկանանք, թե ինչ է դա նշանակում: Ողորմածությունը ընտրություն է չպատժել այն, ինչ պատժի է արժանի: Այդ իմաստով, սա բացասական հատկություն է¹: Չպահված խոստումներն ու խախտված օրենքները հետևանքներ ունեն, և արդարադատությունը պահանջում է, որ գինը վճարվի: Եթե մենք մեր երեխաների նկատմամբ արդարացի պատիժ կիրառենք, դա մեզ չար չի դարձնի: Միևնույնը նաև կիրառելի է, երբ մենք մեր աշխատանքում կամ եկեղեցում կարգ, պատիժ ենք կիրառում: Հաճախ մենք պայքարում ենք մեր արդարության զգացումի դեմ՝ պատիժը չկիրառելու համար, երբ մենք գիտենք, որ այդ պատիժը տեղին է ու ճշմարիտ: Արդարությունն Աստծու Էության կարևոր մասն է կամ մի կողմը, բայց ողորմածությունը նրա կատարյալ Էության մեկ այլ անբաժանելի մասն է:

Ողորմածությունը շնորհ չէ

Ինչպես բոլոր երանություններում, ողորմածությունը վերաբերմունք է կամ սրտի դիրքորոշում, սա մի հատկություն չէ, որ մենք ունենք: Ճատ տարիների հոգևոր ծառայության ընթացքում հասկացել եմ, որ քրիստոնյաների ապշեցուցիչ մի թիվ չի հասկանում ողորմածության ու Աստծու շնորհի միջև եղած տարբերությունն ու, այսպիսով, շփոթում է այս երկուսը:

Թե՛ ողորմածությանն ու թե՛ շնորհին մենք չենք կարող արժանանալ, սակայն եթե ողորմածությունը, պարզապես, արդարադատությունը մի կողմ դնելն է (և, հետևաբար, բացասական է, ըստ Էության), ապա շնորհը խիստ դրական հատկություն է, որովհետև մենք շոշափելի մի բան ենք ստանում, այն է՝ Քրիստոսի ուժը, նրա զորությունը, նրա Էությունը:

Որպես քրիստոնյաներ, մենք արդեն Աստծու կողմից ողորմածություն ենք ստացել: Սա արվել էր խաչի վրա: Քրիստոնյան, որ ողորմածություն է ստացել՝ Հիսուս Քրիստոսի քավիչ արյան հավատքով, երբեք կրկին կարիք չունի ավելի շատ ողորմածություն աղերսելու: Երբ քրիստոնյան Աստծուց ողորմածություն է խնդրում, ապա դա ցույց է տալիս, որ նա չի հասկանում Հիսուսի՝ խաչի վրա արված կատարյալ գործը: Հիսուսը *քավեց աշխարհի մեղքն* ու հեռացրեց մեզանից *մեղքերի համար ունեցած խղճահարությունը* (Եբրայեցիս 10:2): Սակայն մենք պետք է Աստծուց ավելի շատ շնորհ խնդրենք քրիստոնյայի կյանքն ապրելու համար: Մենք բոլորս էլ այնքան Աստծու շնորհի կարիք ունենք, որքան որ կբավականացնի մեզ մեր փորձություններում ու մեզ գործություն կտա սուրբ կյանք ապրելու:

Շնորհով աճ

Բ Պետրոս 3:18-ում ասվում է մեզ, որ մենք կարող ենք *աճել շնորհով*. սա գործընթաց է, բայց չկա որևէ սուրբ գրություն, որ մեզ կասի, թե կարող ենք ողորմածությամբ աճել, քանզի ողորմածությունը գործընթաց չէ, այլ այն չպատժելու որոշում է: Արդարությունն Աստծու համար շատ կարևոր է, իսկ պատիժն արդարության անբաժանելի մասն է կազմում, ուրեմն, արդյոք ինչու ենք մենք երանելի վիճակում, երբ մենք ողորմածություն ենք ցուցաբերում՝ արդարադատություն կիրառելու փոխարեն: Պատասխանն այն է, որ ողորմածությունն ու արդարադատությունը երկուսն էլ Աստծու եղբայան մասն են կազմում: Մարդը չի կարող պնդել, որ Աստված իր կյանքում է, եթե նա չի ցուցաբերում նրա եղբայունն իր գործողություններում՝ միայն իր հավատալիքների ու բառերի փոխարեն:

Ողորմածությունն այնքանով է Աստծու եղբայան մի մասը, որքանով դատաստանը, և սա ճիշտ է ոչ միայն Նոր կտակարանում: Աստծու եղբայունը հետևողական է՝ ողջ Աստվածաշնչով մեկ: Աստծու

ամենահիմնական օրենքն իսկ, ինչպես ներկայացված է Տասը պատվիրաններում, ցույց է տալիս Աստծու Եուրօրյան երկու կողմերը:

Ելից 20:4-6-ում ասվում է. *«Ո՛չ մէկ կուռք չինէ դուն քեզի, ո՛չ ալ որեւէ կերպարանք բանի մը որ վերը՝ երկինքի մէջ է, վարը՝ երկրի վրայ է, կամ ջուրերուն մէջ է՝ երկրի տակ: Անոնց մի՛ երկրպագեր ու զանոնք մի՛ պաշտեր, որովհետեւ ես՝ Տէրս, քու Աստուածդ, նախանձախնդիր Աստուած եմ. կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդիներուն - մինչև երրորդ ու չորրորդ սերունդը անոնց՝ որ կ'ատեն զիս-, եւ կարեկցութեամբ կը վարուիմ մինչև հազար սերունդ անոնց հետ՝ որ կը սիրեն զիս ու կը պահեն իմ պատուրաններս»:* Մատթեոս 23:23-ում Հիսուսն ասաց, որ Օրենքի ավելի ծանր բաներն են կարեկցութիւնը, իրավունքն ու հավատքը:

Տույց տուր ինձ քո փառքը

Երբ Մովսեսն Աստծուն խնդրեց բացահայտել իր Եուրօրյանն ու ցույց տալ նրան իր փառքը, ինչպես նշված է Ելից 34:6-7-ում, Աստված ներկայացրեց իր Եուրօրյան երկու հակադիր կողմերը, այն է՝ ողորմածութիւնն ու արդարադատութիւնը:

«Տէրը անոր առջեւէն անցաւ, եւ գոչեց. «Տէ՛րը, Տէ՛րը, Աստուած զթած ու ողորմած, համբերատար և առատաձեռն՝ կարեկցութեամբ ու ճշմարտութեամբ, որ կարեկցութիւնը հազարներուն կը պահէ, անօրէնութիւնը, յանցանքը եւ մեղքը կը ներէ. բայց յանցավորը ամենեւին անպատիժ չի թողուր, հապա հայրերուն անօրէնութիւնը կը հատուցանէ որդիներուն ու որդիներուն որդիներուն, մինչև երրորդ եւ չորրորդ սերունդը»:

Այն պահից ի վեր, ինչ մարդ արարածը մեղք գործեց, Աստծու ազնվութիւնը պահանջեց, որ մարդը դատվի ու պատժվի. բայց որովհետև ողորմածութիւնը, կարեկցանքը նույնպես Աստծու բնավորութեան գիծն է, նա ցանկանում էր ծածկել մեղքն ու ներել

մարդուն: Աստված միշտ էլ կամեցել է ծածկել մեղքը, և դրա մի հիանալի օրինակ է խորանը:

«Եւ տապանակին մէջ դի՛ր այն Վկայութիւնը՝ որ քեզի պիտի տամ: Զուտ ոսկիէ Քաւութիւն (բառացի՝ ողորմածութեան արձող) մը չինէ... ...Ոսկիէ երկո՛ւ քերովբէ չինէ Քաւութեան երկու ծայրերուն վրայ... ...Քաւութիւնը դի՛ր տապանակին վրայ, իսկ քեզի տալիք Վկայութիւնս՝ դի՛ր տապանակին մէջ: Հո՛ն ես քեզի պիտի հանդիպիմ, ու Քաւութեան վրայէն, Վկայութեան տապանակին վրայ եղող երկու քերովբէներուն մէջտեղիցէն, պիտի խօսիմ քեզի հետ...» (Ելից 25:16-22):

Քավութիւնը՝ ողորմածութեան արձող

Տապանակը փայտե ուղղանկյուն արկղ էր՝ ներսից ու դրսից պատված մաքուր ոսկով, և Աստված Մովսէսին ասաց, որ այդ արկղի մեջ դնի Օրենքը՝ Վկայութիւնը: Պողոս առաքյալն ասում է, որ Օրենքը կատարյալ է, բայց մեղքն այն օգտագործել է մեզ դատապարտելու և Աստծու դատաստանի տակ դնելու համար: Ուրեմն, զարմանալի է, որ Աստված Մովսէսին ասաց արկղի համար կափարիչ պատրաստել, ու անվանեց այն Քավութիւն՝ ողորմածութեան արձող: Այստեղ է, որ Քավութիւնը ծածկում է մեր դատապարտման միջոցը, և Աստված ասաց, որ Նա Իսրայելի զավակների հետ պիտի հանդիպի ոչ թե արկղի մեջ, այն է՝ Օրենքի միջոցով, այլ Քավութեան վրայից՝ քերովբէների միջև: Ողորմածութիւնը ծածկեց մեր դատապարտութեան միջոցը՝ մեղքը, որ օգտագործում է Օրենքը²:

Ես այստեղ օրինակներ եմ բերել Հին կտակարանից, որպէսզի ցույց տամ, որ Աստծու Էութիւնը միշտ էլ եղել է իր ժողովրդի նկատմամբ ողորմածութիւն ցուցաբերելը: Մենք չպետք է սխալ գործենք՝ կարծելով, թե Հին կտակարանում Օրենքն ու դատաստանն էր գործում, իսկ Նոր կտակարանում՝ միայն ողորմածութիւնն ու շնորհը: Հիսուսի խաչը միայն մարդկութեան մեղքի, *ողջ աշխարհի մեղքի* վերջնական լուծումն էր, այլ ոչ թե ողորմածութեան սկիզբը:

Աստվածային սկզբունք

Աստու՛ւ աստվածային սկզբունքն է, որ մենք, որպես քրիստոնյաներ, կիրառենք այն, ինչի փորձն ունենք: Ահա մի ահարկու նկարագրություն, որ Յիսուսը բերում է Մատթեոսի ավետարանում:

«Ուստի երկինքի թագաւորութիւնը կը նմանի թագաւորի մը, որ ուզեց հաշիւ առնել իր ծառաներէն: Երբ սկսաւ հաշիւ առնել, տասը հազար տաղանդի [այսօրվա 2.8 միլիարդ ֆունտ ստերլինգ] պարտապան մը բերուեցաւ իրեն: Բայց ան վճարելու կարողութիւն չունենալով՝ անոր տէրը հրամայեց, որ ան ծախուի, նաեւ անոր կինն ու զաւակները եւ անոր ամբողջ ունեցածը, ու պարտքը վճարուի: Իսկ ծառան իյնալով՝ երկրպագեց անոր եւ ըսաւ. «Տէ՛ր, համբերատա՛ր եղիր ինծի հանդէպ, ու ամէ՛նը պիտի վճարեմ քեզի՛»: Ծառային տէրը՝ զթալով՝ արձակեց զայն, եւ ներեց անոր պարտքը: Նոյն ծառան գնաց, գտաւ իր ծառայակիցներէն մէկը՝ որ հարիւր դահեկան [այսօրվա 2500 ֆունտ ստերլինգ] կը պարտէր իրեն, ու բռնելով զայն՝ կը խեղդէր եւ կ'ըսէր. «Վճարէ՛ ինծի ունեցած պարտքդ՛»: Ուստի իր ծառայակիցը ինկաւ անոր ոտքը, կ'աղաչէր անոր ու կ'ըսէր. «Համբերատա՛ր եղիր ինծի, եւ պիտի վճարեմ քեզի՛»: Բայց ինք չէր ուզեր. հապա գնաց ու բանտը նետել տուաւ զայն՝ մինչեւ որ վճարէր պարտքը: Երբ իր ծառայակիցները տեսան ինչ որ պատահեցաւ՝ շատ տրտմեցան, ու եկան եւ պատմեցին իրենց տիրոջ ամբողջ պատահածը: Այն ատեն անոր տէրը կանչեց զայն ու ըսաւ. «Չա՛ր ծառայ, այդ ամբողջ պարտքը ներեցի քեզի՛՝ քանի որ աղաչեցիր ինծի. ուրեմն պէտք չէ՞ր որ դո՛ւն ալ ողորմէիր ծառայակիցիդ, ինչպէս ես ողորմեցայ քեզի՛»: Եւ անոր տէրը բարկանալով՝ յանձնեց զայն տանջողներուն, մինչեւ որ վճարէր ամբողջ պարտքը» (Մատթեոս 18:21-35):

Պատմության խրատը

Կարծում եմ, որ այս պատմությունը լսող յուրաքանչյուր մարդ կարհամարհի չներող մարդուն, նրա գործողություններն աններելի

կհամարի և կհամաձայնի, որ կիրառված պատիժն արդարացիորեն վաստակված էր: Ահարկուն տող 35-ն է. *«Իմ երկնաւոր Հայրս ալ նոյնպէս պիտի ընէ ձեզի, եթէ ձեզմէ իւրաքանչիւրը իր եղբօր սրտանց չներէ իր յանցանքները»:*

Հիսուսն այս նկարագրութիւնն օգտագործում է ողորմածութեան մասին խոսելու նպատակով: Սա ի պատասխան էր այն հարցի, որ Պետրոսը տվեց ներման մասին: Պարզ է, որ որպէս քրիստոնյաներ մենք այս մարդու փոխարեն ենք: Մեզ ներվել է տասը հազար տաղանդ արժեցող մեղք: Յուրաքանչյուր սխալ միտք, բոլոր անփութութեան ու անտարբերութեան մեղքերն, ինչպէս նաև մեր գիտակից վրիպումները ներված են: Անցյալի բոլոր մեղքերն ու այն բոլոր մեղքերը, որ դեռ պիտի գործենք ապագայում, արդեն ներված են խաչի քափիչ արյան միջոցով: Արդյոք ինչպէս են քրիստոնյաները համարձակվում անամոթաբար մոռանալ սա ու չներել իրենց եղբոր սխալները: Արդյոք ինչպէս ենք մենք համարձակվում չներել մեր թշնամիներին, երբ Քրիստոսն արդեն մեզ ներել է, երբ մենք էինք թշնամի ու Աստծու թագավորութեան ղուրս էինք: Որպէս քրիստոնյաներ, մենք ընդունում ենք այս պատմութեան խրատը, սակայն դեռևս շատ դժվար ենք գտնում ներել ու ողորմածութիւն ցուցաբերել նրանց նկատմամբ, ում մենք արհամարհում ու մեր թշնամի ենք անվանում:

Անհնազանդութիւնը թուլութիւնն է

Մենք, որպէս քրիստոնյաներ, որևէ արդարացում չունենք, այն պարզ պատճառով, որ չներելը թուլութիւնն է, այլ անհնազանդութիւնն է: Ներելը դժվար համարելը թուլութիւնն է: Ներելուց հետո ցավ ու դառնութիւն զգալը խնդիր է, քանի դեռ մենք այն խոստովանում ու նորից ենք ներում, բայց ասել, թէ «ես չեմ ների» անհնազանդութիւնն է:

Մենք սա ավելի խորութեամբ կքննարկենք, երբ դիտարկենք Մատթեոս 6:14-15-ի Տերունական աղոթքը, որի միակ հատվածի վրա Հիսուսը մեկնաբանութիւնն է անում. *«Արդարեւ, եթէ դուք ներէք մարդոց*

իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ձեզի. իսկ եթէ դուք չներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի պիտի չներէ ձեր յանցանքները»:

Ակներս է, որ մենք պետք է կիրառենք այն, ինչ ստացել ենք, և որ Աստծու կողմից ներումը պայմանավորված է մեր կողմից այդ նույնն անելու հետ: *«Կարեկիցին հետ կարեկից կ'ըլլաս, պարկեշտ մարդուն հետ պարկեշտ կ'ըլլաս, մաքուրին հետ մաքուր կ'ըլլաս, ու ծուռին հետ կը ծոխ» (Սաղմոս 18:25-26):*

Խոստումը

Այս երանության խոստումն այն է, որ մենք *ողորմածություն* պիտի գտնենք: Մենք պետք է բոլորս էլ Քրիստոսի դատարանի առջև ներկայանանք, որպեսզի հաշիվ տանք այն արարքների համեմատ, որ մարմնում ենք կատարել՝ բարի կամ չար: Եթե մենք մյուսների նկատմամբ ողորմած ենք եղել, ապա մենք էլ պիտի ողորմածություն ստանանք Քրիստոսի դատարանի առջև:

Որպես քրիստոնյաներ, մենք արդեն ողորմածություն ենք ստացել Աստծու կողմից, ուրեմն եկեք ջանանք մյուսների հանդեպ ողորմածություն ցուցաբերել, երբ կարող ենք: Բայց եկեք նաև հիշենք, որ մենք միայն կարող ենք ողորմածություն ցուցաբերել, երբ դիմացինը արժանի չէ դրան, քանի որ ողորմածություն նշանակում է, որ մենք պետք է մի կողմ դնենք արդարադատությունը: Ողորմածությունն այնքան «բարի» հատկություն է թվում, բայց ինչպես բոլոր մյուս երանությունների դեպքում, այս հատկությունը, որ անհրաժեշտ է խոստումը ստանալու համար, ցավոտ է մեր մարմնի համար:

Նշումներ

1. Իհարկե, ողորմածությունը շատ դրական է այն մարդու համար, ով ստանում է այն, սակայն այն անձի համար, ով ցուցաբերում է այն, ողորմածությունն, ըստ էության, բացասական է, որովհետև սա որևէ բան չանելու մի որոշում է:

2. Պողոս առաքյալն իր՝ Յոզվմեացիս 7-րդ գլխում ցույց է տալիս մեզ, որ օրենքը կատարյալ է, բայց որ մեղքն այն օգտագործում է մեզ դատապարտելու համար, քանզի առանց օրենքի մենք չենք կարող դատապարտվել: Խաչը ծածկեց Օրենքը ողորմածությամբ ու զրկեց սատանային, այսինքն՝ եղբայրներին մեղադրողին, Օրենքը մեր դեմ կիրառելու իրավունքից՝ դրանով իսկ ազատելով մեզ օրենքի անեծքից, այն է՝ այն խախտելու դեպքում կիրառվելիք պատժից:



ԳԼՈՒԽ 9

Երանութիւնն վեցերորդ

Սրտի մաքրութիւնն

*Երանի՛ր անոնց՝ որ սիրտով մաքուր են,
որովհետեւ անոնք պիտի տեսնեն Աստուած:*

Մատթեոս 5:8

*Մաքուրին հետ մաքուր կ'ըլլաս, ու ծուռին հետ
կը ծոխ:*

Բ Թագավորաց 22:27

*Մաքուրներուն՝ ամէն բան մաքուր է. բայց
պիղծերուն եւ անհավատներուն՝ ոչինչ մաքուր
է, հապա անոնց միտքն ալ, խղճմտանքն ալ
պղծուած են:*

Տիտոս 1:15

Այս վեցերորդ երանութիւնը հեշտ հասանելի չէ: Մեր միտքը, այն է՝ մեր գիտակից մտածողութիւնը, կարող է փոփոխվել քրիստոնյա մեր աճի համեմատ, բայց միայն Աստված է կարող փոխել մեր սիրտը, այն է՝ մեր ենթագիտակցական դրոպապատճառներն ու գաղտնի ցանկութիւնները, և դրանք մաքուր դարձնել: Միայն երբ մենք դառնանք խոնարհ ու հեզ և քաղցած լինենք ճշմարտութեան համար, Աստված կկարողանա հաշիվները պարզել արմատների հետ:

Հիսուսն ասաց, որ մենք երանելի կարգավիճակում ենք, երբ մեր սիրտը մաքուր է, ուրեմն, եկեք սահմանենք, թե ինչ ասել է

«մաքրություն»։ Այս բառի հետ որևէ երկիմաստություն չկա կապված։ Այն պարզապես նշանակում է անպիղծ կամ անարատ։ Մեկ այլ նյութի մեկ միլիոներորդ մասը որևէ այլ բանին ավելացնելով՝ ողջ նյութը դառնում է պիղծ։

Աստված ատում է ցանկացած տեսակի խառնուրդ, որն Աստվածաշնչում հաճախ հղում է արվում, որպես գարշանք, զգվելի բան։ Կարծում եմ, որ «զգվանք» բառն իմաստով ամենաուժեղն է, որ Աստված կիրառում է՝ իր նողկանքն ու զայրույթը ցույց տալու նպատակով։

Որոշ օրինակներ

Աստծու ժողովրդի զոհաբերությունները պետք է անպիղծ լինեն (միշտ երիտասարտ անարատ կենդանի)։ *«Տէրոջը՝ քու Աստուծոյդ մի՛ գոհեր արատ կամ որեւէ թերութիւն ունեցող արջառ մը կամ ոչխար մը, որովհետեւ ասիկա Տէրոջ՝ քու Աստուծոյդ առջեւ գարշելի է» (Բ Օրինաց 17:1):*

Արևմտյան հասարակություններում, ուր լայնորեն տարածված է «unisex» գաղափարը, քրիստոնյաներն իմաստուն կլինեն, եթե նկատեն այն, ինչ Աստված ասում է Բ Օրինաց 22:5-ում, որ սեռերը խառնելը գարշելի է Աստծու առջև, և որ դրանք պետք է մաքուր մնան։ *«Կնոջ մը վրայ այր մարդու հագուստ թող չըլլայ, ո՛չ ալ այր մարդ մը կնոջ հանդերձ հագնի. որովհետեւ ո՛վ որ ասոնք կ'ընէ, Տէրոջ՝ քու Աստուծոյդ առջեւ գարշելի է»։* Յովհաննես առաքյալն իր՝ Յայտնության գրքում նկարագրում է սուրբ քաղաքը, որ վայր է իջնում երկնքից դեպի նոր երկիր, և 21-րդ գլխի վերջին տողում եղած եզրահանգումը հետևյալն է. *«Հոն բնաւ պղծութիւն մը պիտի չմտնէ, ո՛չ ալ գարշութիւն գործող կամ սուտ խօսող մը»։*

Հարսնացուն անպիղծ է

Նոր երուսաղեմը՝ Քրիստոսի հարսնացուն, կատարելապես անպիղծ պիտի լինի, առանց որևէ բժի կամ արատի: Նոր երկնքում ու նոր երկրում, որ նկարագրված է Հովհաննեսի Հայտնության գրքի վերջին գլուխներում, ամեն մի խառնուրդ ու գարշանք կդադարի, քանզի պիտի տեղի ունենա մաքուրի ու պիղծի միջև վերջնական բաժանում: *«Ա՛ն որ անիրաւ է՝ դարձեալ թող անիրաւ ըլլայ, ա՛ն որ աղտոտ է՝ դարձեալ թող աղտոտ ըլլայ, ա՛ն որ արդար է՝ դարձեալ թող արդար ըլլայ, եւ ա՛ն որ սուրբ է՝ դարձեալ թող սուրբ ըլլայ» (Հայտնութիւն 22:11):*

Սուրբ Աստծու համար անգամ ամենափոքր արատը ամբողջը պիղծ է դարձնում: *«Քիչ մը խմորը ամբողջ զանգուածը կը խմորէ» (Գաղատացիս 5:9):*

Մենք բացահայտում ենք ինքներս մեզ

Պողոս առաքյալն ասում է Տիտոսին, որ *«Մաքուրներուն՝ ամէն բան մաքուր է. բայց պիղծերուն եւ անհավատներուն՝ ոչինչ մաքուր է, հապա անոնց միտքն ալ, խղճմտանքն ալ պղծուած են» (Տիտոս 1:15):*

Մենք բոլորս էլ գիտենք մեր փորձից, որ երբ մեկն անմեղ ակնարկ է անում, միշտ էլ մեկ այլ մարդ կա, որը երկակի իմաստ կտա ակնարկին՝ դրանով իսկ պղծելով ասվածը: Խորամանկ մարդը ոչ ոքի չի վստահի, քանզի նա բոլորին կդատի իր նենգ, պիղծ սրտի համեմատ:

Հակոբոս 3:8-18-ում ասվում է, որ մեր լեզուն հաճախ բացահայտում է, թե ինչ կա մեր սրտում: Այն երանությունը, որ մենք այժմ դիտարկում ենք, վերաբերում է սրտի մաքրությանը, մեր ներաշխարհի, գաղտնի մարդու մաքրությանը, այն է՝ մեր դրդապատճառները, գաղտնի գոռոզությունն ու փառասիրությունները:

Միգուցե, մի պարզ նկարագրություն մեզ օգնի տեսնելու գործնական օրինակները: Ենթադրենք, որ մի ծանոթ քրիստոնյա

անցնելիս է լինում մեր քաղաքով ու տեսնում ինձ հասարակաց տուն մտնելիս: Նա ինձ դատում է իր սեփական սրտի չափով՝ մաքուր, թե պիղծ: Նա կարող է գնալ տուն իր կնոջն ասել. «Յազիվ թե կարողանամ հավատալ տեսածիս: Ես միշտ հավատացել եմ, թե Մորիս Բարրաթն Աստծու մարդն է: Եթե ինձ մեկ այլ մարդ ասեր, որ նա հասարակաց տներ է գնում, ես չէի հավատա, բայց ես նրան սեփական աչքերովս տեսա»:

Բացահայտում

Նա բացահայտեց իր իսկ սիրտը, քանզի նա կարող էր նաև ասել իր կնոջը. «Ես իրոք հիանում եմ իմ եղբայր Մորիսով, նա, վստահաբար, շատ ավելի ուժեղ մարդ է, քան ես եմ: Ես տեսա նրան երեկ հասարակաց տուն մտնելիս: Նա, հավանաբար, գնում էր այնտեղ Յիսուսի սերն աղջիկների հետ կիսելու: Ես շատ կամաչեի կամ էլ շատ թույլ կլինեի դա անելու համար»: Այս մարդն ինձ իր սրտի համաձայն է դատել: Սա չի նշանակում, որ նա միամիտ է, որ իմ մասին լավն է մտածում, սակայն ինչու՞ նա պետք է վատը մտածի իմ մասին, երբ նա չգիտի, չի խոսել իմ կամ էլ հասարակաց տան աղջիկների հետ, թե արդյոք ինչու էս նման վայր ոտք կդնեի: Յիսուսն ասաց, որ երանելի են սրտով մաքուրները, այլ ոչ կասկածամիտները:

Սիրտ, ոչ թե միտք

Ես այս շարքի առաջին գրքում բացատրել եմ, թե իմ կարծիքով որն է մտքի ու սրտի միջև եղած տարբերությունը՝ ըստ Աստվածաշնչի, բայց թույլ տվեք հակիրճ ասել հետևյալը. երբ Աստվածաշունչը խոսում է մտքի մասին, այն ի նկատի ունի մեր գիտակից մտածողությունը: Ես գիտեմ, թե ինչ եմ մտածում, և կարող եմ այն ճշտել՝ Աստծու պահանջների համաձայն: Ինչպես Պողոս առաքյալն ասում է իր՝

Յոզովմեացիս 12:1-2-ում, մենք պետք է մեր միտքը նորացնենք, որպեսզի համաձայնեցվենք Աստծու կամքի հետ: Այս երանությունը չի ասում «երանի նրանց, որ մաքուր մարմին ունեն», կամ էլ՝ «երանի նրանց, որ մաքուր միտք ունեն»: Այլ այն ասում է «մաքուր **սիրտ**»: Աստված միշտ էլ ցանկանում է գործ ունենալ մեր սրտի հետ, իսկ սիրտը մեր ենթագիտակցական մտածողությունն է: Այն մեր «Սրբությունների սրբությունն» է: Հավատացած եմ, որ մեր մարմինը «արտաքին գավիթն» է, և մենք պետք է այն Աստծուն ներկայացնենք: Միտքը մեր «ներքին գավիթն» է և պետք է մաքրվի ու նորացվի, բայց մեր սիրտն այն վայրն է, ուր Աստված է կամենում ապրել:

Աստվածաշնչում, Երեմիա 17:9-ում նշվում է, որ մենք չգիտենք մեր սեփական սիրտը: Այն *խաբեքա է ու անուղղելի*: Այն մեր հոգու արմատն է ու ճիշտ կենտրոնը: Այստեղ է, ուր բնակվում են մեր հոգու գաղտնի բաները: *«Պահէ՛ սիրտդ ամբողջ զգուշութեամբ, քանի որ կեանքի աղբիւրները անկէ են» (Առակաց 4:23):*

Եսավն ատեց իր սրտում

Ծննդոց գրքում, այն բանից հետո, երբ Հակոբը խաբեց իր եղբայր Եսավին՝ ստանալով նրա բաժին օրհնությունը, մենք կարդում ենք, որ *«Եսաւ ատեց Յակոբը այն օրհնութեան համար՝ որով իր հայրը օրհնեց զայն. ու Եսաւ իր սիրտին մէջ ըսաւ. «Իմ հօրս սուգին օրերը մօտ են. յետոյ եղբայրս՝ Յակոբը պիտի սպաննեմ» (Ծննդոց 27:41):* Եսավը սա բարձրաձայն չասաց, այլ իր սիրտն էր խոսում՝ իր գաղտնի մտքերը: Հաճախ մեր գաղտնի մտքերը թաքնված են մեզանից: Չարմանալի է, թե ինչպես վավաշտությունը, խաբեությունը և զայրույթը կարող են մեր սրտում լինել, սակայն գիտակցորեն մենք դրանից տեղյակ չենք ու ուժեղ դիմադրություն ցույց կտանք, եթե կոչ արվի մեզ: Մեր սրտերն ի վիճակի են մեզ խաբելու, մոլորեցնելու, թե նրանք մաքուր են, իսկ դա չափազանց վտանգավոր է: Եթե ուսումնասիրենք Մատթեոսի ավետարանի 6-րդ գլուխը, ապա կհասկանանք, թե ինչու է Հիսուս

ուսուցանում մեկ այլ գաղտնի կյանքի մասին՝ որպես մեր խաբեբա սրտի գաղտնի կյանքի դեմ պայքարելու դեղամիջոց:

Աստված արդեն մեկ անգամ կործանել է երկիրը, որովհետև մարդկանց սրտերը լիովին անառակացել էին: *«Երբ Տէրը տեսաւ թէ մարդոց չարութիւնը երկրի վրայ կը շատնար, եւ անոնց սիրտին մտածումներուն բոլոր նպատակները միայն չար էին ամէն ատեն...» (Մենդոց 6:5):* Հավատացած եմ, որ մենք շատ մոտ ենք այն ժամանակվան, երբ մարդկանց սրտերի չարութիւնը կրկին դառնում է լիովին անառակ, և Աստծու դատաստանը չի խնայի երկիրը, սակայն այս անգամ այն պիտի ավերվի կրակով: Արժե նայել Ճննդոց գրքի հաջորդ տողին, քանզի այն մեզ ցույց է տալիս, որ Աստծու մաքուր սիրտը վշտանում է, երբ նման իրավիճակ է առկա: *«Տէրը երկրի վրայ մարդը ստեղծելուն զղջաց, ու իր սիրտին մէջ վշտացաւ» (տող 6):*

Խոստումը

Այդ երանության խոստումը հիասքանչ է: Այն խոստում է, որ մենք կտեսնենք Աստծուն՝ մեր Հորը: Մենք գիտենք, որ մի օր մեր համբարձված կատարյալ հոգևոր մարմնով պիտի տեսնենք Աստծուն, բայց քրիստոնյայի համար դեռ բավական չէ սպասել փառավոր անմեղ մարմնին, որպեսզի մաքուր սիրտ ունենալ: Մենք պետք է Աստծուն խնդրենք բացահայտել ու փոխել մեր սրտերն այս ներկայիս ժամանակում: Պողոս առաքյալը կորնթացիների եկեղեցուն ասում է. *«Որովհետեւ նախանձախնդիր եմ ձեզի հանդէպ՝ Աստուծոյ նախանձախնդրութեամբ. քանի որ մէկ ամուսինի նշանեցի ձեզ, որպէսզի Քրիստոսի՝ ներկայացնեմ ձեզ՝ մաքրակենցաղ կոյսի մը պէս» (Բ Կորնթացիս 11:2):* Հիսուսը վերադանում է մաքուր սրտով հարսնացուի համար, և մեր պատասխանատվութիւնն է խնդրել Աստծուն բացահայտել մեր սիրտը, որպեսզի մենք կարողանանք այնուհետև խնդրել նրան փոխել մեզ: Աստված չի կարող գործ ունենալ մեր սրտում

որևէ բանի հետ, քանի դեռ մենք չենք ընդունել, որ այն մեր սրտում է, և այնուհետև չենք խոստովանել այն:

Դավիթ. Աստծու սրտին համաձայն մարդ

Երբ Նաթանն ասաց Դավթին, «դու ես այդ մարդը», Դավթի սիրտը բացահայտ դառավ: Նա իր սրտում արդարացրել էր իր մեղքը: Նրա մեղքը ծածկված էր, ոչ թե Աստծու կողմից, այլ իր իսկ խաբեբա սրտի կողմից: Պատկերացնում եմ, թե որքան կործանված նա պետք է որ զգար իրեն, երբ բացահայտվեց՝ որպես շնացող (դավաճան) ու մարդասպան՝ բազում տարիների հանգիստ խղճից հետո: Դավիթը սիրում էր Աստծուն և անմիջապես հասկացավ, որ եթե իր սրտում թաքցված է եղել դավաճանությունն ու սպանությունը, ապա այլ բաներ նույնպես կարող էին դարան մտած լինել դրա մուկ խորքերում: Նրա աղոթքը Սաղմոս 139:23-24-ում ցույց է տալիս մեզ, թե ինչու՞ էր Աստված նրան այդքան սիրել ու ընտրել: *«Հետազօտէ՛ գիս, ո՛վ Աստուած, ու ճանաչցի՛ր իմ սիրտս. քննէ՛ գիս, ու գիտցի՛ր իմ գաղափարներս. նայէ՛ թէ արդեօք չար ճամբայի մէջ՞ եմ...»*: Մեր խնդրանքը պետք է Աստծուն ուղղված լինի, քանզի մենք չենք կարող մեր սիրտը փոխել: Մենք պետք է Աստծուն խնդրենք բացահայտել մեզ, ինչպես նա արեց Դավթի հետ, և այնուհետև մենք կարող ենք աղոթել նույն աղոթքը, ինչպես Դավիթը, որպեսզի լինենք Աստծու սրտին համաձայն մարդ:

Աստված սրտին է նայում, բայց իմ դիտողությունն այն է, որ եկեղեցին, կարծես թե, ավելի շատ է հետաքրքրված թվերի ու շինությունների արտաքին տեսքով, ձեռքբերումների ու արտաքին բարոյականության, քան իրենց սրտերը մաքրելով: Պողոս առաքյալն իր՝ Հռոմեացիս 2:28-29-ում ասում է. *«Որովհետև Հրեայ չէ ան՝ որ երեսոյթով է, եւ թղպատութիւն չէ ան՝ որ երեսոյթով է, մարմինով: Հապա Հրեայ է ան՝ որ ծածուկ է, ու իսկական թղպատութիւնը՝ սիրտինն է, հոգիով, եւ ո՛չ թէ գիրով. ու անոր գովեստը ո՛չ թէ մարդոցմէ է, հապա՝ Աստուծմէ»*:

Ինչպես երանությունների բոլոր խոստումները, իրականացումը միայն կատարյալ կլինի, երբ Քրիստոսը թագավորի երկրի վրա, բայց մենք բոլոր խոստումների որոշ մասն ստանում ենք այս ներկա դարում: Թույլ տվեք ձեզ հետ կիսել երեք ոլորտ, որտեղ սրտով մաքուրները կարող են տեսնել Աստծուն՝ պրակտիկ, գործնական կերպով, քանի դեռ սպասում ենք թագավորության գալստին:

1. Մենք կարող ենք Աստծուն տեսնել մեր հանգամանքներում

Չարմացած եմ, թե քանի-քանի քրիստոնյաներ իրենց հանգամանքները երկու կարգի են բաժանում: Նրանք հավատում են, որ լավ հանգամանքները գալիս են Աստծուց, իսկ վատերը՝ սատանայից: Բայց որպես քրիստոնյաներ՝ մենք պետք է որ մեր ողջ կյանքն Աստծուն տված լինեինք, ուրեմն, Աստված է մեր տերը, այլ ոչ սատանան, ու հետևաբար բոլոր հանգամանքները գալիս են Աստծու ձեռքից: Սրտով մաքուրները միայն Աստծուն են տեսնում բոլոր հանգամանքներում:

Երբ քրիստոնյան ըմբռնում է այս մտածելակերպը, դա հաճախ մի վատ հանգամանքից հետո է տեղի ունենում, երբ նա հասկանում է, որ Աստված էր ամեն բան առաջնորդում, ու նրանք, իրոք, վախենալու ոչինչ չունեին. բայց հասունացման հետ մեկտեղ մենք կարող ենք սովորել ուրախանալ թե՛ լավ և թե՛ վատ հանգամանքներում, որովհետև *բոլոր բաները, լավ կամ վատ, բարու գործակից են նրանց համար, որ Աստծուն են սիրում, և ոչինչ չի կարող զատել մեզ Աստծու սիրուց, անգամ հրեշտակները կամ դևերը, կյանքը կամ մահը* (Յոզվմեացիս 8:28-39):

Ահա սա ի նկատի ունի Պողոս առաքյալը, երբ նա ասում էր, որ մենք *ավելի, քան հաղթող ենք*. սա չի նշանակում, որ մենք միայն լավ հանգամանքների ենք հանդիպում, այլ որ մենք հաղթանակ ենք տանում բոլոր հանգամանքներում, որովհետև Աստծուն ենք տեսնում դրանցում, այլ ոչ մարդկանց կամ սատանային:

«Տէրո՛ջ վստահէ ամբողջ սիրտովդ, ու քու խելքիդ մի՛ ապաւինիր. Զա՛յն ճանաչցիր քու բոլոր ճամբաներուդ մէջ, եւ ինք պիտի շտկէ քու ուղիներդ»: (Առակաց 3:5-6):

«Ամէն բանի մէջ շնորհակալ եղէք, որովհետեւ ա՛յս է Աստուծոյ կամբը ձեզի հանդէպ՝ Քրիստոս Յիսուսով» (Ա. Թեսաղոնիկեցիս 5:18):

2. Մենք կարող ենք Աստծուն տեսնել մարդկանց մեջ

Ահա մի պարզ նկարագրութիւն: Ենթադրենք, թե ես քայլում եմ իմ քաղաքով որդուս՝ Նաթանի հետ: Կեսօր է, և մենք տեսնում ենք, թե ինչպէս է մի մարդ պանդոկից դուրս գալիս՝ կատարելապէս հարբած: Նա ործկում է ողջ մայթով մեկ հենց մեր առաջ, իսկ հետո ընկնում իր իսկ փսխածի մեջ: Սրանք կարելի է դիտարկել, որպէս վատ հանգամանքներ, և ինձ համար, որպէս հայր, հեշտ կլիներ բարկանալ ու ասել. «Պատկերացրե՛ք, խնդրեմ, կեսօրին՝ հարբած հասարակական վայրում և երեխաների ներկայութեամբ: Ինչու՞ նա չի կարող ավելի լավ ինքնակառավարում ունենալ»:

Եթե ես մաքուր սիրտ ունենայի, ապա կտեսնեի Աստծուն այդ հանգամանքներում ու բոլորովին այլ վերաբերմունք կունենայի: Միգուցե ես կասեյի. «Գիտե՞ս, Նաթա՛ն, այս մարդն Աստծու կերպարի համաձայն է ստեղծված, և Աստված նրանից կարող է հիանալի քրիստոնյա դարձնել: Նա մոլորված է: Նա երբեք էլ մտադրված չի եղել հարբեցող դառնալու: Կարող եմ գրագ գալ, որ նա ցանկացել է քեզ պէս երածիշտ դառնալ, կամ միգուցե գնացքի վարորդ, կամ էլ տիեզերագնաց, երբ նա քո տարիքին է եղել: Արի տուն գնանք ու աղոթենք, որ Աստված նրան օգնի իրագործելու իր պոտենցիալն ու լինելու Աստծու և մեր ընտանիքի մի մասը»: Մեր սիրտը միշտ էլ որոշում է, թե մենք ինչպէս ենք դատում ու վերաբերվում հանգամանքներին և մարդկանց:

3. Մենք կարող ենք Աստծուն տեսնել իր արարչությունում

Եթե ցանկանում ես մարդուն լավ ճանաչել, չկա ավելի լավ ճանապարհ, քան նրա տուն գնալն ու նրան՝ իր սեփական միջավայրում տեսնելը: Մեր տները մեր իսկ բնավորության արտացոլումն են: Ճատ մարդիկ հասարակությունում խելացի ու ազդեցիկ են ներկայանում, սակայն իրենց սեփական տունը կարող է փլատակների նմանվել: Թե ինչպես են նրանք հարդարում իրենց տունն ու պահպանում իրենց այգին, ավելին կասի ձեզ այդ մարդու իրական էության մասին. այդպես է նաև Աստծու արարչությունում, բնությունում: Այն նրա բնավորության արտացոլումն է, և նրա բոլոր սկզբունքներն արտահայտված են դրանում: Աստծու էությունն իր ողջ արարած բնության մեջ է, ուրեմն, եթե մենք մաքուր սիրտ ունենք, ապա մենք միշտ էլ Աստծուն կտեսնենք նրա արարչությունում:

Ավելի կանաչ խոտ

Վերջերս մի մարդու հանդիպեցի, ով ինձ ասաց, որ քրիստոնյա դառնալուց հետո նա հանկարծակի սկսում է հետաքրքրվել թռչուններով: Նա դուրս է գալիս ու գնում թռչունների մասին գիրք: Նա երբեք որևէ հետաքրքրություն չէր ունեցել թռչունների նկատմամբ իր դարձից առաջ, բայց այժմ Աստծու արարած բնությունը հետաքրքրում էր նրան: Ճատ մարդիկ վկայում են, որ երբ Աստված գտավ նրան, երկինքն ավելի կապույտ սկսեց թվալ, իսկ խոտն ավելի կանաչ՝ որպես այն փաստի վկայություն, որ երբ Աստված փոխում է մեր սիրտը, մենք տեսնում ենք Աստծուն մեր կյանքի ամեն մի ոլորտում ու հանգամանքում:

Ես այս գլուխն ավարտում եմ Պողոս առաքյալի՝ Տիմոթեոսին ուղղված խոսքերով.

«Իսկ պատուերին վախճանը սերն է՝ բխած սուրբ սիրտէ, բարի խղճմտանքէ եւ անկեղծ հաւատքէ» (Ա Տիմոթեոս 1:5): Զավատացած եմ,

որ սերը կարող է միայն բխել սուրբ, մաքուր սրտից: Խղճահարությունը կամ կարեկցանքը կարող են թաքնված պատճառներ ու գաղտնի տենչանքներ ունենալ: Սիրո բանալին ոչ թե մեր զգացմունքներն են, այն է՝ մեր հույզերը, այլ մեր սրտերը, իսկ երբ մեր սրտերը մաքուր են, Աստված մեզ համարում է արտոնյալ ու երանելի մարդիկ: Մենք այս երանության խոստումն այժմ պիտի ստանանք մասամբ, և ամբողջությամբ՝ երբ տեսնենք նրան, *երբ լինենք նրա պես* (Ա Յովհաննես 3:2):



ԳԼՈՒԽ 10

Երանություն յոթերորդ Խաղաղարարություն

*Երանի՛ր խաղաղարարներուն, որովհետեւ անո՛նք
Աստուծոյ որդիներ պիտի կոչուին:*

Մատթեոս 5:9

*Ո՞վ է այն մարդը՝ որ ապրիլ կը բաղձայ,
Ու չատ օրեր կը սիրէ՝ բարիք տեսնելու համար:
Ջե՛րժ պահէ քու լեզուդ չարախօսութենէ,
Եւ չրթունքդ՝ խարէութիւն խօսելէ.
Չարութենէ հեռացի՛ր ու բարի՛ք գործէ,
Խաղաղաութիւն փնտո՛ւ եւ անո՛ր հետամուտ
եղիր:*

Սաղմոս 34:12-14

*Պարկե՛ չտը դիտէ եւ ուղիղի՛ն նայէ.
Որովհետեւ խաղաղարար մարդը բարի վախճան
պիտի ունենայ:*

Սաղմոս 37:37

Թույլ տվեք նորից նշել, որ երանություններում գոյություն ունի պրոգրեսիա: Վերջինը սրտի մաքրությունն է: Խաբեբա, պիղծ սիրտ ունեցող մարդը երբեք խաղաղություն չի ունենա, որովհետև իրական խաղաղությունը սրտով է պայմանավորված և կախված չէ հանգամանքներից: Կարևոր է հասկանալ, որ Հիսուսն ասում է, որ **խաղաղարարներն** են երանելի վիճակում: Նա չի ասում. «երանի

խաղաղներին»: Հանգուցյալը խաղաղ է, և մենք հաճախ գերեզմանաքարին գրում ենք R.I.P.` հոգուդ խաղաղություն: Հիսուսը չի խոսում հանդարտության մասին, որը պասիվ է, ոչ ակտիվ: Խաղաղություն **անելը** գործողություն ու խթան է ենթադրում: Ոչ էլ Հիսուսն ասում է. «Երանի **խաղաղապահներին**», որովհետև սա հետևյալ պնդման մեկ այլ արտահայտման ձև է. «Երանի նրանց, որ փոխզիջման են գնում խաղաղությունը պահելու համար»: «Խաղաղապահությունը» միշտ էլ Աստծու դեմ թշնամություն է ու նրա երկայանը հակառակ: Աստված միշտ դեմ առ դեմ է բերում մեր սխալները, մեղքն ու անտարբերությունը, որպեսզի հաստատի իրական խաղաղություն: Ուրեմն, հավատացած եմ, որ խաղաղարարությունն, իրականում, դրական և ակտիվ հատկություն է:

Չկա խաղաղություն աշխարհի հետ

Եթե մենք երանելի վիճակում ենք, երբ **խաղաղություն ենք անում**, ապա ու՞մ հետ ենք մենք խաղաղություն հաստատում: Արդյոք մենք պետք է խաղաղություն հաստատենք այս աշխարհի հետ: Հրեշտակները Հիսուսի ծննդյանը երգում էին. *«...երկրի վրայ՝ խաղաղութիւն, մարդոց մէջ՝ բարեացակամութիւն» (Ղուկաս 2:14)*: Արդյոք Հիսուսը չէր եկել երկրի վրա խաղաղություն բերելու համար: Դե, եթե դա նրա առաջին գալստյան նպատակն էր, ապա նա անհաջողություն է կրել, քանզի աշխարհը խաղաղություն չի ունեցել այն բանից ի վեր, ինչ մարդն ընկել է մեղքով, և այս առումով ոչինչ չի փոխել, Հիսուսի ծնունդից կամ նրա մահվանից հետո:

Քրիստոնյայի համար երբեք գոյություն չի ունենա այս աշխարհի հետ խաղաղություն հաստատելու որևէ ուղի, քանզի այս աշխարհի աստվածը Սատանան է, իսկ քանի դեռ նա է իշխում, աշխարհը միշտ էլ կլինի իրական եկեղեցու թշնամին: *«Մի՛ սիրէք աշխարհը, ո՛չ ալ ինչ որ աշխարհի մէջ է: Եթէ մէկը կը սիրէ աշխարհը, Հօրը սէրը չկայ իր մէջ...» (Ա. Հովհաննես 2:15-16)*: Այս ներկայիս աշխարհը ղեկավարվում է

չարութեամբ: *«Ամբարիչտները խաղաղութիւն պիտի չունենան», կը յայտարարէ իմ Աստուածս (Եսայիա 57:21)¹:*

Մեծ պատգամը

Մատթեոսի ավետարանի 10-րդ գլխում մենք կարդում ենք, որ Յիսուսը տասներկու առաքյալներին աշխարհով մեկ է ուղարկում՝ բարի լուրն ավետելու, այլ ոչ թե աշխարհի հետ խաղաղութիւն հաստատելու համար: Այս երկուսը հակադրութիւններ են ու չեն կարող միասին գոյութիւն ունենալ: Եթե մենք իրական բարի լուրն ենք քարոզում, ապա դա ընդդիմութիւն կառաջացնի, իսկ եթե մենք քարոզենք այս աշխարհի հետ խաղաղութիւն, ապա մենք մեկ այլ բարի լուր ենք քարոզում: Տող 16-ում ասվում է. *«Ահա՛ կը դրկեմ ձեզ իբր ոչխարներ՝ գայլերու մէջ...»*, որն ամենևին էլ խաղաղ չի հնչում: Ջոն Ուեսլին սկսում էր անհանգստանալ, երբ աշխարհը նրան չէր ընդդիմանում: Նա ասում էր. «Մի՞թե խաչի անպատվանքը դադարել է»: Այս նույն գլխի տող 34-ն ասում է. *«Մի՛ կարծէք, թէ ես եկայ խաղաղութիւն ձգելու երկրի վրայ: Ես եկայ ո՛չ թէ խաղաղութիւն ձգելու, հապա՛ սուր»:* Աստծու խոսքը, եթե ճշմարտութեամբ քարոզվի, միշտ էլ մի սուր է, որ բաժանում է: Մենք երբեք չպետք է ախոյան լինենք և պետք է մեզանից կախված ամեն բան անենք խաղաղութեամբ ապրելու համար, սակայն փաստն է այն, որ աշխարհն ու իրական քրիստոնյաները միշտ էլ անհամաձայնութիւն պիտի ունենան: Պողոս առաքյալն իր՝ Յռովմեացիս 12:18-ում ասում է. *«Որչափ կարելի է ձեզի՝ խաղաղութիւն պահեցէք ամէն մարդու հետ»:* Երբեմն դա հնարավոր չէ:

Հավատացած եմ, որ գոյութիւն ունեն երեք ոլորտներ, ուր մենք կարող ենք և պետք է խաղաղութիւն հաստատենք, և որտեղ *Աստծու որդիները կոչվելու* օրհնութիւնը պիտի հետևի:

1. Մենք կարող ենք խաղաղություն անել Աստծու հետ

Պողոս առաքյալը հետևյալն է հիշեցնում մեզ իր` Կողոսացիս 1:20-22-ում. *«...եւ անով հաշտեցնէ իրեն հետ բոլորը, թէ՛ երկրի վրայ ու թէ՛ երկինքի մէջ եղողները, խաղաղութիւն ընելով անոր արինով, որ թափուեցաւ խաչին վրայ: Եւ ձեզ ալ, որ ժամանակին ուժացած ու ձեր միտքով թշնամիներ էիք՝ չար գործերով, հիմա հաշտեցուց անոր բուն մարմինով՝ մահուան միջոցով, որպէսզի անոր առջեւ սուրբ, անարատ եւ անմեղադրելի ներկայացնէ ձեզ...»:*

Յենց սա էլ քրիստոնյայի կյանքի ողջ հիմքն է, որ մենք այլևս թշնամի չենք Աստծու հետ, այլ, իրականում, որդեգրված ենք նրա ընտանիքում ու մտերիմ և անձնական հարաբերություն ունենք՝ Քրիստոսի արյան միջոցով: Մենք այժմ **խաղաղություն ենք հաստատել** Աստծու հետ: Պողոս առաքյալի` Յոմեացիս 5:1-ում ասվում է. *«Ուրեմն մենք՝ հաւատքով արդարացված ըլլալով՝ խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով»:*

Բոլոր քրիստոնյաներն Աստծու հետ հաշտեցվել են իրենց հարաբերության հենց սկզբում, բայց, ինչպես և ցանկացած այլ հարաբերություն, հեշտ է կորցնել այդ խաղաղությունը, ուրեմն, մենք պետք է անդադար մեր սրտերը փնտրենք ու տեսնենք, թե արդյոք կա որևէ բան մեր ու Աստծու միջև: Եթե մենք կորցրել ենք Աստծու հետ մեր խաղաղությունը, հանգստությունը, ապա մենք պետք է կրկին **խաղաղություն հաստատենք**՝ մեր սխալները խոստովանելով:

Որպես քրիստոնյաներ մենք հաշվետու ենք այն ամենի համար, ինչ ստացել ենք, և այժմ մեր պարտքն է կիսելու այս հաշտեցման հոգևոր սպասավորությունը: Պողոս առաքյալը կորնթացի քրիստոնյաներին ասում է. *«Եւ ամէն բան Աստուծմէ է, որ հաշտեցուց մեզ իրեն հետ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով, ու տուաւ մեզի հաշտութեան սպասարկութիւնը» (Բ Կորնթացիս 5:18):*

2. Մենք կարող ենք խաղաղություն անել քրիստոնյաների հետ

Քրիստոսի իրական մարմինը պառակտված չէ: Այն միշտ էլ մյուս անդամների հետ խաղաղության մեջ է: Այն երբեք պառակտված չի եղել և երբեք էլ չի լինի, քանզի Քրիստոսը պառակտված չէ: Այնուամենայնիվ, արտաքին տեսանելի եկեղեցին հաճախ պառակտված է և անմիասնական՝ մարմնի այլ մասերի հետ, բայց սա միայն ապացուցում է, որ արտաքին եկեղեցին ոչ միշտ է իրական եկեղեցին: Հիսուսն ասաց. *«Ասո՛վ բոլորը պիտի գիտնան թէ իմ աշակերտներս էք (նրա իրական մարմինը), եթէ սէր ունենաք իրարու հանդէպ»:* Սերը միշտ էլ խաղաղություն կբերի իրական քրիստոնյաների միջև, բայց եսասիրությունը, որը սիրո հակառակն է, միշտ էլ պառակտություն ու անմիասնականություն կբերի:

«Կ'աղաչե՛մ ձեզի, եղբայրներ՛ր, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի անունով, որ դուք բոլորդ ունենաք նո՛յն խօսքը, ու պառակտումներ չըլլան ձեր մէջ. հապա հաստատուած ըլլաք նո՛յն միտքով ու նո՛յն դատումով: Որովհետեւ, եղբայրներ՛ս, ձեր մասին բացայայտուեցաւ ինծի Քղուէի տունէն եղողներէն՝ թէ կոիւներ կան ձեր մէջ: Հիմա սա՛ կ'ըսեմ ձեզի. իբր թէ ձեզմէ իւրաքանչիւրը կ'ըսէ. «Ես Պողոսեան եմ», կամ. «Ես Ապողոսեան եմ», կամ. «Ես Կեփասեան եմ», կամ. «Ես Քրիստոսեան եմ»: Միթէ Քրիստոս բաժանուած է, միթէ Պողո՞ս խաչուեցաւ ձեզի համար, կամ թէ Պողոսի՞ անունով մկրտուեցաք» (Ա Կորնթացիս 1:10-13):

Եղե՛ք խաղաղարարներ

Պողոս առաքյալը Հռոմի եկեղեցուն խրախուսում է *«Ուրեմն հետամո՛ւտ ըլլանք այն բաներուն՝ որոնք խաղաղութիւն կը հայթայթեն, եւ այն բաներուն՝ որոնցմով շինութիւն կ'ըլլայ իրարու» (Հռովմեացիս 14:19)*. իսկ Ա Կորնթացիս 14:33-ում Պողոս առաքյալն ասում է. *«...քանի որ Աստուած խառնակութեան Աստուած չէ, հապա՝ խաղաղութեան,*

ինչպէս սուրբերուն բոլոր եկեղեցիներուն մէջ»: Որպէս քրիստոնյաներ մենք արդարացում չունենք Քրիստոսի Մարմնում որևէ անմիասնականության գոյության համար: Իհարկէ, կան շատերը, որ պնդում են, թէ Մարմինն են, բայց իրականում չեն, և մենք պետք է մոլախոտը ցորենից տարբերենք: Մենք երբեք չենք կարող խաղաղ լինել կամ խաղաղություն հաստատել այս մարդկանց հետ, որովհետև նրանք, իրականում, կեղծ եկեղեցուն են պատկանում: Հիսուսն ասաց փարիսեցիներին, ովքեր պնդում էին, թէ Աստված իրենց հայրն է, որ իրականում նրանց հայրը սատանան էր (Յովհաննես 8:44):

Մատթեոսի ավետարանում բերված Լեռան քարոզի 6-7-րդ գլուխները մեզ հստակորեն ցույց են տալիս, թէ ինչպէս կարող ենք տարբերել կեղծավորությունը, կեղծ արդարությունն ու սուտ մարգարեներին, և ես այս առարկան կդիտարկեմ այս շարքի հաջորդող գրքերում:

3. Մենք կարող ենք խաղաղություն անել հրեաների հետ

Նախքան Հիսուսի մահը հեթանոս ժողովուրդներն Աստծու ընտանիքից դուրս էին, և հրեաների ու հեթանոսների միջև գոյություն ունեւորւմից ստեղծված բաժանում, պառակտում: Պողոս առաքյալի՝ Եփեսացիներին ուղղված նամակի երկրորդ գլուխը մեզ պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ այդպէս էր ու որ այժմ հրեաներն ու հեթանոսները հաշտեցվել են ու դարձել մեկ մարդ, ու **մեջտեղի անջատող պատը** հեռացվել է:

«...այդ ատեն դուք առանց Քրիստոսի էիք, ուճացած ըլլալով Իսրայէլի հասարակութենէն, և օտարացած՝ խոստումին ուխտերէն. ո՛չ յոյս ունէիք, ո՛չ ալ Աստուած՝ աշխարհի մէջ: Իսկ հիմա՝ Քրիստոս Յիսուսով՝ դուք որ ժամանակին հեռաւոր էիք, մերձաւոր եղաք Քրիստոսի արիւնով: Որովհետեւ ա՛ն է մեր խաղաղութիւնը. ինք երկուքը՝ մէկ ըրաւ, ու քակեց մէջտեղի անջատող պատը, իր մարմինին մէջ ոչնչացնելով իրարու միջեւ եղած թշնամութիւնը, այսինքն՝ հրամաններով եղած

պատուիրաններուն Օրէնքը. որպէսզի իրմով այդ երկուքէն ստեղծէ նոր մարդ մը՝ այսպէս խաղաղութիւն ընելով, ու երկուքն ալ հաշտեցնէ Աստուծոյ հետ մէկ մարմինի մէջ՝ խաչին միջոցով: Անով սպաննեց Թշնամութիւնը, եւ եկաւ խաղաղութիւն աւետեց ձեզի՝ որ հեռաւոր էիք (հեթանոսներ), ու անոնց՝ որ մերձաւոր էին (հրեաներ): Քանի որ անոր միջոցով մենք բոլորս ալ արտօնութիւն ունինք մօտենալու Հօրը՝ մէկ Հօգիով: Ուրեմն հիմա դուք այլեւս օտարականներ ու պանդուխտներ չէք, հապա սուրբերուն քաղաքակիցները, եւ Աստուծոյ ընտանիքը...» (Եփեսացիս 2:12-19):

Նրանք, ովքեր ազգութեամբ հրեա են և համարվում են Աբրահամի զավակները, ընդունելով Հիսուսին, որպէս իրենց անձնական փրկիչ, դառնում են նրա հարսնացուն, և այն հեթանոսները, որոնք ընդունել են Հիսուսին, որպէս փրկիչ, նույնպէս դառնում են Աբրահամի ճշմարիտ զավակները (Գաղատացիս 3:7): Երկուսն էլ հավատքով են գալիս ու արդարացված են Աստծու կողմից և այժմ մէկ են Քրիստոսով: Կոչել մեկին «մեսիանիկ հրեա» իրականում բառի սխալ գործածությունն է ու մոլորեցնող, քանզի դարձի եկած հեթանոսն իրեն չի կոչի «մեսիանիկ հեթանոս»: Երկուսն էլ դառնում են Քրիստոսի հարսնացուն, իսկ ազգությունը, լինի ֆրանսիացի, անգլիացի կամ հրեա, որևէ ազդեցություն չունի մեր փրկության վրա: *Մենք ոչ մեկին մարմնով չենք ճանաչում:*

Խաղաղություն՝ ընդհարման միջոցով

Ես արդէն նշել եմ, որ խաղաղարարությունը ակտիվ ու դրական գործողությունն է: Այժմ ես մի քայլ առաջ եմ գնալու՝ ասելով, որ այն, իրականում ազդեցիկ վերաբերմունք է: Թույլ տվէք բացատրել այս պնդումը: Խաղաղությունը կարող է գալ միայն ընդհարման միջոցով: Կոմպրոմիսը, փոխզիջումը միայն կարծեցյալ խաղաղությունն է բերում, բայց այն տևական չէ: Ահա թե ինչու, քաղաքականությունը չի կարող աշխարհում խաղաղություն հաստատել, որովհետև

քաղաքականությունը փոխզիջման արվեստ է: Ցանկացած բան, որ խախտում է Աստծու կամ մեր հավատացյալ ընկերոջ հետ ունեցած մեր խաղաղությունը պետք է դեմ առ դեմ բերվի ու վերացվի, որպեսզի մեր սրտերում խաղաղությունն իշխի:

Աստծու հետ մեր խաղաղությունը ձեռք է բերվել միայն ընդհարման ու արյունահեղության միջոցով, այն է՝ Աստծու Որդու մահվան: Միշտ էլ խաղաղության գին գոյություն ունի: Փոխզիջումն առանց ընդհարման խաղաղությունն հաստատելու արվեստ է, սակայն այն երբեք չի գործի: Փոխզիջումը խառնուրդի մի տեսակ է, իսկ դա գարշանք ու անպատվանք է սուրբ Աստծու համար:

Խաղաղությունն երկրի վրա

Մի օր ապագայում Յիսուսը նորից երկիր կգա ու, վերջապես, խաղաղություն կբերի, այն բանից հետո, ինչ մարդն անհաջող փորձել է 6000 տարի շարունակ դա անել: Ինչպե՞ս նա կկատարի դա: Պատերազմի միջոցով. Նա կգա երկնային բանակով, և ռազմական հեղաշրջում տեղի կունենա, արյունահեղություն: Միայն այս ընդհարումը երկրի վրա խաղաղություն կբերի: Միայն երբ այս աշխարհի թագավորությունները դառնան մեր Տիրոջ ու նրա Քրիստոսինը՝ պատերազմի միջոցով, սա ավարտված կլինի:

«Ապա տեսայ երկինքը բացուած, եւ ահա՛ ճերմակ ձի մը կար: Անոր վրայ հեծնողը կը կոչուի Հաւատարիմ ու ճշմարիտ, եւ արդարութեամբ կը դատէ ու կը պատերազմի: Անոր աչքերը կրակի բոցի պէս էին, գլուխին վրայ շատ թագեր կային, եւ ունէր գրուած անուն մը՝ որ ո՛չ մէկը գիտէր, հապա միայն ինք: Հագած էր արիւնի մէջ թաթախուած հանդերձ մը: Անոր անունը կը կոչուի՝ «Աստուծոյ Խօսքը»: Երկինքի մէջ եզոզ գօրքերը կը հետեւէին անոր՝ ճերմակ ձիերով, ճերմակ ու մաքուր բեհեզներ հագած: Անոր բերանէն կ'ելլէր սրած թուր մը, որպէսզի անով զարնէ ազգերը: Ի՛նք պիտի հովուէ զանոնք՝ երկաթէ

գաւազանով, եւ ինք պիտի կոխէ Ամենակալ Աստուծոյ զայրագին բարկութեան գինիին հնձանը» (Հայտնություն 19:11-15):

Պատերազմ՝ Խաղաղություն Բերելու համար

«Եւ տեսայ գազանը, ու երկրի թագաւորները եւ անոնց զօրքերը, հաւաքուած պատերազմելու ձիուն վրայ հեծնողին հետ, ու անոր զօրքերուն հետ: Գազանը բռնուեալ, եւ անոր հետ՝ սուտ մարգարէն, որ անոր առջեւ ըրաւ նշաններ՝ որոնցմով մոլորեցուց գազանին զրոշմը ընդունողներն ու անոր պատկերին երկրպագողները: Երկուքն ալ ողջ-ողջ նետուեցան ծծումբով վառող կրակի լիճը: Իսկ մնացողները սպաննուեցան ձիուն վրայ հեծնողին թուրէն, որ կ'ելլէր անոր բերանէն. ու բոլոր թռչունները կ'չտացան անոնց մարմիններէն:

Յետոյ տեսայ հրեշտակ մը՝ որ կ'իջնէր երկինքէն. իր ձեռքին մէջ ունէր անդունդի բանալին եւ մեծ շղթայ մը: Ան բռնեց վիշապը, այն նախկին օձը՝ որ Չարախօսն ու Սատանան է, եւ կապեց զայն հազար տարի» (Հայտնություն 19:19-21-20:1-2):

Խաղաղության իշխանը

Եսայիի մարգարեութիւնում մի գրութիւն կա, որ հաճախ կարդում են Սուրբ Ծննդյան ժամանակ, երբ քրիստոնյաները հիշում են Քրիստոսի առաջին գալուստը, սակայն իրականում այս տողերը բոլորը վերաբերում են նրա երկրորդ գալստյանը՝ որպէս թագաւոր ու ռազմիկ՝ պատերազմելու:

«Արդարեւ չաչինով պատերազմողներուն բոլոր գէնքերը և արինաթաթախ հանդերձները պիտի այրին ու կրակի ճարակ ըլլան: Որովհետեւ մեզի գաւակ մը ծնաւ, մեզի որդի մը տրուեցաւ, և գերիշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ. անոր անունը պիտի կոչուի. "Սքանչելի խորհրդական, Հզօր Աստուած, Յավերժութեան հայր,

Խաղաղութեան իշխան՝ Անոր գերիշխանութեան մեծնալուն ու խաղաղութեան սահման պիտի չըլլայ՝ Դաւիթի գահին վրայ եւ անոր թագաւորութեան վրայ, որպէսզի զայն իրաւունքով ու արդարութեամբ հաստատէ եւ ամրապնդէ՝ հիմա և յաւիտեան: Զօրքերու Տէրոջ նախանձախնդրութիւնը պիտի կատարէ ասիկա» (Եսայիա 9:5-7):

Սա ամենին էլ նման չէ «քնքուշ Յիսուսին՝ հեզահամբույր ու մեղմ», բայց սա միևնույն Յիսուսն է, որ գալիս է երկրի վրա խաղաղութիւն հաստատելու՝ միակ հնարավոր ճանապարհով, այն է՝ ուժեղ մարդուն կապելով և իր թշնամիներին դեմ առ դեմ դուրս գալով ու ոչնչացնելով: Սա կհանգեցնի հազարամյա խաղաղ թագավորմանը: Յիսուսը առավելագույն խաղաղարարն է:

Խաղաղութիւն հավիտենականութիւնում

Նոր երկնքում ու նոր երկրում մենք հավիտենական խաղաղութիւն կունենանք, որովհետև այս աշխարհի աստվածը՝ Սատանան, ոչ միայն կապված կլինի, այլ նետված կլինի կրակի լիճը, որտեղից վերադարձ չկա: *«Իսկ Զարաթուստը՝ որ մոլորեցուց զանոնք, նետուեցաւ կրակի եւ ծծումբի լիճին մէջ: Հոն էին գազանն ու սուտ մարգարէն, եւ պիտի տանջուին ցերեկ ու գիշեր՝ զարէ զար» (Հայտնութիւն 20:10):*

Որպէս եզրափակում կարող ենք ասել, որ երանելի վիճակում ենք, օրհնյալ, երբ խաղաղութիւն ենք հաստատում Աստծու, մեր իրական քրիստոնյա եղբայրների ու քույրերի, հրեաների հետ, բայց մենք չպետք է աշխարհի հետ խաղաղութիւն հաստատենք: Աշխարհը Աստծու թշնամի է, և մի օր Յիսուսն այն կնվաճի արյունալի հեղափոխութեամբ:

Թույլ տվեք քաջալերել ձեզ այս ոլորտներում խաղաղութիւն հաստատելու: Ինչու չեք որոշում մտովի, որ առաջինը կլինեք խաղաղութեան գործընթացը ձեր եկեղեցում կամ տանը սկսելու մեջ: Ես որոշել եմ սա գործի դնել ու միշտ առաջինը ներում խնդրել կնոջիցս կամ հոգևոր առաջնորդիցս: Սա պետք է լինի հակառակ իմ զգացմունքներին

կամ էլ իմ ճիշտ լինելու կարծիքին: Խնդրում եմ, արեք նույնն Աստծու հետ: Եթե կորցնում եք ձեր խաղաղությունը, մի սպասեք, որ Աստված ձեզ խոնարհեցնի հանգամանքների ու փորձությունների միջոցով՝ ձեզ ծնկի բերելու համար: Կատարեք առաջին քայլն ու խոնարհվեք և ապաշխարեք: Սա, իրոք, Աստծու հետ խաղաղություն հաստատելու ամենակարճ ճանապարհն է:

Նշումներ

- 1. Ինչպես կտեսնենք մաս 3-ում, այն, ինչ Աստվածաշունչը «աշխարհ» է կոչում, ոչ թե երկրի վրա եղած մարդիկ են, այլ այն համակարգը, որ ներկայումս կառավարվում է չարախոսի կողմից:*



ԳԼՈՒԽ 11

Երանութիւնն ութերորդ Յալաճանք՝ Նախանձի պատճառով

Երանի՛ր անոնց՝ որ հալածուած են արդարութեան համար, որովհետեւ երկինքի թագաւորութիւնը անոնցն է:

Մատթեոս 5:10

...որովհետեւ զիտէր թէ քահանայապետները նախանձի՛ համար մատնած էին զայն:

Մարկոս 15:10

Նահապետները՝ նախանձելով Յովսէփի՛ ծախսեցին զայն Եգիպտոս տարուելու համար, բայց Աստուած անոր հետ էր...:

Գործք Առաքելոց 7:9

Սիրելիներ՛, տարօրինակ մի՛ սեպէք այն փորձութեան հրդեհը, որ կ'ըլլայ ձեզ փորձելու համար, որպէս թէ օտար բան մը կը պատահի ձեզի: Հապա ուրախացէ՛ք՝ քանի որ կը հաղորդակցիք Քրիստոսի չարչարանքներուն, որպէսզի անոր փառքի յայտնութեան ատենն ալ ուրախանաք ցնծութեամբ:

Ա Պետրոս 4:12-13

Այժմ մենք հասել ենք երանություններում մի կարևոր պահի: Մենք մինչև այժմ դիտարկել ենք յոթը, որ ներկայացնում են Աստծու ողջ եռությունը: Թիվ յոթը, սովորաբար, աստվածաշնչի գիտակների կողմից ընդունված է՝ որպես ամբողջության, կատարելության թիվ: Հիսուսը, սակայն, չէր ավարտել, որովհետև նա ևս երկու անգամ ասում է «երանի»: Այս վերջին երկու երանություններն առաջին յոթի հետևանքն են կամ ամփոփումը: Մենք օրհնյալ ենք, երանելի վիճակում՝ Աստծու աչքին, երբ մենք տիրապետում ենք առաջին յոթին՝ Աստծու եռությանը, նրա բնավորությանը, և մենք նաև օրհնյալ ենք, երբ մենք քաղում ենք Քրիստոսի եռությունն ունենալու հետևանքները՝ հալածանքը:

Անխուսափելի հետևանքներ

Սուրբ կյանք ապրելու անխուսափելի հետևանքը հալածանքն է: Պողոս առաքյալն իր՝ Տիմոթեոսին, եփեստոսում գտնվող երիտասարդ հոգևոր մի սպասավորի, ուղղված նամակում մեզ հիշեցնում է, որ **բոլոր նրանք, որ ապրում են բարեպաշտորեն, Քրիստոս Հիսուսով, պիտի հալածանք կրեն** (Բ Տիմոթեոս 3:10-12): Աշխարհը խավարի մեջ է, ուրեմն երբ քրիստոնյաները լույսի մեջ են քայլում, նրանք միշտ էլ ընդհարման են հանդիպում:

Սակայն ընդհարումը նաև կլինի Աստծու ժողովրդի հետ: Երբ Աստծու ժողովուրդը պնդում է, թե *քայլում է լույսով, քանզի Քրիստոսը լույսն է*, սակայն իրականում քայլում է խավարում, ապա իրական աշակերտները հզոր ընդդիմության ու հալածանքի առաջ պիտի կանգնեն մոլորված եկեղեցու կողմից: Մենք տեսանք, որ սուրբ կյանքը չի կարող փոխզիջում պարունակել, քանզի Աստված ատում է խառնուրդը: Կարդացեք, թե ինչ է Հիսուսն ասում իր աշակերտներին հաղորդության ընթրիքի ժամանակ՝ ճիշտ իր խաչելությունից առաջ:

«Ասիկա՛ կը պատուիրեմ ձեզի, որ սիրեք զիրար: Եթէ աշխարհը կ'ատէ ձեզ, գիտցեք թէ ատեց զիս ձեզնմէ առաջ: Եթէ աշխարհէն եղած ըլայիք՝ աշխարհը կը սիրէր իրենները. բայց քանի որ աշխարհէն չէք,

Հապա ես ձեզ ընտրեցի աշխարհէն, աշխարհը կ'ատէ ձեզ: Յիշեցէ՛ք այն խօսքը՝ որ ըսի ձեզի. "Մտան իր տիրոջմէն մեծ չէ". եթէ հալածեցին զիս, պիտի հալածեն նաեւ ձեզ. եթէ պահեցին իմ խօսքս, պիտի պահեն նաեւ ձերը» (Հովհաննէս 15:17-20):

Արդարութեան համար

Այս երանութիւնը *հանուն արդարութեան հալածվելու* վերաբերյալ է, որովհետն մենք արդար ենք, որովհետն մենք ընտրված ենք աշխարհից: Երբ Աստված ընտրում ու կանչում է մարդուն, միշտ էլ գոյութիւն ունի գատում աշխարհից, իսկ սա հալածանքի պատճառ է հանդիսանում: Այս հալածանքը սուտ զրպարտութեան կամ խայտառակութեան վերաբերյալ չէ, այլ այն պատճառով է, որ մարդիկ տեսնում են, թէ դու տարբեր ես, ընտրյալ ու հատուկ, և այս հալածանքի արմատը միշտ էլ **Նախանձն** է՝ Աստուծոյ ժողովրդի կողմից: Սա կարող է զարմանալի թվալ, բայց կարծում եմ, որ հետևյալ օրինակները բավարար կլինեն ցանկացած մարդու համոզելու համար:

1. Հովսէփ

Հովսէփը տասներկու եղբայրներից նախավերջինն էր և չէր համապատասխանում անդրանիկութեան իրավունքի կամ օրինանքի, բայց նրա հայր Հակոբը նրան յուրահատուկ ձևով էր սիրում ու հատուկ վերաբերմունք էր ցուցաբերում նրա նկատմամբ: *«Իսրայէլ իր բոլոր որդիներէն աւելի կը սիրէր Յովսէփը, քանի որ իր ծերութեան որդին էր ան, ու բազմազոյն պատմուճան մը շինեց անոր» (Մենդոց գիրք 37:3):* Աստված նույնպէս օրինեց Հովսէփին, քանզի նրան տվեց երազներ տեսնելու ու մեկնելու շնորհ, իսկ սա նրան գատեց իր եղբայրներից: *«Երբ անոր եղբայրները տեսան թէ իրենց հայրը զայն իր բոլոր եղբայրներէն աւելի կը սիրէր՝ ատեցին զայն, եւ խաղաղութեամբ չէին կրնար խօսել անոր հետ: Յովսէփ երազ մը տեսար ու իր եղբայրներուն*

պատմեց. եւ անոնք ա՛լ աւելի ատեցին զայն... ...Ուստի եղբայրները անոր նախանձեցան, բայց հայրը իր միտքը պահեց այս խօսքը» (Ծննդոց գիրք 37:4,5,11):

Յովսեփի եղբայրները նրան չէին գրպարտում, ասելով թե չար է: Յովսեփի նկատմամբ իրենց հոր ունեցած յուրահատուկ վերաբերմունքն էր, որ ստիպեց նրանց նետել Յովսեփին գուբը ու վաճառել եգիպտացիներին: Նկատեք, որ հալածանքը եկավ իր իսկ ընտանիքի կողմից:

2. Դավիթ

Դավիթն **ընտրված** էր Աստծու կողմից՝ ի գերադասումն իր ավագ եղբայրների: Սա Դավթի կյանքի հենց սկզբից էլ խնդիրների տեղիք տվեց: Երբ Դավիթն ընդունեց Գողիաթին սպանելու կոչը, նրա ավագ եղբայր Եղիաբը խայթող հեգնանքով նսեմացրեց նրան ու գրպարտեց նրան: Այն բանից հետո, երբ Դավիթն սպանեց Գողիաթին, Սավուղ թագավորը, գիտակցելով, որ Աստծու աջն էր նրա վրա, նրան դարձրեց իր գործի հրամանատարն ու իր դստերը կնուխյան տվեց նրան: Բայց երբ հասարակ մարդիկ սկսեցին երգել *«Սաւուղը իր հազարաւորները զարկաւ, եւ Դաւիթ՝ իր բիւրաւորները» (Ա թագավորաց 18:7)*, Սավուղն սկսեց հալածել Դավթին՝ չնայած նրան, որ Դավիթն այժմ իր փեսան էր:

Տարօրինակ է, թե ինչպես նախանձը կարող է կուրացնել մարդկանց հալածելու իրենց իսկ ընտանիքի անդամներին՝ թե՛ ֆիզիկական և թե՛ հոգևոր: Սավուղը գիտեր, որ Աստված ընտրել էր Դավթին մի օր թագավոր լինելու, ու որ Դավիթն իրենից ավելի արդար էր:

«Սաւուղ իր ձայնը բարձրացուց եւ լացաւ, ու Դաւիթի ըսաւ. «Դուն ինձմէ արդար ես. արդարեւ դուն ինծի բարիք ըրիր, բայց ես քեզի չարիք հատուցանեցի: Այսօր յայտնեցիր թէ ինծի հետ բարութեամբ վարուեցար, որովհետեւ Տէրը զիս քու ձեռքդ մատնեց, բայց դուն զիս չմեղուցիր... ...Հիմա ահա՛ գիտեմ թէ դուն անշուշտ թագաւոր պիտի ըլլաս, եւ

Իսրայելի Թագաւորութիւնը ձեռքիդ մէջ պիտի հաստատուի» (Ա Թագավորաց 24:17-21):

Սակայն, նույնիսկ սա իմանալով Սավուղը ետ չկանգնեց Դավիթին հալածելուց: Նախանձն իր սեփական կառքն է վարում ու չի կարող սանձահարվել, երբ այն ինքն է տիրապետում մարդու կյանքի սանձին՝ թե՛ սուրբ ու թե՛ մեղավոր: Սա արդարության համար հալածանք է. մարդու հալածանք լոկ այն պատճառով, որ նա արդար է:

3. Հիսուս

Եթե երբևէ աշխարհի երեսին եղել է մարդ, որ պետք է հալածանքից զերծ լիներ, ապա այդ մարդը Հիսուսն էր: Նա երբեք որևէ սխալ կամ նենգ արարք չէր կատարել: Նա կերակրում էր աղքատներին, կարեկցանք ուներ մեղսավորների նկատմամբ ու միշտ արդարացի էր, անգամ փարիսեցիների նկատմամբ: Այդ դեպքում, ինչու՞ էր նա միշտ հալածված: Պատասխանը միևնույնն է, ինչ Հովսեփի ու Դավիթի դեպքում՝ նախանձ:

Հասարակ մարդիկ սիրում էին Հիսուսին ու բազմություններով գալիս էին նրան լսելու: Նրանք չէին նախանձում, որ Աստված ընտրել էր նրան, իրականում, նրանք ուրախ էին, որ Աստված նրանց մի մարգարե էր ուղարկել՝ ուսուցանելու և հրաշքներ գործելու: Սակայն դպիրները, փարիսեցիներն ու քահանայապետերը, որոնք իշխանավոր դիրք ունեին, նախանձ էին, որովհետև նրանք պարծենում էին, թե *բազմած էին Մովսեսի աթոռին* ու չէին ցանկանում զիջել այս դիրքը, ոչ էլ անգամ հենց Աստծուն, երբ նա եկավ՝ որպես մահկանացու:

Ավետարանները հստակորեն նշում են, որ նախանձը նրանց հալածանքի արմատն էր: *Որովհետև Պիղատոսը գիտեր, որ քահանայապետերը **նախանձի** համար էին մատնել նրան* (Մարկոս 15:10):

Յոգևոր ծառայության սկզբում

Յավատացած եմ, որ այս կարգի հալածանքը տեղի է ունենում, երբ մարդիկ սկսում են տեսնել, որ մարդու կյանքն Աստծու բարեհաճության ներքո է: Մենք հաջորդ երանությունում կտեսնենք սրան հաջորդող զարգացումն ու այն, որ եթե մենք հանդուրժենք այս՝ *արդարության համար հալածանքը*, ապա մենք կանցնենք հաջորդ փուլը, որը տեղի կունենա հետագայում՝ մեր հոգևոր ծառայության ընթացքում: Եկեք դիտարկենք Յիսուսի հոգևոր ծառայության հենց սկիզբը, երբ նա հայտարարեց, որ այժմ օծված էր.

«Տերոջ Հոգին իմ վրաս է. որովհետև օծեց զիս աղքատներուն աւետարանելու, զրկեց զիս կոտրած սիրտ ունեցողները բժշկելու, գերիներուն՝ ազատ արձակում եւ կոյրերուն տեսողութիւն յայտարարելու, հարստահարութիւն կրողները ազատ արձակելու, Տերոջ բարեհաճութեան տարին յայտարարելու»: Յետոյ գոցեց զիրքը, տուաւ սպասաւորին, ու նստաւ: Բոլորը ժողովարանը եղողները իրենց աչքերը սեւեռած էին անոր վրայ: Ուստի սկսաւ ըսել անոնց. «Այսօր այս գրուածը իրագործուեցաւ, ու ձեր ականջները լսեցին»: Բոլորը կը վկայէին անոր մասին, կը զարմանային անոր բերանէն ելած շնորհալի խօսքերուն վրայ, եւ կ'ըսէին. «Ասիկա Յովսէփի որդին չէ՞»: ...Ժողովարանին մէջ բոլորն ալ զայրոյթով լեցուեցան՝ երբ լսեցին այս խօսքերը. ուստի կանգնելով՝ դուրս հանեցին զայն քաղաքն, եւ տարին զայն մինչեւ այն լեռան ցցուած ծայրը՝ որուն վրայ իրենց քաղաքը կառուցանուած էր, որպէսզի բարձր տեղէն վար նետեն զայն» (Ղուկաս 4:18-29):

Ժողովարանի (սինագոգի) այս անդամները Յիսուսին չէին զրպարտում որևէ հանցանք գործելու համար: Իրականում նրանք ապշած էին նրա շնորհալի խօսքերի վրա: Սա նրանց սրտերից բխող տարերային գործողությունն էր. նախանձոտ բարկության մի գործողությունն այն բանի հանդեպ, որ Յիսուսը հանդգնել է պնդելու, թե ինքն իրագործում էր Եսայիի մարգարետությունը՝ որպես Օծյալը:

4. Վաղ եկեղեցին

Եթե նրանք հալածեցին Յիսուսին, իսկ Յիսուսն ասել էր, որ նրանք նաև պիտի հալածեին իր հետևորդներին, ապա Գործք առաքելոցը պիտի հավաստի այդ մասին: Մենք, իրոք, բազմաթիվ օրինակներ ունենք միևնույն սկզբունքի, այն է՝ Աստուծու ժողովրդի կողմից արդարների հալածման՝ նախանձի պատճառով: Երբ Պողոս և Բառնաբաս առաքյալները սկսեցին քարոզել Աստիոքի հեթանոսներին, հրեաները նախանձեցին ու սկսեցին նրանց հալածել: *«Հետեւեալ Շաբաթ օրը, գրեթէ ամբողջ քաղաքը հաւաքուեցաւ՝ լսելու Աստուծոյ խօսքը: Իսկ Հրեաները՝ երբ տեսան բազմութիւնները՝ լեցուեցան նախանձով, ու դէմ կը խօսէին Պօղոսի ըսածներուն՝ հակաճառելով եւ հայհոյելով: ...Բայց Հրեաները գրգռեցին բարեպաշտ եւ մեծայարգ կիներն ու քաղաքին գլխաւորները, եւ Պօղոսի ու Բառնաբասի դէմ հալածանք հանելով՝ իրենց հողամասէն դուրս դրին զանոնք» (Գործք Առաքելոց 13:44-50):*

Թեսաղոնիկե

Միևնույնը տեղի ունեցավ Թեսաղոնիկեում: Պողոս առաքյալը քարոզեց ճշմարտությունն ու պառակտման պատճառ դարձավ: Նրանց մի մասը հավատաց, բայց մյուսները նախանձեցին ու հալածեցին Պողոսին ու նրա ուղեկիցներին: Այս հալածանքը արդարության համար է. հալածանք՝ ճշմարտությունն ասելու համար:

«Անոնցմէ ոմանք անսացին ու միացան Պօղոսի եւ Շիղայի, նաեւ՝ բարեպաշտ Յոյներէն մեծ բազմութիւն մը. առաջնակարգ կիներէն հաւատացողներն ալ սակաւաթիւ չէին: Բայց չանսացող Հրեաները նախանձեցան, եւ քանի մը դատարկապորտ, գոեհիկ մարդիկ առնելով՝ բազմութիւն ժողվեցին, ամբողջ քաղաքին մէջ ազմուկ հանեցին, ու Յասոնի տան վրայ յարձակելով կը փնտռէին զանոնք՝ որ ամբոխին տանին» (Գործք Առաքելոց 17:4-5):

Նախանձն Է արմատը

Բոլոր այս օրինակները ցույց են տալիս, որ նախանձը հալածանքի առաջնային դրդապատճառն էր, և հալածանքը միշտ էլ այն պատճառով էր, որ քրիստոնյաները խոսում էին ճշմարտությունը կամ անում էին այն, ինչ ճիշտ էր:

Խոստումը

Եթե նայենք այս երանության խոստմանն, ապա կտեսնենք, որ այն միևնույնն է, ինչ առաջին երանությանը՝ *ձերն է երկնքի թագավորությունը*: Երկնքի թագավորությունը պատկանում է հալածված քրիստոնյաներին: Մենք շրջանը լրացրել ենք, քանզի սկսեցինք երկնքի թագավորությունն մուտք գործելով, որը խոնարհ լինելն է, և այժմ հասել ենք Քրիստոսի իրական երկրորդական ունենալու հետևանքին, որը հալածանքն է: Սա մեզ հիշեցնում է, որ այս մարդիկ կծառանգեն թագավորությունը, երբ Քրիստոսը վերադառնա:

Հալածանքը հաճելի չէ, և մեզ համար կարող է զարմանալի թվալ, թե ինչու է Հիսուսն ասում, որ մենք օրինյալ ենք, երբ հալածվում ենք: Շատ քարոզիչներ ասում են, որ հալածանքը միայն ցույց է տալիս հավատքի պակաս կամ էլ, որ մեր կյանքում գոյություն ունի որևէ վախ, որը Սատանայի ոտքն է պնդացնում: Նրանք ասում են, որ մենք միշտ պետք է հաղթանակող լինենք, ու որ հալածվելը անեծքի պես մի բան է: Հավատացած եմ, որ նրանք աղավաղել են սուրբ գրությունները, որպեսզի համաձայնեցնեն դրանք իրենց իսկ դոկտրիններին ու ուսմունքներին: Ահա, ի քաջալերումն ձեզ, հինգ պատճառ, թե ինչու ենք մենք օրհնված, եթե հալածվում ենք՝ հիշելով, որ այս օրինակը կապ ունի ոչ թե այն բանի հետ, թե ինչպես ենք մենք զգում, այլ թե ինչպես է Աստված տեսնում մեզ:

1. Սա մեր կոչումն ու պատգամն է

Հիսուսի պատգամն իր աշակերտներին, որ բերված է Մատթեոսի ավետարանի 10-րդ գլխում, մեզ պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ արդարությունը քարոզելու պատճառով կրած հալածանքը աշակերտի կոչման մի մասն է, ու որ մենք պետք է ակնակալենք այն: Չգուշությամբ կարդացեք այն, քանզի շատ քարոզիչներ ավելի հարմար են համարում մեծագույն պատգամը քարոզելու Մարկոսի ավերատանի 16:15-ի համաձայն, ուր *նշանները հետևում են նրանց, ովքեր հավատում են*, բայց նրանք իրենց հավատացյալ բազմությանը չեն ասում այդ պատգամի պայմանները կամ հետևանքները:

Հիսուսն ասաց իր աշակերտներին. *«Ահա՛ կը դրկեմ ձեզ իբր ոչխարներ՝ գայլերու մէջ. ուրեմն խորագէտ եղէք օձերու պէս, եւ աննենգ՝ աղանիւններու պէս: Իսկ զգուշացէ՛ք մարդոցմէ. որովհետեւ ատեաններու պիտի մատնեն ձեզ, ու պիտի խարազանեն ձեզ իրենց ժողովարաններուն մէջ: Կառավարիչներու եւ թագաւորներու առջեւ պիտի տարուիք՝ իմ պատճառովս, իբր վկայութիւն անոնց ու հեթանոսներուն... ...Եղբայրը մահուան պիտի մատնէ իր եղբայրը, եւ հայրը՝ զաւակը. ու զաւակներ պիտի ելլեն իրենց ծնողներուն դէմ եւ մեռցնեն զանոնք... ...Աշակերտը գերիվեր չէ իր վարդապետէն, ո՛չ ալ ծառան՝ իր տիրոջմէն... ...Եթէ տանուտէրը կոչեցին Բէեղզերուդ, ո՛րչափ աւելի՝ անոր տնեցիները... ...Մարդուն թշնամիները՝ իր տնեցիները պիտի ըլլան» (Մատթեոս 10:16-36):*

Հալածանքը խաչի անարգանքն է, որի մասին Պողոս առաքյալն ասում է գաղաթացի քրիստոնյաներին: *«Սակայն, եղբայրներ՛ր, ա՛լ ինչո՞ւ կը հալածուիմ, եթէ ես տակաւին թլպատութիւն կը քարոզեմ. ուրեմն խաչին գայթակղութիւնը ոչնչացա՞ծ է» (Գաղատացիս 5:11):*

Մեծագույն օրհնությունն է Հիսուսի քայլերով քայլելը՝ *անձն ուրանալը, սեփական խաչը վերցնելն ու նրան հետևելը:*

2. Մենք քրիստոսի հետ պիտի թագավորենք

Այս երանության խոստումն արդեն ասում է, որ մենք պիտի թագավորությունը ժառանգենք, բայց Պողոս առաքյալը նույնպես քաջալերում է երիտասարդ հոգևոր սպասավոր Տիմոթեոսին. *«Յիչէ՛ թէ Դաւիթի զարմէն եղող Յիսուս Քրիստոս՝ մեռելներէն յարութիւն առած է, համաձայն իմ քարոզած աւետարանիս, որուն մէջ կը չարչարուիմ չարագործի մը պէս՝ մինչեւ անգամ կապերով. բայց Աստուծոյ խօսքը կապուած չէ: Ուստի կը տոկամ ամէն բանի՝ ընտրեալներուն համար... .. Այս խօսքը վստահելի է. որովհետեւ եթէ մեռանք անոր հետ, պիտի ապրինք ալ անոր հետ. եթէ տոկանք, պիտի թագաւորենք ալ անոր հետ: Եթէ ուրանանք զինք, ինք ալ պիտի ուրանայ մեզ»:* (Բ Տիմոթեոս 2:8-12):

Երկնային գանձեր

Եթէ քրիստոնյաներն իրոք հավատային, որ այս ներկայիս երկրի վրա պիտի թագավորեն ու ժառանգեն ամեն բան, երբ Հիսուսը վերադառնա, ապա նրանք կանեին այն, ինչ Հիսուսն ավելի ուշ ասում է իր Լեռան քարոզում, ու *գանձեր կդիպեն երկնքում*: Նրանք այլևս այս աշխարհի համար չեին ապրի, այլ կկարողանային *պարծենալ իրենց տկարություններով*, ինչպես Պողոս առաքյալը, որ ասում է, *թե մեր թեթև, վայրկենական տառապանքը մեր համար պատրաստում է գերազանց ու հավիտենական կշիռ ունեցող մի փառք* (Բ Կորնթացիս 4:17):

Շատ քրիստոնյաների՝ հալածանքից վախենալու պատճառն այն է, որ նրանք շատ բան ունեն այս աշխարհում կորցնելու: Նրանց բոլոր երաշխիքներն ու արժեքները երկրի վրա են, այլ ոչ երկնքում: Եթէ Հիսուսն այս գիշեր գար, ապա նա քրիստոնյաների մեծամասնության պլանները կփչացներ: *Այս աշխարհի հոգսերն ու հարստության խաբեությունը (Մատթեոս 13:22) կուրացրել են նրանց՝ իրականության նկատմամբ*:

3. Հալածանքը կերտում է մեր եռությունը

Պետրոս առաքյալն իր առաջին նամակի վերջում տալիս է մի վերջին օրհնություն, որը ես դեռ նոր պետք է լսեմ որևէ ամբիոնից: Կասկածում եմ, որ պատճառն այն է, որ սա ներառում է «չարչարանք» բառը և դրանով իսկ անհամատեղելի է թվում օրհնանքի հետ: Սա այն պատճառով է, որ արևմտյան երկրներում եկեղեցին մոռացել է չարչարանքի պտուղները: Հալածված եկեղեցին, սակայն, սովորել է այն, որ հնոցում կազմավորված բնավորությունը, ոսկուց է, այլ ոչ թե փայլփլուն գործվածքից, որ հետևանք է *Սիոնում թեթև ապրելու*: Ահա Պետրոս առաքյալի վերջին օրհնությունը. *«Եւ ամէն շնորհքի Աստուածը, որ իր յաւիտենական փառքին կանչեց մեզ Քրիստոս Յիսուսի միջոցով, ձեզ կատարեալ պիտի ընէ, ուժովցնէ եւ անսասան հիմերու վրայ դնէ, երբ չարչարուիք քիչ մը ատեն: Իրեն են փառքը եւ զօրութիւնը դարէ դար: Ամէն»* (Ա Պետրոս 5:10-11):

Եբրայեցիներին ուղղված նամակը նույնպես ասում է մեզ չարչարանքի՝ մեր բնավորության համար ունեցած առավելությունների մասին: *«Ո՛չ մէկ պատիժ նոյն պահուն կը թուի ուրախարար, հապա՛ տրտմարար. բայց յետոյ կու տայ արդարութեան խաղաղարար պտուղը՝ անով կրթուածներուն»* (Եբրայեցիս 12:11):

4. Աստված կարող է Սատանային հայտարարություն անել

Հոբի գիրքը զարմանահրաշ է, քանզի այն մեզ թույլ է տալիս հայացք ձգել դեպի երկինք ու դիտել, թե ինչպես են Աստված ու Սատանան երկխոսություն ունենում երկրի վրա մի մարդու մասին: Ինձ համար այս ողջ դրվագն, իրականում, ամենևին էլ Հոբի մասին չէ: Իրականությունը սա է. արդյոք ում հայտարարությունը կապացուցվի: Աստծո՞ւ, թե՞ Սատանայի: Աստծու հայտարարությունը Սատանային հետևյալն էր. «Հոբը սիրում է ինձ և ատում քեզ»: Սատանայի

հայտարարությունն Աստծուն սա էր. «Եթե Յոբը չարչարվի, ապա նա քեզ կանիծի և, անկասկած, կսիրի ինձ»:

Կարևոր է նկատել, որ **Աստված** ինքն է սկսում խոսակցությունը, այլ ոչ Սատանան, և որ Աստված է Սատանային գրգռում՝ օգտագործելով Յոբի արդարությունը: Հավատացած եմ, որ Աստված ցանկանում էր այս հայտարարությունն անել Սատանային, քանզի Աստված հավատում էր, որ Յոբը կապացուցի, որ իր այդ հայտարարությունը ճշմարիտ է:

Երբ մենք անցնում ենք փորձությունների ու չարչարանքների միջով, այդժամ Աստված կարող է պարծենալ Սատանայի առջև մեզանով, և երբ մենք հաստատուն լինենք եւ այդ փորձությունների ու չարչարանքների միջով անցնենք ու դուրս գանք, ապա Աստծու պնդումն ապացուցված կլինի: Իրոք, ցավալի է, երբ շատ քրիստոնյաներ միայն ապացուցում են, որ նրանք «բարենպաստ եղանակի նավաստիներ են» և չեն անցնում կյանքի այն փոթորիկների միջով, որ հատուկ են մարդուն:

Հաջորդ անգամ, երբ դուք «հնոցում» լինեք, հիշեք, որ թե՛ Աստված և թե՛ Սատանան անձնական շահագրգռվածություն ունեն ձեր վերաբերմունքից, և թող դա ձեզ համարձակություն տա վճիռ կայացնելու հետևել ձեր տիրոջը, *ով տոկաց խաչին* (Եբրայեցիս 12:2):

5. Սա ապացուցում է, թե ում սերնդից ենք մենք

Աստվածաշնչում մի անփոփոխ սկզբունք կա, որ Կայենի սերունդը միշտ էլ հալածելու է Աբելի սերնդին: Սա պարզապես նշանակում է, որ նրանք, ովքեր մարմնում են, այսինքն, հետևում են իրենց մահկանացու եռությանը, լինի դա քրիստոնյա, թե ոչ, միշտ էլ հալածելու են նրանց, ովքեր Հոգով են ընթանում:

Աստվածաշնչով մեկ սա նկարագրող օրինակներ գոյություն ունեն, բայց Պողոս առաքյալն իր՝ գաղաթացիներին գրված նամակում խիստ պարզորոշ կերպով բացատրում է այս սկզբունքը: *«...Աբրահամ երկու*

որդի ունէր, մէկը՝ աղախինէն, (Իշմայել) միւսը՝ ազատ կնոջմէն (Իսահակ): Բայց ա՛ն որ աղախինէն էր՝ մարմինին համեմատ ծնած էր, իսկ ա՛ն որ ազատ կնոջմէն էր՝ խոստումով: Ասոնց մեկնութիւնը այլաբանօրէն կ'ըլլայ... ...Ուրեմն մենք, եղբայրներ՛, Իսահակի պէս խոստումի զաւակներ ենք: Բայց ինչպէս այն ատեն մարմինին համեմատ ծնածը կը հալածէր ա՛ն՝ որ Հոգիին համեմատ ծնած էր, նոյնպէս ալ հիմա» (Գաղատացիս 4:22-29):

Այս սուրբ գրութիւնը կրկին ցույց է տալիս, որ հաճախ Աստծու այն ժողովուրդը, որ մարմնով է ընթանում, հալածում է նրանց, ովքեր Յոգով են ընթանում, իսկ այդ հալածանքի արմատը նախանձն է: Երկու որդիներն էլ միևնույն սերունդից էին՝ Աբրահամի, և Իշմայելը թլպատված էր անգամ նախքան Իսահակի ծնվելը, բայց մեկը մարմնի համեմատ էր, իսկ մյուսը՝ հոգու:

Ոչինչ երբևէ չի փոխվում

Միևնույն սկզբունքը կարելի է նկատել Յովհաննեսի հայտնության գրքում, ուր կեղծ եկեղեցին, այն է՝ Բաբելոնը, պոռնիկը, հալածում է իրական եկեղեցուն՝ հարսնացուին: *«Երբ վիշապը տեսաւ թէ ինք նետուեցավ երկրի վրայ, հալածեց արու զաւակ ծնանող կիներ» (Հայտնութիւն 12:13):*

Հակաքրիստոսը, նեռը (Սատանան՝ մարմնում) Բաբելոնի թագավորն է, և պատմության ընթացքում նեռերը փորձել են ավերել Աստծու ժողովրդի շարքերից նրանց, որոնք փոխզիջման չէին գնում: Մենք իրոք օրհնյալ ենք, երբ ընթանում ենք Յոգով ու ապացուցում, որ խոստման զավակներն ենք: Մենք հաղթանակած պիտի թագավորենք և մեր Փրկչի ու Ամուսնու հետ միասին հազար տարի պիտի կառավարենք բոլոր ազգերին: Սա պետք է ոգևորի ու քաջալերի մեզ՝ *թողափելու ամեն ծանրաբեռնում ու մեղք, որ դյուրութեամբ պաշարում է մեզ, և մրցելու կատարելության համար, հաստատելու երերուն ծնկները, որովհետև մենք արյուն թափելու չափ դեռ չենք դիմադրել:*

Միշտ հալածված, միշտ հաղթանակող

Թույլ տվեք ավարտելու Պողոս առաքյալի՝ կորնթացիներին ուղղված այս խոսքերով: Սա ռազմական խոսակցություն է, սակայն մենք հոգևոր պայքարում ենք ու կարիք ունենք հասկանալու այս աստվածաշնչյան սկզբունքները, եթե ցանկանում ենք *դիմադրել այս չար օրվան*:

«Բայց մենք ունինք այս գանձը հողէ անօթներու մէջ, որպէսզի զօրութեան գերազանցութիւնը ըլլայ Աստուծմէ, եւ ո՛չ թէ մեզմէ: Ամէն կողմէ կը տառապինք, բայց տազնապած չենք. վարանումի մէջ ենք, բայց յուսահատած չենք. հալածուած ենք, բայց լքուած չենք. խորտակուած ենք, բայց կորսուած չենք: Ամէն ատեն Յիսուսի մահը կը կրենք մեր մարմինին մէջ, որպէսզի Յիսուսի կեանքն ալ յայտնաբերուի մեր մարմինին մէջ: Որովհետեւ մենք որ կ'ապրինք՝ ամէն ատեն Յիսուսի համար մահուան կը մատնուինք, որպէսզի Յիսուսի կեանքն ալ յայտնաբերուի մեր մահկանացու մարմինին մէջ... ...Արդարեւ մեր թեթեւ, վայրկենական տառապանքը՝ մեզի համար կը պատրաստէ գերազանց ու յավիտենական կշիռք ունեցող փառք մը. քանի որ մենք կը նայինք ո՛չ թէ տեսանելի բաներուն, հապա՝ անտեսանելիներուն. որովհետեւ տեսանելի բաները ժամանակաւոր են, իսկ անտեսանելիները՝ յաւիտենական» (Բ Կորնթացիս 4:7-18):



ԳԼՈՒԽ 12

Երանությունն իններորդ Ցնծությունն՝ հայհոյանքի դեմ

Երանի՛ր ձեզի, երբ կը նախատեն ձեզ ու կը հալածեն, եւ ստույթեամբ ձեզի դէմ ամէն տեսակ չար խօսքեր կ'ըսեն՝ իմ պատճառովս: Ուրախացէ՛ք եւ ցնծացէ՛ք, որովհետեւ ձեր վարձատրութիւնը շատ է երկինքը. քանի որ այն կերպով հալածեցին ձեզմէ առաջ եղած մարգարէները:

Մատթեոս 5:11-12

Թէպէտ դուք ինծի դէմ չարիք մտածեցիք, Աստուած մտածեց զայն բարիքի վերածել, որպէսզի շատ ժողովուրդ ողջ պահէ՝ ինչպես այսօր եղաւ:

Ծննդոց 50:20

Սա վերջին երանությունն է ու առավելագույն հետևանքն է սուրբ կյանքի, այն է՝ մի կյանք, որ ցուցադրում է Յոգու պտուղները, Աստծու բնավորությունը, նրա էությունը: Սա մեկ քայլ առաջ է այն հալածանքից, որին արժանանում ենք, որովհետև **Աստված ընտրել** ու կանչել է մեզ: Սա հալածանք է, որովհետև **մենք ընտրել ենք** Աստծու ուղին, ու մի բան է, որ մենք ակտիվորեն իրականացնում ենք: Սա մեր խաչը վերցնելն ու կամավոր կերպով ընդունելն է այն ամենը, ինչ այդ խաչը կպարունակի մեր առօրյա կյանքում:

Այս երանութիւնը բոլոր մնացածներից տարբերվում է նրանով, որ այն ընդհանրական չէ, այլ անհատական: Բոլոր մնացածներն ասում են «*Երանի նրանց ... որովհետև նրանցն է երկնքի թագավորութիւնը*», բայց այժմ Հիսուսն ասում է. «*Երանի քեզ, երբ մարդիկ նախատում են քեզ ու հալածում են քեզ*»: Ի վերջո, մենք ստիպված կլինենք միայնակ կանգնել: Եթէ մենք գնահատում ենք մեր *մայրերին կամ հայրերին, եղբայրներին կամ քույրերին, կանանց կամ ընկերներին, տները կամ հողերը և անգամ մեր սեփական կյանքն ավելի, քան Քրիստոսին, ապա մենք չենք կարող նրա աշակերտները լինել* (Ղուկաս 14:26): Միայն Հիսուսն ու մենք պետք է լինենք, և հնարավոր է, որ ստիպված լինենք միայնակ կանգնելու ու հալածվելու, ինչպես Հիսուսը, երբ բոլորը լքել էին նրան իր կարիքի ժամին:

Պրոգրեսիա

Այս հալածանքը շատ ավելի դժվար է ընդունել, քան նախորդ երանութիւնը: Ավելի հեշտ է չարչարվել, որովհետև մենք ընտրյալ ենք ու զատված, քան թէ հալածվել, երբ մենք սխալմամբ զրպարտվում ենք ու նախատվում այն բաների համար, որ չենք արել: Ավելի շատ հավատք է պահանջվում լռությամբ չարչարվելու համար, երբ մենք անմեղ ենք: Սա աշխարհիկ մտքի համար խելագարութիւն է թվում, բայց սա այն է, ինչ մեր տերն է արել, այն, ինչ հաճելի է Աստծուն: «*...բարի՛ խղճմտանք ունեցէք, որպէսզի՝ այն բանին համար որ կը բամբասեն ձեզ իբր չարագործներ, ամօթահար ըլլան անո՞նք՝ որ կը պախարակեն Քրիստոսով եղած ձեր բարի վարքը: Որովհետև ասելի լաւ է չարչարուիլ - եթէ այդ է Աստուծոյ կամքը - բարի՛ք ընելով, քան թէ չարիք ընելով: Արդարև Քրիստո՞ս ալ մէ՛կ անգամ չարչարուեցաւ՝ մեղքերու համար, Արդարը՝ անարդարներուն համար, որպէսզի մօտեցնէ մեզ Աստուծոյ» (Ա Պետրոս 3:16-18):*

Հոժարակամ գոհաբերություն

Նրանց համար, ովքեր հոժար կամքով կընդունեն այս հալածանքները, երբ նրանք կարող են խուսափել դրանցից՝ իրենց անմեղությունը հանդիմանելով, պարզևները մեծ են: Պողոս առաքյալի՝ եբրայեցիներին ուղղված նամակի 11-րդ գլուխը հանրաճանաչ է՝ հավատքով ու այն հերոսների ցուցակով, որ Աստծու համար վիթխարի սխրագործություններ են կատարել, սակայն այդ գլխի վերջում ընդհանուր ընթացքը դրամատիկորեն փոփոխվում է, և փոխարենը պարծենալու, թե հավատքը կարող է հզոր բաներ **սվաճել** Աստծու համար, այն ցույց է տալիս, որ ավելի մեծ հավատքը կարող է մեծ **տառապանքներ** կրել Աստծու համար, և որ *լավագույն պարզևը հարությունն է*: Աշխարհն արժանի չէ այս նահատակներին, ոչ էլ գու, գաղջ, փոխգիշումների գևացող, ինքնագոհ եկեղեցին:

«...իսկ ուրիշներ գանակոծուեցան՝ չընդունելով ազատագրութիւնը, որպէսզի հասնին լավագոյն յարութեան մը: Ուրիշներ ալ փորձառութիւնը ունեցան ծաղրանքի եւ խարագանի, նաեւ կապերու ու բանտերու. քարկոծուեցան, սղոցուեցան, տանջուեցան, սուրով սպաննուեցան, ոչխարի մորթերով եւ այծի մորթերով չրջեցան, զրկուելով, տառապելով, չարչարուելով... ...մոլորելով անապատներու, լեռներու, քարայրներու եւ երկրի խոռոչներուն մէջ» (Եբրայեցիս 11:35-38):

Լրացուցիչ մղոնը

Այս երանությամբ էլ Հիսուսը ներկայացնում է այն, ինչ ես անվանում եմ «լրացուցիչ մղոնի փիլիսոփայություն»: Դրանով ես ի նկատի ունեմ ցուցումների մի տիպ, որ Հիսուսն է տալիս, որոնք միայն հիմարը կամ էլ իրական քրիստոնյան կարող է ընդունել ու կիրառել: Ես սա մանրամասնորեն կքննարկեմ այս շարքի հաջորդ գրքում, բայց ահա սուրբ գրություններից մի քանի օրինակ, որ եկեղեցին բառացիորեն չի

ընդունում: Շատ հաճախ նրանք, փոխարենը, փնտրում են, այսպես կոչված, այլընտրանքային «հոգևոր իմաստ»:

«Բայց ես կը յայտարարեմ ձեզի. Չարին մի՛ դիմադրեր. հապա ո՛վ որ ապտակէ աջ այտիդ, դարձու՛ր անոր միւսն ալ» (Մատթեոս 5:39):

«Բայց ես կը յայտարարեմ ձեզի. "Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարի՛ք ըրեք անոնց՝ որ կ'ատեն ձեզ, եւ աղօթեցէ՛ք անոնց համար՝ որ կը պախարակեն ու կը հալածեն ձեզ» (Մատթեոս 5:44):

Հիսուսի ասածը կիրառելու իրենց մերժումն արդարացնելու համար քրիստոնյաները հաճախ ասում են այնպիսի բաներ, ինչպիսիք են. «Ես, միգուցե, քրիստոնյա եմ, բայց ես հիմար չեմ: Աստված ակնկալում է, որ մենք բանականություն կիրառենք»: Այս կարգի պնդումը միայն ապացուցում է, որ նրանք ցանկանում են քրիստոնեություն՝ իրենց սեփական ապրանքանիշով, և չեն հասկանում, որ միակ պահանջվող բանը պարզ հնազանդությունն է:

Ցուցումներ

Մեկ այլ բան, որ այս վերջին երանությունն առանձնացնում է մյուսներից, այն է, որ սա միակ երանությունն է, որ ցուցում է պարունակում: Այն բանից հետո, ինչ Հիսուսն ասում է մեզ, թե մենք օրինյալ ենք, երբ չարչարվում ենք սխալ հալածանքի պատճառով, տող 12-ն ասում է մեզ հետևյալը. *«Ուրախացէ՛ք եւ ցնծածէ՛ք»*: Սրանք, իրոք, տարօրինակ ցուցումներ ենք: Արդյոք ինչու մենք պիտի ուրախանանք ու ցնծանք, երբ մեզ պախարակում են: Այս տողի մնացած հատվածը պատասխանը պարզ է դարձնում. *«...որովհետեւ ձեր վարձատրութիւնը չատ է երկինքը. քանի որ այս կերպով հալածեցին ձեզմէ առաջ եղած մարգարէները» (Մատթեոս 5:12):*

Դուկաս ավետարանիչը մեզ ցույց է տալիս մետաղադրամի մյուս կողմը, երբ մեքբերում է Հիսուսի ասածը. *«Վա՛յ ձեզի՝ երբ մարդիկ լաւ*

խօսին ձեր մասին, որովհետեւ իրենց հայրերը այդպես կ'ընէին սուտ մարգարէներուն» (Ղուկաս 6:26):

Երբ Հիսուսը գա այս երկրի վրա թագավորելու, «...պէտք է որ բոլորս ալ ներկայանանք Քրիստոսի դատարանին առջեւ, որպէսզի իւրաքանչիւրը ստանայ այն բաներուն համեմատ՝ որ իր մարմինին մէջ եղած ատեն ըրած է, բարի կամ չար» (Բ Կորնթացիս 5:10), և որևէ պարզևատրում չի լինի մեր պարտքը հազիվ թէ կատարելու համար: Որպէս քրիստոնյա պարտք կատարելը անպետք ծառա լինելն է. Քրիստոսը պտուղ է փնտրում, իսկ դա նշանակում է աճ¹:

Հալածանքի մասին առաջին երանութիւնը կապված է մեր կյանքում Աստծու կանչի հետ, ուրեմն, այս դեպքում **Նրա** բարի համբավն ու անունն է վտանգված, սակայն այս երանութիւնը մեկ քայլ առաջ է գնում դեպի պախարակութիւն, սուտ զրպարտութիւն՝ ոչ թէ Աստծու, այլ անձամբ **մեր** դեմ, իսկ սա շատ ավելի դժվար է հանդուրժել: Մենք միշտ պետք է պաշտպանենք ուրիշ քրիստոնյաների բարի համբավն ու մեր Փրկչի անունը, բայց մենք չպետք է պաշտպանենք մեր անունն ու բարի համբավը:

Ես բազմաթիվ քրիստոնյաներից լսում եմ, թէ իրենց կյանքը Քրիստոսին են տվել, սակայն Նրանք մոլորված են, եթէ Նրանք չեն տվել իրենց կյանքի յուրաքանչյուր բնագավառի հարյուր տոկոսը: Արդյոք Նրանք տվել են իրենց ողջ **ազատ** ժամանակը: Արդյոք Աստծուն են տվել իրենց **ողջ** դրամը, կամ իրենց **ողջ** ընտանիքը՝ գիտե՞նա՞լով, որ Աստված կարող է թույլ տալ, որ Նրանք կորցնեն իրենց ընտանիքը: Քանիսն են արդյոք Աստծուն տվել իրենց բարի համբավը, որպէսզի Նա վարվի այդ համբավի հետ, ինչպէս կցանկանա: Նա, հնարավոր է, որ թույլ տա, որ այդ համբավն անարգվի՝ ցեխի միջով քարշ տրվի: Սա մեզ խոնարհեցնելու ու մեզ Հիսուսի բնավորութիւնը տալու մի հիանալի ճանապարհ է: Արդյոք մենք մտածել ենք Աստծուն մեր ինքնագնահատականը տալու մասին: Երբ մենք իրոք Աստծուն տվել ենք ամեն ինչ ու մահացած ենք մեր սեփական անձի համար, այդժամ եսը, մեր սեփական անձը չի կարող վիրավորվել, զրպարտվել ու պախարակվել, և մենք, իրապէս, ազատ ենք:

Եկեք այժմ դիտարկենք այս երկրորդ տեսակի հալածանքի մի քանի օրինակ Աստվածաշնչից:

Յովսեփ

Մենք դիտարկել ենք Յովսեփի կյանքի սկիզբն ու նրա հալածանքը՝ իր հոր յուրահատուկ սիրո պատճառով: Այժմ եկեք դիտարկենք նրա կյանքը մի քանի տարի անց, ու տեսնենք հաջորդ երանությունը՝ նրա հանգամանքների օրինակով: Այժմ Յովսեփը զրպարտվում է մի բանում, որում նա անմեղ էր. իր գործատուի կնոջը բռնաբարելու փորձում (Ծննդոց 39:7-20): Սա շատ լուրջ գանգատ էր, սակայն որևէ փաստ չկա, որ նշում է, թե Յովսեփն ապացուցում է իր անմեղությունը: Նա թույլ տվեց, որ Աստծու նախագիծն իրականացվի Աստծու ճիշտ ժամանակին՝ գիտենալով, որ Աստված կարող էր իր փոխարեն վրեժ լուծել՝ իր իսկ կամեցած ժամանակ: Յովսեփը հավատք ուներ, որ Աստված կիրականացներ այն երազների իրագործումը, որ հենց ինքն էր տվել նրան, երբ նա երիտասարդ պատանի էր, և այս հավատքը նրան ուժ տվեց համբերատարությամբ հանդուրժելու հալածանքը: *«Թէպէտ դուք ինծի դէմ չարիք մտածեցիք, Աստուած մտածեց զայն բարիքի վերածել, որպէսզի շատ ժողովուրդ ողջ պահէ՝ ինչպես այսօր եղաւ.» (Ծննդոց 50:20):*

Յիսուս

Մենք նաև դիտարկեցինք Յիսուսի կյանքի սկիզբն ու տեսանք նախանձախնդիր հրեաների կողմից եկող հալածանքը, երբ նա պնդեց, թե Իսրայելի ընտրյալն էր: Սակայն ավելի ուշ, խաչի վրա, նա նախատվեց՝ որպես սրբապիղծ: Սա, իհարկե, սուտ զրպարտություն էր: Նա անվանվեց հարբեցող ու որկրամուլ, սակայն դրանցից և ոչ մեկը չէր:

Բայց Յիսուսը լուռ հանդուրժեց այս բոլոր հանդիմանությունները, պախարակությունները:

«Անիկա ճնշուեցաւ ու տառապեցաւ, բայց իր բերանը չբացաւ. սպանդանոց տարուող գառի պէս, զինք խուզողներուն առջեւ մունջ կեցող մաքիի պէս՝ իր բերանը չբացաւ» (Եսայիա 53:7):

Յետևանքների գինը

Այս երանությունները բոլորն էլ Աստծու Էության, նրա բնավորության ու այն ձեռք բերելու գնի վերաբերյալ են: Ցավոտ է խոնարհվելը, հեզ լինելն ու սգալը: Միևնույն ժամանակ մեծ գին է սպասվում, երբ մենք սկսում ենք դրսևորել այդ բնավորությունը: Դա հետևանքների գինն է: Կարելի է ենթադրել, որ երբ վճարում ենք Աստծու բնավորությունը ձեռք բերելու գինը, ամեն բան հեշտ պիտի լինի, բայց մենք չարչարվում ենք նաև Քրիստոսին նմանվելու **պատճառով**:

«Քանի որ եթէ մէկը՝ Աստուծոյ հանդէպ բարի խղճմտանքով՝ տոկայ անիրաւօրէն չարչարուելու տրտմութեան, ասիկա շնորհք մըն է: Արդարեւ գովեստի արժանի ի՞նչ կայ, եթէ տոկաք՝ մինչ կը կոփահարուիք մեղանչած ըլլալով: Բայց եթէ տոկաք՝ մինչ կը չարչարուիք բարիք գործած ըլլալով, ասիկա շնորհք մըն է Աստուծոյ քով: Քանի որ դուք կանչուեցաք այս բանին համար, որովհետեւ Քրիստոս՝ ալ չարչարուեցաւ ձեզի համար եւ օրինակ թողուց ձեզի՝ որպէսզի հետեւիք իր հետքերուն: Ան մեզք չգործեց, ո՛չ ալ նենգութիւն գտնուեցաւ անոր բերանին մէջ: Երբ կը հեզնուէր, փոխարէնը չէր հեզներ. կը չարչարուէր, բայց չէր սպառնար, հապա կը յանձնէր ինքզինք արդարութեամբ դատողին»: (Ա Պետրոս 2:19-23):

Նշումներ

1. Երբ քրիստոնյաներն աղոթում են, պաս պահում, եկեղեցի գնում, կերակրում են աղքատներին, ապա նրանք միայն հնազանդվում են Զիսուսի ցուցումներին, և կեղծավորները նույնպես կարող են սա անել ու ստանալ մարդկանց պարզևատրուությունը, բայց Աստծու կողմից որևէ պարզևատրուություն չկա մեր պարտքը կատարելու համար: Միայն լրացուցիչ մղոն անցնելը, մյուս այտոը շրջելը կարող է շահույթ բերել: Նույնպես դուք, երբ անեք ձեզ հրամայված բոլոր բաները, ասեք. «Մենք անպէտ ծառաներ ենք. ըրինք ինչ որ պարտական էինք ընել» (Ղուկաս 17:10):

Մինևույնն է նաև նշվում Պողոս առաքյալի՝ կորնթացիներին ուղված առաջին նամակի 13րդ գլխում: Բոլոր ծիշտ գործերն՝ առանց պտղի, որն այս դեպքում կարեկցանքն է, որևէ շահ չունեն ու դառնում են հնչող պղինձ (տող 1), ոչինչ՝ Աստծու գնահատմամբ (տող 2), և մենք օգուտ չենք ունենա (տող 3):





ԳԼՈՒԽ 13

Աստծու հեռանկարը

Ան ալ ըսաւ. «Ձեզի՛ տրուած է հասկնալ Աստուծոյ թագաւորութեան խորհուրդները, բայց ուրիշներուն՝ առականերով կը խօսիմ. որպէսզի նայելով՝ չտեսնեն ու լսելով՝ չհասկնան:

Ղուկաս 8:10

Մի՛ սիրէք աշխարհը, ո՛չ ալ ինչ որ աշխարհի մէջ է: Եթէ մէկը կը սիրէ աշխարհը, չօրը սէրը չկայ իր մէջ:

Ա Հովհաննես 2:15-16

Ես փորձեցի ցույց տալ, որ երանութիւնները Քրիստոսի եութիւնն են՝ Աստծու կատարյալ բնավորութիւնը: Հավատացած եմ, որ քրիստոնյայի նպատակը ոչ միայն Քրիստոսին **հետևելն** է, այլ Քրիստոսի **նման դառնալը**՝ ըստ եութեան: Երանութիւնների վերջում հիսուսը երկու հայտարարութիւն է անում.

1 - Դուք երկրի աղն եք

2 - Դուք աշխարհի լույսն եք

Հավատացած եմ, որ այս պնդումներն արտացոլում են Աստծու հեռանկարը, այլ ոչ մերը: Սրանք այն են, թե ինչպէս է Աստված տեսնում այն մարդուն, ով իր բնավորութիւնն ունի: Երբ քրիստոնյան իր կյանքում կիրառում է երանութիւնները, այդժամ Աստված նրան դիտարկում է՝ որպէս աղ իր արարչութիւնում և լույս՝ այս խավար

աշխարհում: Կարևոր է հասկանալ այն, որ միայն Աստված է մեզ դիտարկում՝ որպես աղ և լույս:

Աշխարհը, կամ աշխարհիկ քրիստոնյաները, մեզ երբեք չեն դիտարկի՝ որպես աղ և լույս, նրանք երբեք դա չեն ճանաչի: Մատթեոսի ավետարանի 5-րդ գլխի տող 16-ում Հիսուսն ասում է, որ մենք պետք է *թողնենք, որ մեր լույսն այնպես փայլի մարդկանց առջև, որ տեսնեն մեր բարի գործերը և փառաբանեն մեր Չորը, որ երկնքում է*: Սա նշանակում է, որ նրանք ոչ թե մեր լույսն են տեսնում (մեր եռթյունը), այլ մեր արարքները: Նրանք չգիտեն մեր իրական դրոշմատվածները, քանզի հեշտ է բարի գործեր կատարել՝ սխալ մտադրությամբ: Նրանք չեն հասկանում խոնարհությունը կամ հեզությունը: Աշխարհն իր սեփական երանություններն ունի, ինչպիսիք են, «Երանի բռնավորներին, քանզի նրանք հաջողության կհասնեն կյանքում», կամ «Երանի իրենք իրենց վրա կենտրոնացվածներին, քանզի մեծ է նրանց բավարարվածությունը»:

Միայնակ քայլք

Ես կարող եմ նաև ասել, որ հեշտասեր քրիստոնյաները երբեք մեզ չեն դիտարկի՝ որպես աղ և լույս: Ես նախորդ գլուխներում ցույց եմ տվել, որ հաճախ Աստծու ժողովուրդը խավարում է և հալածում է նրանց, որոնք լուսավորության մեջ են: Հիսուսը խաչվեց հենց այն մարդկանց սուտ վկայության պատճառով, որոնք Աստծու կողմից ընտրված էին, որոնք պնդում էին, թե հենց այդ լուսավորությունն ունեին: Հիսուսն իր Լեռան քարոզում ասում է, որ *եթե քո մեջ եղած լույսը խավար է, ապա որքան է այդ խավարը*: Սա Հիսուսի օրերի շատ փարիսեցիների դրությունն էր:

Աստծու հետ սուրբ ընթանալը միայնակ քայլք է: Գտնել մի քրիստոնյայի, որ արդարացված է հավատքով, հեշտ է: Գտնել մի քրիստոնյայի, որ ցուցաբերում է Աստծու ուժը, դժվար չէ: Բայց այն քրիստոնյաները, որ շլացնող լույսն են ու լի են Աստծու եռթյամբ, իմ

կարծիքով, հազվադեպ են: Նրանք առանձնանում են ոչ միայն աշխարհից, այլև միջակ քրիստոնյաներից: Սրանք այն մարդիկ են, որ առաջ են բերում հոգևոր զարթոնք և փոփոխություն ողջ ազգերի մեջ՝ ոչ միայն իրենց խոսքերով, այլ իրենց կյանքով:

Ճակատագրական սխալ

Այս երկու պնդումները՝ երկրի աղի և աշխարհի լույսի վերաբերյալ միևնույնը բանը **չեն** ասում: Ես չեմ հավատում, որ սա երբևէ տեղի է ունենում Հիսուսի ուսմունքներում: Նա չի վատնում և ոչ մի առանձին պնդում: Եթե Մատթեոսի ավետարանի 13-րդ գլխում յոթը այլաբանություն կա թագավորության վերաբերյալ, ապա կարող եք համոզված լինել, որ յուրաքանչյուրի համար առանձին կիրառություն գոյություն ունի:

Աշխարհն ու երկիրն Աստվածաշնչում միևնույն բանը չեն նշանակում: Աղն ու լույսն իրենց նպատակով ու կիրառությամբ բոլորովին տարբեր են: Ճատ քրիստոնյաներ մոլորվել են՝ մտածելով, թե այս երկու պնդումները փոխարինելի են. սակայն այս երկու փոխաբերությունները խառնելը՝ ասելու, թե մենք պետք է լինենք **«հասարակության աղը»**, որտեղ «հասարակություն» ասելով նրանք ի նկատի ունեն **«աշխարհը»**, հանգեցնում է ճիշտ հակառակն այն բանի, ինչ Հիսուսն ի նկատի ուներ: Նրանք սա ասում են չնայած այն ամենին, ինչ Նոր կտակարանն ասում է մեզ աշխարհից ու նրանում եղած բաներից առանձնանալու վերաբերյալ: Ես սա ավելի մանրամասնորեն կբացատրեմ հաջորդ երկու գլուխներում, երբ մենք դիտարկենք այս երկու պնդումներն՝ իրենց իրական կոնտեքստում:



ԳԼՈՒԽ 14

Աղ՝ արարչությունում

Դո՛ւք էք երկրի աղը. եթէ աղը կորսնցնէ իր համը, ինք ինչո՞վ պիտի աղուի: Անկէ ետք ո՛չ մէկ ազդեցութիւն կ'ունենայ, հապա դուրս կը նետուի եւ կը կոխկոտուի մարդոց ոտքին տակ:

Մատթեոս 5:13

Որովհետեւ իւրաքանչիւրը կրակո՛վ պիտի աղուի, ու ամէն զոհ աղո՛վ պիտի աղուի: Աղը լաւ է. բայց եթէ աղը դառնայ անհամ, ինչո՞վ պիտի համեմէք դայն. ձեր մէջ ա՛ղ ունեցէք, եւ իրարու հետ խաղա՛ղ եղէք:

Մարկոս 9:48-49

Երկրի վրա աղի մասին իր հայտարարությունում Յիսուսը չի ասում, թե մենք **պետք է** աղը լինենք կամ էլ թե պետք է աղը **դառնանք**: Մենք աղն **ենք**. միգուցե մենք ունենք համեմելու ուժ, կամ էլ կորցրել ենք այն, բայց մենք աղ **ենք**: Աղը այն չէ, ինչ մենք անում ենք, այլ այն, ինչ մենք ենք, կանք: Մենք միակ աղն ենք, որ Աստված ունի, և համեմելու չափն ուղիղ համեմատական է մեր կյանքում եղած Քրիստոսի եւության չափին: Մենք միակ ժողովուրդն ենք, որ Աստված ունի այս երկրի վրա: Մենք ընտրված ենք ու գնված Աստծու կողմից՝ որպես նրա ներկայացուցիչները և նրա աղը, և նա որևէ այլ ուղի կամ ծրագիր չունի: Ուրեմն, քանի որ մենք աղն ենք, մենք պետք է անենք այն, ինչ աղն է անում՝ համեմենք ու պահպանենք (պահածոյացնենք): Սա անելու ուժը մեր կյանքում երանություններն ապրելու մեջ է, և

աշակերտում եղած Աստծու եռաթյունից բացի ոչինչ չի կարող Աստծուն փառաբանել:

Ընտրված ցեղ

Իրական քրիստոնյաները դուրս կանչվածներն են: Նոր կտակարանը խոսում է Մովսեսի և *անապատում եղած եկեղեցու* մասին: Նրանք նույնպես Աստծու լույսն էին աշխարհում. *ընտրված ցեղ, թագավորական քահանայություն*, որին Աստված *խավարից կանչեց սքանչելի լույսի* (Ա Պետրոս 2:9-10):

Երկիրը ֆիզիկական է

Նախորդ գլխում ես ասացի, որ «երկիրն» ու «աշխարհը» Հիսուսի այս պնդումներում միևնույն բանը չեն նշանակում: Երկիրն Աստվածաշնչում միշտ էլ կապ ունի Աստծու ֆիզիկական արարչության հետ: Սա ներառում է, իհարկե, մեր մարդկային ցեղը: Նոր դարի մտածողությունը խրախուսում է «Մայր Երկրի» պաշտամունքը, բայց, որպես քրիստոնյաներ, մենք պաշտում ենք Երկրի Արարչին: Երկիրը միայն գոյություն ունի Աստծու ուժով. այն ապրում է, կենդանի է: Գիտությունը մեզ ցույց է տվել, որ անգամ այն բաները, որ մենք անվանում ենք պինդ մարմիններ, իրականում բաղկացած են տարածությամբ բաժանված միլիոնավոր փոքրագույն ատոմներից՝ բոլորը շարժվող ու տատանվող: Նրանք կենդանի են՝ Աստծու Հոգով:

Եթե Աստված իր Հոգին դուրս հաներ տիեզերքից, համոզված եմ, որ տիեզերքն այլևս գոյություն չէր ունենա: Այն կլիներ *ամայի ու դատարկ*: «Ամայի ու դատարկը» ոչնչի նկարագրությունն է, ճիշտ ինչպես «անտակ կարասն՝ առանց կողմերի»: Աստծու արարչության յուրաքանչյուր ֆիզիկական մաս պարզապես նրա Հոգու արտահայտումն է: Սա կարող է վտանգավոր պնդում թվալ, բայց

որովհետև Աստված անհատականություն է, այլ ոչ ուժ, սա Նոր դարի մտածողության ճիշտ հակառակն է:

Երկիրն Աստծունն է

Որովհետև Աստված է ստեղծել երկիրը, այն պատկանում է իրեն և կշարունակի պատկանել, մինչև նա Նորից այն ավերի կրակով: Մարդու մեղքով այս երկիրը չհանձնվեց Սատանային: Սատանան չտիրացավ դրան մեր ընկնելուց հետո և երբեք էլ չի տիրանա: Այն միշտ էլ Աստծու արարչությունը կլինի:

«Քանի որ քու ամուսինդ Արարիչդ է, անոր անունը Զօրքերու Տէր է, ու քու Փրկարարդ Իսրայէլի Սուրբն է. ան "ամբողջ երկրի Աստուածը" պիտի կոչուի» (Եսայիա 54:5):

«Մովսէս անոր ըսաւ. «Երբ քաղաքէն դուրս ելլեմ՝ իմ ձեռքերս Տէրոջ պիտի երկարեմ, ու որոտումները պիտի դադրին եւ ա՛լ կարկուտ պիտի չըլլայ, որպէսզի գիտնաս թէ երկիրը Տէրոջն է» (Ելից 9:29):

«Տէրոջն է երկիրը եւ անոր լիութիւնը» (Սաղմոս 24:1):

Երբ Հիսուսը սատանայի կողմից փորձության էր ենթարկվում ամայությունում, սատանան տարավ նրան բարձր լեռան գագաթը՝ ցույց տալու **աշխարհի թագավորությունները**, այլ ոչ երկրի, և սատանան նրանք Հիսուսին առաջարկեց, եթե նա գետնովն ընկներ ու պաշտեր իրեն (Մատթեոս 4:8): Սա օրինական առաջարկ էր սատանայի կողմից, քանզի նա ուներ դա իրականացնելու ուժը, որովհետև աշխարհը նրան է պատկանում (Ղուկաս 4:5-7): Ես հաջորդ գլխում ավելի մանրամասն կդիտարկեմ այն, թե ինչ է ներառում «աշխարհը»:

Երկիրը աղավաղված է

Այնուամենայնիվ, չնայած նրան, որ երկիրը Աստծունն է պատկանում, այն շատ հեռու է կատարյալ լինելուց՝ մարդու ընկնելու

պատճառով, և այն Աստծու կողմից անիծվել է: *«Եւ Ադամի ըսաւ. «Որովհետեւ դուն կնոջդ խօսքը մտիկ ըրիր, ու կերար այն ծառէն՝ որուն մասին քեզի պատուիրեցի. "Անկէ մի՛ ուտեր", գետինը քու պատճառովդ անիծեալ ըլլայ» (Ծննդոց 3:17):*

Ես դժվարանում եմ հավատալ, որ քարոզիչներն ուսուցանում են, թէ Ծննդոց գրքի Աստծու անեծքն Ադամի, Եվայի և Սատանայի վրա խաչից հետո գրոյականացվել է: Քրիստոսի մահը խաչի վրա հեռացրեց **աշխարհի** մեղքը, բայց այն որևէ ազդեցություն չունեցավ Աստծու ֆիզիկական արարչության՝ **երկրի** վրա: Աստծու արարչությունը, ներառյալ մեր մարմինները, դեռևս ֆիզիկական մահվան անեծքի ներքո է և, բացառությամբ նրան, եթե Հիսուսը վերադառնա մեր կենդանության օրոք, մեր ֆիզիկական մարմինները կդառնան հող՝ երկրի երեսին: Հենց այն մարդիկ, որ ուսուցանում են կատարյալ առողջություն ու անցավ ծննդաբերություն, իրենք էլ պետք է հող դառնան՝ ապացուցելով, որ այդ անեծքները դեռ ազդում են մեզ վրա:

Աղը կանգնեցնում է փտումը

Աստվածաշունչը նաև ասում է, որ մարդը աղավաղել է երկիրը էլ ավելի, և այդ պատճառով էլ Հիսուսը «աղը» կապում է «երկրի» հետ, քանզի աղը քայքայման վրա ազդեցություն ունի: Աղը ներս է թափանցում ու կանգնեցնում փտումը: Այն պահածոյացնող գործոն է: Մենք հաջորդ գլխում կտեսնենք, որ աշխարհը խավարում է, և որ աղը որևէ ազդեցություն չունի խավարի վրա: Խավարը մեկ այլ բանի կարիք ունի՝ լույսի:

Կարդացեք, թե ինչ էր մտածում Աստված երկրի մասին՝ առաջին անգամ այն ջրով ավերելուց ճիշտ առաջ.

«Երկիրը Աստուծոյ առջեւ ապականեցաւ. նաեւ երկիրը բոնութեամբ լեցուեցաւ:

Աստուած երկրին նայեցաւ, եւ ահա՛ ապականած էր, որովհետեւ երկրի վրայ ամէն մարմին իր ճամբան ապականեր էր: Ուստի Աստուած

Նոյին ըսաւ. «Բոլոր մարմիններուն վախճանը հասած է իմ առջեւ, քանի որ երկիրը անոնց պատճառով բռնութեամբ լեցուեցաւ. ահա՛ դանոնք երկրի հետ պիտի բնաջնջեմ» (Ծննդոց 6:11-13):

Այս բռնության հետևանքով թափված արյունն էլ հենց ապականել էր երկիրը Նոյի օրոք, և ամեն օր էլ դեռ արյուն է թափվում՝ պատերազմների, հղիության դադարեցման ու մարդկան բռնության պատճառով: Երկիրը դեռևս շարունակվում է ապականվել:

Աստծու ուխտը երկրի հետ

Այն բանից հետո, երբ Աստված երկիրը ջրհեղեղով ավերեց, նա ուխտ արեց՝ ոչ միայն պարզապես Նոյի ու նրա սերնդի հետ, այլ հենց երկրի հետ:

«Ձեզի հետ իմ ուխտս պիտի հաստատեմ, որ անգամ մըն ալ ամէն մարմին ջրհեղեղի ջուրերէն չբնաջնջուի, եւ ա՛լ ջրհեղեղ չըլլայ՝ երկիրը կործանելու համար»: Եւ Աստուած ըսաւ. «Իմ ու ձեր միջեւ, եւ ձեզի հետ եղող ամէն շնչաւոր կենդանիի միջեւ՝ յաւիտենական սերունդներու համար դրած ուխտիս իբր նշան՝ իմ աղեղս ամպին մէջ պիտի դնեմ. ա՛ն պիտի ըլլայ իմ ու երկրի միջեւ եղող ուխտին նշանը» (Ծննդոց 9:11-13):

Այս տողերից երևում է, որ Աստծու ուխտը միայն մարդու հետ չէ, որովհետև մարդը ստեղծված է Աստծու կերպարով, նրա ծրագիրն ամեն մարմնի համար է՝ *ամեն շնչավոր կենդանու:*

Ազատագրություն՝ ամեն մարմնի համար

Պողոս առաքյալը Նոր կտակարանում պարզորոշ կերպով մեզ ցույց է տալիս, որ ազատագրման ծրագիրը դեռ ավարտված չէ: Խաչը կատարյալ գործ կատարեց, որպեսզի մենք հաշտվենք Աստծու հետ, և այդ գործն ամբողջական է ու որևէ այլ բանի կարիք չունի: Չնայած դրան, սուրբ գրությունները մեզ պարզորոշ կերպով ցույց են տալիս, որ

մեր ֆիզիկական մարմիններն ու ցանկացած շնչավոր կենդանի դեռ սպասում է մարմնի ազատագրմանը, այն է՝ սպասում է, որ ապականությունն անապականություն հազնի, մահկանացուն անմահություն հազնի:

«Նոյնինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր Հոգին հետ թէ մենք Աստուծոյ զաւակներն ենք. ու եթէ զաւակներ՝ ուրեմն ժառանգորդներ, Աստուծոյ ժառանգորդներ և Քրիստոսի ժառանգակիցներ... ...Քանի որ արարածները եռանդուն ակնկալութեամբ կը սպասեն Աստուծոյ որդիներուն յայտնութեան: Որովհետեւ արարածները հպատակեցան ունայնութեան (ո՛չ թէ իրենց կամքով, հապա անոր պատճառով՝ որ հպատակեցուց զիրենք)՝ այն յոյսով, որ արարածները իրենք ալ, ազատելով ապականութեան ստրկութենէն, հասնին Աստուծոյ զաւակներուն փառաւոր ազատութեան:

Արարածները հառաչում են

«Քանի որ գիտենք թէ բոլոր արարածները միասին կը հառաչեն ու երկունքի ցաւ կը քաշեն մինչեւ հիմա: Եւ ո՛չ միայն անոնք, հապա մենք ալ՝ որ ունինք Հոգին երախայրիքը, նոյնիսկ մենք մեր մէջ կը հառաչենք սպասելով որդեգրութեան, այսինքն մեր մարմինին ազատագրութեան» (Հոովմեացիս 8:16-23):

Մարմնի ազատագրությունն այն օրինյալ հույսն է, որ նշված է եկեղեցուն ուղղված նամակներում: Վերոնշյալ պնդումներից ելնելով՝ ես միայն կարող եմ հավատալ, որ կենդանական աշխարհն ավելի մեծ հույս ունի մարմնի ազատագրման, քան թե շատ քրիստոնյաներ, իսկ եթե սա ճիշտ է, ուրեմն ինչպիսի մեղադրական ակտ է սա մեր դեմ:

Աղ՝ պահպանող մասնիկը

Մենք այժմ պետք է կարողանանք պարզորեն տեսնել, թե արդյոք ինչ ի նկատի ուներ Յիսուսը, երբ ասում էր, որ մենք երկրի աղն ենք: Այս պնդումը հետևում է երանություններին, իսկ նրանք բոլորը Քրիստոսի եռությունն են, ուրեմն, երբ Աստված տեսնում է իր եռությամբ քրիստոնյայի, դա նրա համար աղ է, և այն կանգնեցնում է իր ապականված արարչության փտումը: Միակ պատճառը, որ Աստված մինչ այժմ չի ավերել երկիրը, այն է, որ նա դեռ երկրի վրա աղ է հայտնաբերում: Միշտ էլ գոյություն ունի մնացորդ, որն այդ պահպանող ազդեցությունն ունի: Երկիրը չի կարող կրկին կատարյալ դառնալ: Աղը չունի որևէ **վերականգնող** ուժ, այլ միայն **պահպանող և պահածոյացնող** ուժ: Այն միայն կհետաձգի փտման գործընթացը: Աստվածաշունչն ասում է մեզ, որ երկրին արդեն սպասվում է կրակով ավերումը: Աստված ստիպված կլինի այն ավերել ու նորը ստեղծել՝ մեկ այլ, կատարյալը. *«Սակայն Տէրոջ օրը պիտի գայ գողի պէս: Այդ ատեն երկինքը պիտի անցնի շառաչիւնով, տարրերը բռնկելով պիտի անջատուին, իսկ երկիրը անոր մէջ եղող գործերը պիտի այրուին: ...Սակայն մենք՝ իր խոստումին համաձայն՝ կը սպասենք նոր երկինքի մը եւ նոր երկրի մը, որոնց մէջ արդարութիւնը կը բնակի»* (Բ Պետրոս 3:10-13):

Վախենամ, որ ամեն կենդանի արարածի ավարտը շատ մոտ է՝ երկրորդ անգամ կրակով ավերվելու համար: Երբ Աստված երկրից հեռացնի աղը, այն է՝ եկեղեցու վեր հափշտակումը, այդ ժամանակ երկիրը պատրաստ կլինի ավերվելու: Այլևս որևէ բան մնացած չի լինի այն պահպանելու համար:

Աղ՝ առանց համի

Մենք պետք է այժմ դիտարկենք այս տողի երկրորդ հատվածը, քանզի Յիսուսը շարունակում է. *«...եթե աղը կորսնցնէ իր համը, ինք ինչո՞վ պիտի աղուի: Անկէ ետք ո՛չ մէկ ազդեցութիւն կ'ունենայ, հապա*

դուրս կը նետուի եւ կը կոխկոտուի մարդոց ոտքին տակ» (Մատթեոս 5:13):

Եթէ աղն առաջին անհրաժեշտութեան նյութ է, որ մենք գործածում ենք ցանկացած այլ բան համեմելու համար, ապա ինչով ենք մենք համեմում աղը, եթէ այն կորցնում է իր պահպանելու ու համեմելու ուժը: Ակնհայտ է, որ ոչինչով. փոխարինիչներ գոյութիւն չունեն, ինչը շատ զարհուրելի դրութիւն է:

Կոխկոտված մարդկանց ոտքի տակ

Երբ որևէ քրիստոնյա, կամ էլ եկեղեցին, կորցնում են Հիսուս Քրիստոսի սուրբ Էութիւնը, ապա նրանք կորցնում են աշխարհի հարգանքը: Նրանք դառնում են ծաղրի առարկա: Սուրբ Էութիւններն անգամ եկեղեցուց դուրս ունեցած իրենց թշնամիների հարգանքն են վայելում¹:

Նկատեք, թէ ինչպէս են քրիստոնյաները պատկերվում հեռուստատեսութեամբ այժմ, երբ մենք կորցրել ենք հասարակութիւնում այդ Էութիւնը, բնավորութիւնը: Հոգևոր սպասավորը հաճախ պատկերվում է աշխարհի հետ կապն անհուսալիորեն կորցրած, դեռ հեծանվի վրա, պարզամիտ և, հավանաբար, գաղտնի միասեռական: Այժմ հումորիստները կարող են զրպարտել Հիսուսի անունն ու կոպիտ կատակներ անել Աստվածաշնչի հերոսների և ամենակարող Աստծու մասին՝ առանց արտոնագրող իշխանութիւնների կողմից պատասխանատվութեան ենթարկվելու նկատմամբ ունեցած որևէ վախի: Սա չէր կարող տեղի ունենալ անգամ հիսուն տարի առաջ, երբ BBC հեռուստաընկերութիւնը մի հաստատութիւն էր, որ հիմնադրվել էր քրիստոնյա սկզբունքներով:

Ավետարանչական եկեղեցին այնքան զբաղված է շնորհներ փնտրելով, որ նրանք մոռացել են այդ շնորհները ճնորհողի Էութիւնը, և մենք քաղում ենք աղի պակասի այդ արդիւնքները: Երանութիւնների համար որևէ փոխարինող գոյութիւն չունի, մինչդեռ անհատական

քրիստոնյաներն ու եկեղեցին պատմության ընթացքում ամեն բան փորձել են՝ վերականգնելու այն, ինչ պակասում է՝ կրկին աղ դառնալու փոխարեն: Գոյություն չունի մեկ այլ ճանապարհ: Միայն արդարությունն է փառաբանում ազգին: Ահա այն բաներից մի քանիսը, որ եկեղեցին պատմության ընթացքում օգտագործել է՝ որպես աղի փոխարինիչ:

1. Քաղաքականություն

Առանց աղի եկեղեցական կառուցվածքում միշտ էլ քաղաքական համակարգեր են ներմուծում՝ կառավարելու նպատակով՝ լինի դա դիկտատուրա, կոմունիզմ, թե դեմոկրատիա: Դիկտատուրա ասելով՝ ի նկատի ունեմ մի եկեղեցի, որի առաջնորդը անհասանելի է, ճոռոմ ու քննադատությունից վեր: Կոմունիզմ ասելով՝ ի նկատի ունեմ, որ եկեղեցում ամեն ոք իշխանությամբ հավասար է: Դեմոկրատիա ասելով՝ ի նկատի ունեմ, երբ եկեղեցում եղած մարդիկ քվեարկում են իրենց սեփական առաջնորդներին ընտրելու համար: Սրանք, ինչպես և աշխարհի համակարգերի ցանկացած այլ տեսակ, միշտ էլ կհանգեցնեն Բաբելոնի, այն է՝ կեղծ եկեղեցուն, պոռնիկին: Հովհաննես առաքյալի հայտնության գիրքը մեզ պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ այս կեղծ համակարգը կառավարվում է քաղաքականության ու առևտրի միջոցով²:

2. Ֆինանսներ

Երբ անհատը կամ քրիստոնյա կազմակերպությունը սկսում է ֆինանսներ դիզել՝ որպես ապահովության ու հզորության միջոց, ապա հատվածացած եմ, որ ոչինչ բացի այն կտրուկ միջոցներից, որ բերված են Լեռան քարոզում, չի կարող կանգնեցնել փտումն ու այն կրկին աղ դարձնել: *Փողի սերը ամեն չարի արմատն է:* Փողն ինքնիրեն չեզոք է. սերը, այսինքն, չափազանց մեծ մտերմությունն է սխալ:

50-ական դավանանքը, որի ներքո եմ դաստիարակվել ես, այժմ դարձել են պաշտոնական բանկիրներ ու հրավիրում են քրիստոնյաներին ներդրումներ կատարել իրենց մոտ: Նրանք էլ, ի պատասխան, տոկոսադրույք են գանձում այն եկեղեցիներից, որոնց պարտքով փող են տալիս: Հին կտակարանում հրեաներին չէր թույլատրվում վաշխառությամբ զբաղվել իրենց եղբայրների հետ: Ես չափազանց անհանգստացնող եմ համարում այն, որ Աստծու ողորմածության ներքո, *փարիսեցիների արդարությունը գերազանցելու փոխարեն*, մենք անգամ չենք էլ հասնում նրանց մակարդակին:

Որքան ենք արդյոք մենք հեռվացել, որ եկեղեցիներն են դառնում հողատերեր ու բանկիրներ և ներդրումներ են կատարում արժեթղթերի շուկայում: Նրանք կորցնում են այն ամենը, ինչ կապված է Աստծու ճշմարիտ թագավորության հետ, և կորցրել են աղի դատապարտիչ ուժը:

3. Չվարճանք

Այս հաճույք որոնող հասարակությունում, ուր եկեղեցին հնարավորություն ունի տարբերվելու, մենք դարձել ենք միևնույնը, ինչ աշխարհն ու դրանով իսկ կորցրել ենք մեր համը: Մենք հագել ենք աշխարհի հագուստները, որպեսզի փոխակերպենք աշխարհը, սակայն այն ամենն, ինչ տեղի է ունեցել, այն է, որ աշխարհն է փոխակերպել եկեղեցին՝ զվարճանքի, նորաձևության, երաժշտության ու մշակույթի մի վայրի: Թող Աստված ների մեզ:

«Այդ օրը զօրքերու Տէրը՝ Եհովան ձեզ կանչեց լացի ու կոծի, գլուխ կնտելու եւ քուրձ հագնելու. բայց ահա՛ բերկրանքի եւ ուրախութեան մէջ էք, արջառներ կը սպաննէք ու ոչխարներ կը մորթէք, միս կ'ուտէք եւ գինի կը խմէք՝ ըսելով. «Ուտենք ու խմենք, որովհետեւ վաղը պիտի մեռնինք»: Բայց զօրքերու Տէրը՞մէն ինձի յայտնուեցաւ. «Անշուշտ այս անօրէնութիւնը ձեզի պիտի չքաւուի՝ մինչեւ որ մեռնիք», կ'ըսէ զօրքերու Տէրը՝ Եհովան» (Եսայիա 22:12-14):

Չվարճությունը երբեք մեր եռությունը չի փոխի, իրականում, այն մեզ կթմրեցնի՝ դարձնելով անկենդան Աստծու նկատմամբ, քանզի զվարճության բուն եռությունը իրականությունից փախչելն է, այն է՝ իրականության ու երևակայության պայքարը:

4. Մարդկանց վրա ուժ

Սրբությունը անհատական բան է: Եկեղեցին չի կարող սուրբ լինել, քանի դեռ մարմնում եղած անհատները սուրբ չեն: Կարծել, որ Աստծու ուղին բավականաչափ քրիստոնյաներ հավաքելն է, որպեսզի մենք ունենանք «մարդկային ուժ»՝ կառավարության անդամների վրա ազդելու և ստիպելու նրանց փոխել անաստված օրենքը, հավատացած եմ, որ մոլորությունն է: Սա քաղաքական ուժի մի տեսակ է, իսկ եկեղեցին երբեք էլ կոչված չի եղել այն ունենալու:

Երբ եկեղեցին քաղաքական ուժ է ձեռք բերում, այն կարող է միայն մարդկանց «սուրբ» դարձնել օրինականության միջոցով և պատժել, եթե նրանք մերժեն հարմարվել: Այս ուղղու ավարտն այն է, երբ քրիստոնյաները մարդկանց այրում են սյունի վրա և նրանց համար գլխազին են առաջարկում՝ փորձելով ուժով հպատակություն ստիպել: Սա այն բանի փոխարինողն է, ինչ Սուրբ Հոգին կարող է իրագործել, այն է՝ *մարդկանց մեղքի, արդարության ու պատժի դատապարտելը:*

5. Դոկտրինաներ ու դոգմաներ

Էությունը կապված է մեր սրտի հետ ու որևէ կապ չունի մեր դոկտրինաների ու դոգմաների հետ, և երբ եկեղեցին սրտով ուխտադրուժ է դառնում, ապա ներկայացվում են սխալներն ուղղելու ու պաշտպանելու դոկտրինաներ: Հավատացած եմ, որ քրիստոնեությունը եկեղեցական դոկտրինաների մասին չէ. այն անձի՝ կենդանի Աստծու հետ հարաբերության մասին է, որը դոկտրինա չէ, այլ կենդանի

անհատականություն: Դոկտրինաները չեն բարկանում կամ էլ կարեկցանք ունենում, իսկ Աստված՝ այո: Մեր հարաբերությունը պետք է լինի կենդանի Աստծու հետ: Քրիստոնեությունը կապ չունի այն բանի հետ, թե ինչին ենք մենք հավատում, այլ այն է, թե ինչպես ենք մենք ապրում: Ես մտքումս կարող եմ հավատալ բոլոր ճիշտ ուսմունքներին, բայց եթե սիրտս մաքուր չէ, ապա ես չեմ ապրի այն **կյանքը**, որ նկարագրված է Լեռան քարոզում: Ես շատ անկեղծ մարդկանց գիտեմ, և նրանց ողջ ապահովությունն իրենց դոկտրինաներում է: Նրանք չունեն իրական կենդանի հարաբերություն Աստծու հետ և անձամբ նրա ձայնը չեն լսում, մինչդեռ սուրբ գրությունները հստակորեն ասում են. *«Իմ ոչխարները լսում են իմ ձայնը»*:

Աղ՝ համեմող գրգռիչ

Դավիթն ասաց, որ այն ընծաներն ու զոհաբերությունները, որ Աստված պահանջում է, կոտրված սիրտն ու ճմլված հոգին են: Մեզ համար գարշելի թվացող այրվող մարմնի ու արյան հոտն **անուշ հոտ է** Աստծու համար: Տառապող եկեղեցին, որի արյունը թափվում է երկրի վրա, շատ քրիստոնյաների համար շփոթություն է, բայց Աստծու համար նա արտադրում է այն աղը, որ պահպանում է իր երկիրը ներկա ավերումից:

Հավատացած եմ, որ այսպես է Աստված գտում իր Որդու հարսնացուին՝ նրա գալստյան օրերից առաջ: Մենք *չպետք է գարմանանք կրակի փորձություններից*, քանզի դրանք պիտի մաքրեն, լվանան ու աղ բերեն մեր կյանքում:

Կրակով գտված

Այս երկիրը պահված է կրակի համար, քանզի փտելու ու ապականվածության հետ վարվելու մի միջոց է այն կրակով գտելը:

Յովհաննես Մկրտիչն ասաց, որ Յիսուսը կգա՝ *հեծանոցը* (եղան) *ծեռքին, որպեսզի տակավին մաքրի ու զատի ցորենը թեփից*, և որ թեփը պիտի *այրվի անշեջ կրակով*: Մենք չպետք է սպասենք Քրիստոսի վերադարձին դա տեղի ունենալու համար. մենք պետք է թույլ տանք Աստծուն խոնարհեցնել մեզ այժմ ու արտադրել աղը՝ նախքան նա կգա իր եկեղեցին դատելու ու այս երկրի վրա թագավորելու: Մենք ցանկանում ենք լսել «Ապրես, բարի ու հավատարիմ ծառա» բառերը՝ «Չար և ծուլ ծառա» բառերի փոխարեն:

Ուրեմն եկեք ջանանք ունենալու Քրիստոսի բնավորությունը, եռությունը, դիրքն ու միտքը, որպեսքի Աստված մեզ դիտարկի որպես աղ՝ համով ու նրա քթանցքերին անուշ բույր բերելու ուժով՝ այն ապականության մեջ, որ դեռ մեր շուրջբոլորն է:

Նշումներ

1. *Կարդացեք Ռիչարդ Վըրմբրանդի գրքերը նրա ապշեցուցիչ փորձությունների մասին՝ իր դահիճների վերաբերյալ: Յիսուսը սիրված էր հասարակ մարդկանց կողմից: Գողերն ու անբարոյական կանայք սիրում էին նրան, անգամ Յոմեացիները չկարողացան «նրանում որևէ մեղք գտնել»: Կրոնապաշտ մարդիկ էին, որ պախարակեցին, ատեցին ու խաչեցին նրան:*

2. *Տես Բաբելոնի անկման նկարագրությունը՝ բերված Յովհաննես առաքյալի հայտնության 18-րդ գլխում: Երբ Աստված ավերում է Բաբելոնը, և նրա շուքն ու պարծանքը վերջնականապես ցած են նետվում, այդժամ բոլոր մշակույթները, առևտուրն ու քաղաքականությունը նրա հետ են անկում ապրում:*



ԳԼՈՒԽ 15

Լույս՝ հասարակության մեջ

Դուք եք աշխարհի լույսը. քաղաք մը՝ որ լերան վրայ կը գտնուի, չի կրնար պահուիլ: Ու ճրագը չեն վառեր եւ դներ գրուանի տակ, հապա՝ աշտանակի վրայ, որ լուսաւորէ բոլոր տան մէջ եղողները: Ձեր լույսը ա՛յնպէս թող փայլի մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր բարի գործերը եւ փառաբանեն ձեր Հայրը՝ որ երկինքն է:

Մատթեոս 5:14-16

Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ:

Հովհաննէս 18:36

Մի՛ սիրէք աշխարհը, ո՛չ ալ ինչ որ աշխարհի մէջ է: Եթէ մէկը կը սիրէ աշխարհը, Հօրը սէրը չկայ իր մէջ:

Ա Հովհաննէս 2:15-16

«Դուք եք աշխարհի լույսը» բոլորովին տարբեր է «դուք եք երկրի աղը» ուղերձից, բայց այս պնդումները միանման են նրանով, որ Հիսուսն ասում է, թե դուք **եք** աղը և դուք **եք** լույսը: Նա չի ասում, թե դուք **պետք է դառնաք** լույսը: Հավատացած եմ, որ այս պնդումները նաև միանման են նրանով, որ աղը և լույսը երկուսն էլ Աստծու տեսակետն են այն քրիստոնյաների վերաբերյալ, որ իր բնավորությունն ունեն: Այդ դեպքում, տարբերությունը կիրառության մեջ է. **աղը** պահպանում է երկիրը՝ Աստծու ֆիզիկական արարչությունը, իսկ լույսը

բացահայտում խավարն աշխարհում՝ քաղաքականության, մշակույթի և կրոնի համակարգում:

Ո՞վ է աշխարհի լույսը

Որովհետև Յիսուսը քրիստոնյայի վրա **լույսը լինելու** պարտականություն է դնում, շատերը կարծում են, թե բավական է իրենց խոսքերով վկայել այն բանի մասին, որ **Յիսուսն աշխարհի լույսն է**, սակայն հավատացած եմ, որ սա մեծ մոլորություն է: Յիսուսն այլևս աշխարհի լույսը չէ, եթե այդ լույսը չի փայլում քրիստոնյայի միջոցով: Երբ նա աշխարհում էր, նա լույսն էր ու պարզորոշ կերպով ասաց դա. *«Այնքան ատեն որ ես աշխարհի մեջ եմ՝ աշխարհի լույսն եմ» (Հովհաննես 9:5)*: Հովհաննես առաքյալը նաև ասում է, որ լույսը փայլում էր խավարի մեջ, բայց խավարը չճանաչեց այն (Հովհաննես 1:5): Նրանք սպանեցին Յիսուսին ու դրանով իսկ արդյունավետորեն հեռացրեցին այն միակ լույսը, որ աշխարհում կար:

Այժմ Յիսուսը երկնքում է՝ իր Հոր հետ, և այժմ մենք ենք միակ վկան, որ Աստված ունի այս երկրի վրա՝ աշխարհի խավարին կոչ անելու համար: Աստծու աչքին յուրաքանչյուր քրիստոնյա, որ Աստծու բնավորությունն ունի, ինչպես բերված է երանություններում, աշխարհի լույսն է: Եթե մենք դիտարկենք նախ «լույսը», իսկ այնուհետև՝ «աշխարհը», ապա ակնհայտ կդառնա, թե ինչ ի նկատի ունեւր Յիսուսն իր հայտարարություններով:

Լույսը

Ի՞նչ է լույսը: Չնայած նրան, որ Յիսուսը խոսում է հոգևոր լույսի մասին, բնական և հոգևոր լույսերը շատ զուգահեռներ ունեն: Ես միայն դիտարկելու եմ դրանցից երկուսը մեր այս ուսումնասիրության համար:

1. Երկուսն էլ ցրում են խավարն ու բացահայտում այն ամենը, որ անտեսանելի են առանց լույսի:

2. Խավարը չի կարող հանգցնել լույսը: Խավարը լույսի բացակայությունն է և ինքնին որևէ ուժ չունի: Ավելի մութ խավարը լույսին չի ստիպում խամրել. իրականում, այն հակառակ ազդեցություն ունի, որն է՝ լույսը դարձնել, կարծես թե, ավելի պայծառ: Աստղերը միևնույն պայծառությունն ունեն թե՛ ցերեկը և թե՛ գիշերը, բայց խավարը բացահայտում է նրանց լույսը:

Չոզևոր լույսը կարող է պարզապես նկարագրվել՝ որպես հայտնություն: Լույսը հայտնություն է, իսկ Քրիստոսի եռթյամբ մարդիկ միակ լույսն են, որ այս աշխարհն ունի: Իրոք, նրանք միակ միջոցն են այս աշխարհում հայտնություն բերելու Աստծու մասին՝ որպես շնչավոր մարմին՝ զգացմունքներով ու բնավորությանբ. մեկը, որի հետ մենք կարող ենք հարաբերություն ունենալ, այլ ոչ որպես դոկտրինա կամ վարվելակարգ:

Կյանքն ու լույսը

Շատ հետաքրքիր է դիտարկել, ինչպես գիտականորեն, այնպես էլ՝ ըստ Աստվածաշնչի, լույսի և կյանքի միջև եղած կապը: Իհարկե, սա այս գրքի հորիզոնից դուրս է, սակայն մի կարճ հայացք բավարար կլինի տեսնելու, որ դրանք անբաժանելի են ու կարևոր մեր՝ լույսի ուսումնասիրության համար: Երկրի վրա կյանքն ապահովված է լույսի միջոցով: Ֆոտոսինթեզի գործընթացն անհրաժեշտ է երկրի վրա կյանքի գոյության համար: Չովհաննես առաքյալն իր ավետարանը սկսում է այս կապի նկարագրությամբ՝ հոգևոր իմաստով:

«Կեանքը անով էր (խոսքը), ու կեանքը մարդոց լոյսն էր. լոյսը կը փայլեր խաւարի մէջ, բայց խաւարը չճանչցաւ զայն» (Հովհաննէս 1:4-5):

Լույսը կյանք է բերում

Իրական լույսը միշտ էլ կյանք է բերում, **այն** կյանքը, որի մասին Յիսուսը խոսում էր, երբ ասաց. *«...միթե անձը աւելի չէ՞ կերակուրէն, ու մարմինը՝ հագուստէն»*: Նա խոսում էր այն կյանքի մասին, որ գալիս է Յիսուս Բրիստոսի հայտնությունից. ոչ թե այն հայտնության, որ գալիս է դոկտրինայից կամ կրոնից, այլ Բրիստոսից: Դա Լեռան քարոզի կյանքն է:

Համեմատեք Հովհաննես առաքյալի այս խոսքերը Ծննդոց գրքի առաջին խոսքերի հետ՝ արարչության վերաբերյալ: Աստված լույսը ստեղծեց խավարից.

«Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց: Երկիրը ամայի ու դատարկ էր, անդունդին մակերեսին վրայ խաւար կար, եւ Աստուծոյ Հոգին ջուրերուն մակերեսին վրայ կը սաւառնէր:

Աստուած ըսաւ. «Լոյս ըլլայ», ու լոյս եղաւ:

Աստուած տեսաւ թէ լոյսը բարի էր, եւ Աստուած լոյսը խաւարէն դատեց» (Ծննդոց գիրք 1:1-4): Հաջորդող տողերում մենք տեսնում ենք, որ Աստված կյանք ստեղծեց:

Աշխարհը

Մենք տեսանք, որ **երկիրը աղի կարիք ունի**, բայց Յիսուսն ասաց, որ **աշխարհը լույսի կարիք ունի**: Ուրեմն, արդյոք ինչն է աշխարհը, եթե այն տարբերվում է երկրից: Հունարեն բառը, որ օգտագործված է բնօրինակ տեքստում, «kosmos» է, որը բառացիորեն նշանակում է կազմակերպություն, կամ իրերի կարգ, ղեկավարություն կամ զարդարում: Այս իմաստով, հավատացած եմ, որ այն չի նշանակում որևէ ֆիզիկական բան, ինչպես երկիրը: Այն հոգևոր է, մտածելակերպ, կառավարելու կամ կազմակերպելու ձև, դիրքորոշում, մշակույթ, գաղափարախոսություն, իմաստություն: Այս բոլոր բառերը նշանակում

են, որ աշխարհը՝ (ինչն այժմ ցանկանում էմ ցույց տալ սուրբ գրություններից)

1. պատկանում է սատանային
2. չար է
3. խավարում է և լույսի կարիք ունի

1. Այս աշխարհը սատանայինն է

Ես սուրբ գրություններից ցույց տվեցի, որ **երկիրն Աստծունն է**, բայց Աստվածաշունչը նաև ասում է մեզ, որ **աշխարհը Աստծունը չէ** այս ներկա ժամանակ, այն իրականում պատկանում է սատանային: Նա իշխում է դրա վրա և նա է *այս աշխարհի աստվածը*: Սա չի փոխվել Զիսուսի մահվանից ու հարությունից հետո, ինչպես շատերն են ցանկանում, որ մենք հավատանք: Այն կմնա սատանայի համակարգը ճիշտ այնքան ժամանակ, մինչև Զիսուսը նորից գա իր կառավարությունը հաստատելու:

«Եօթներորդ հրեշտակը հնչեցուց փողը, ու երկինքի մէջ եղան հզօր ձայներ՝ որ կ'ըսէին. «Աշխարհի թագաւորութիւնները եղան մեր Տէրոջ եւ իր Օծեալին, ու ան պիտի թագաւորէ դարէ դար» (Հայտնութիւն 11:15): Սա Զիսուսի այս երկիր վերադառնալու ժամանակ է, և եկեղեցու ջանքերը թագավությունը հաստատել նախքան այդ, հիմարություն են ու ապարդյուն: Պատմությունը մեզ ցույց է տվել, որ դա չի կարող տեղի ունենալ նախքան Զիսուսի վերադարձը: Եթե եկեղեցին զորություն և ազդեցություն ձեռք բերի այս աշխարհում՝ նախքան Զիսուսի վերադարձը, ապա այն կդառնա Բաբելոնի՝ պոռնիկի մի մասը, նոր Երուսաղեմի՝ կույս հարսնացուի մասը դառնալու փոխարեն: Այն կարող է միայն խառնաշփոթ առաջացնել: Այն աշխարհի հոգու և Աստծու Զոգու խառնուրդն է, ինչը գաղջություն է ստեղծում, որը Աստծու համար գարշելի է (տես՝ Զայտնություն 3:16-18):

Ոչ այս աշխարհից

«Յիսուս պատասխանեց. «Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ: Եթէ իմ թագաւորութիւնս այս աշխարհէն ըլլար, իմ սպասաւորներս կը պայքարէին՝ որ ես չմատնուիմ Հրեաներուն ձեռքը: Բայց հիմա՝ իմ թագաւորութիւնս ասկէ չէ» (Հովհաննէս 18:36): Զիսուսը **պիտի իր թագավորութիւնն իր հետ բերի**, երբ վերադառնա: Սա այն պատճառով է, որ Նախքան Զիսուսի վերադառնալը դեպի երկիր, նրա թագավորութիւնը ֆիզիկական թագավորութիւն չէ, այլ այն Աստուծոյ կարգն ու իմաստութիւնն է, և, ինչպէս Զիսուսը բացատրում է, Նախքան նրա վերադարձը. *«Աստուծոյ թագաւորութիւնը չի գար դուրսէն երեւացած բաներով: Եւ պիտի չըսեն. "Ահա՛ հոս է", կամ. "Ահա՛ հոն է". որովհետեւ ահա՛ Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսն է» (Ղուկաս 17:20-21):*

«Երբ անոնք կը լսէին այս բաները՝ առակ մըն ալ ըսաւ, քանի որ ինք Երուսաղէմի կը մօտենար եւ անոնք կը կարծէին թէ Աստուծոյ թագաւորութիւնը անմիջապէս պիտի երեւնար:

Ուրեմն ըսաւ. «Ազնուական մարդ մը գնաց հեռաւոր երկիր մը՝ իրեն թագաւորութիւնը ստանալու և վերադառնալու» (Ղուկաս 19:11-12):

Աստվածաշնչի գիտակներն ընդունում են, որ այս առակը եկեղեցու տնտեսավարության մասին է, և որ Զիսուսն է ազնվականը: Ուրեմն, Զիսուսը վերադարձել է երկինք՝ թագավորութիւնն ստանալու ու դրանով երկիր վերադառնալու: Մենք չենք կարող այն հաստատել Նախքան նրա վերադարձը:

Սատանայի առաջարկը

Երբ Զիսուսն ամայութիւնում փորձութեան էր ենթարկվում, նրան առաջարկվեց այս աշխարհի թագավորութիւնները: Նա չառարկեց Սատանայի այն պնդմանը, թէ դրանք իրենն էին, որպէսզի կարողանար տալ:

«...ու Չարախօսը ըսաւ անոր. «Այս ամբողջ իշխանութիւնը եւ անոնց փառքը պիտի տամ քեզի. որովհետեւ ինծի յանձնուած է, ու որո՛ն որ ուզեմ՝ կու տամ զայն» (Ղուկաս 4:6):

Քրիստոնյաները չպետք է փորձեն փոխել աշխարհի համակարգը որևէ այլ միջոցով, բացի լույսը **լինելուց**: Աշխարհը խավարում է, և լույսը միակ պատասխանն է: Յետևյալ հատվածը հաստատում է այն, որ սատանան այս աշխարհի աստվածն է, և որ այն խավարում է:

«Իսկ եթէ մեր աւետարանը ծածկուած է, կորսուածներո՛ն համար ծածկուած է. որոնց մէջ այս աշխարհի աստուածը կուրցուց անհաւատներուն միտքերը, որպէսզի Քրիստոսի՝ Աստուծոյ պատկերին՝ փառքի աւետարանին լոյսը անոնց վրայ չչողայ» (Բ Կորնթացիս 4:3-4):

2. Աշխարհը չար է

Պողոս առաքյալն ասաց Գաղատացիներին, որ *այս աշխարհը չար է* (Գաղատացիս 1:4): Երբ Յիսուսը եկավ առաջին անգամ, նա եկավ ազատագրելու մարդկանց, այլ ոչ համակարգերը: Անհնար է փոխել համակարգը, քանի դեռ չես փոխել այն անձին, ով դրա գլխին է և իշխանություն ունի: Աշխարհի համակարգը հեշտությամբ կփոխվի, երբ Յիսուսը գա երկրորդ անգամ՝ *բազմելու իր Յոր՝ Դավթի գահին* Երուսաղեմում, և ամեն զորություն ու իշխանություն նրան տրված կլինի: Չնայած ամեն զորություն և իշխանություն արդեն տրված է Յիսուսին, նա դեռ Աստծու աջ կողմում սպասում է այդ իշխանությունը կիրառելուն: Յիսուսի մասին խոսելիս՝ Պողոս առաքյալն իր Եբրայեցիս 1:13-ում ասում է. *«Բազմէ՛ իմ աջ կողմս, մինչեւ որ քու թշնամիներդ պատուանդան դնեմ ոտքերուդ»:*

Պաշտպանություն՝ Աստծուց

Յիսուսի արյունը մեզ մեղքից մաքրելու համար է, սակայն այն այս աշխարհի համակարգերը մաքրելու կամ ազատագրելու որևէ ուժ չունի: Պողոս առաքյալը հավատում էր, որ աշխարհը խաչից հետո էլ դեռ չար է. *«...չնորք եւ խաղաղութիւն ձեզի Հայր Աստուծմէ, ու մեր Տէրոջմէն՝ Յիսուս Քրիստոսէ, որ ընծայեց ինքզինք մեր մեղքերուն համար, որպէսզի ազատէ մեզ այս ներկայ չար աշխարհէն՝ Աստուծոյ եւ մեր Հօր կամքին համաձայն...»* (Գաղատացիս 1:3-4): Ահա, թե ինչու մենք չենք կարող լինել աշխարհի մասը՝ չնայած նրան, որ մենք նրանում ենք:

Այս աշխարհի նորաձևությանը, մշակույթին, քաղաքականությանն ու իմաստությանը խառնվելը նշանակում է լինել այս աշխարհի մասը: Յովհաննես առաքյալն ասում է. *«Մի՛ սիրէք աշխարհը, ո՛չ ալ ինչ որ աշխարհի մէջ է: Եթէ մէկը կը սիրէ աշխարհը, Հօրը սէրը չկայ իր մէջ. որովհետեւ ամէն ինչ որ աշխարհի մէջ է՝ մարմինի ցանկութիւնը, աչքերու ցանկութիւնը եւ այս կեանքին ամբարտաւանութիւնը, Հօրմէն չէ, հապա այս աշխարհէն է»* (Ա Հովհաննես 2:15-16):

Յոգևոր դավաճանություն

Յակոբոսն աշխարհի սերն անվանում է հոգևոր դավաճանություն, ինչն, իրոք, չափազանց լուրջ մեղադրանք է: *«Շնացողներ, չէ՞ք գիտեր թէ այս աշխարհի բարեկամութիւնը՝ Աստուծոյ դէմ թշնամութիւն է. ուրեմն ո՛վ որ կը փափաքի բարեկամ ըլլալ աշխարհի, ինքզինք թշնամի կ'ընէ Աստուծոյ»* (Հակոբոս 4:4): Ինչպե՞ս կարող են քրիստոնյաներն այնքան կույր լինել՝ ընդունելու աշխարհի համակարգերն ու արժեքներն՝ այս կարգի սուրբ գրությունների հետ համատեղ:

3. Այս խավար աշխարհը լույսի կարիք ունի

Յետևյալ սուրբ գրություններն իրենք իրենց փոխարեն պիտի խոսեն ու պիտի ցույց տան, որ աշխարհը, իրոք, խավարում է, և որ միայն լույսը, այլ ոչ աղը, կտարրալուծի այն:

«Սա՛ է դատապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ սիրեցին խաւարը՝ փոխանակ լոյսին, քանի որ իրենց գործերը չար էին: Որովհետեւ ո՛վ որ չարիք կը գործէ, անիկա կ'ատէ լոյսը եւ չի գար լոյսին քով, որպէսզի չկշտամբուին իր գործերը: Բայց ա՛ն որ կը կիրարկէ ճշմատութիւնը՝ կու գայ լոյսին քով, որպէսզի իր գործերը յայտնաբերուին թէ գործուեցան Աստուծով» (Հովհաննես 3:19-21):

«Որովհետեւ մեր գօտեմարտը մարմինի եւ արիւնի հետ չէ, հապա պետութիւններու, իշխանութիւններու, այս խաւար աշխարհին իշխանաւորներուն հետ, երկնաւոր վայրերու մէջ եղող չար ոգիներուն հետ» (Եփեսացիս 6:12):

Սխալ ծառը

Այս ներկայիս աշխարհը երբեք չի ճանաչի լույսը, որովհետև դրա արժեքները բոլորը հիմնված են բարոյականության վրա: Սա բարին ու չարը գիտենալու՝ խղճի ծառն է¹: Բարոյական արժեքները կապ ունեն մեր մշակույթի, քաղաքականության և կրոնի հետ ու կարող են փոխվել՝ համապատասխանելով շրջապատող միջավայրին: Քրիստոնյաներն այժմ պետք է լինեն այն նույն իրավիճակում, ինչ Ադամն էր՝ նախքան մեղք գործելը, ինչը նշանակում է, որ նրանք այլևս չեն սնվում բարին և չարը գիտենալու ծառից: Նրանք այժմ ապրում են Աստծու խոսքին պարզ հնազանդությամբ և սնվում են կենաց ծառից: Սա ամենակին տարբերվում է բարոյական կանոնակարգին հետևելուց՝ ինչքան էլ լավը որ այն չլինի:

Ինձ համար այն մեկ արտահայտությունը, որ ամենալավն է ամփոփում «kosmos» բառը, դա «աշխարհի իմաստությունն» է, այն է՝

այս աշխարհի աստծու մտածելակերպը, ինչը միշտ էլ հակասում է ի վերուստ եկող իմաստությանը՝ Աստծու մտածելակերպին: Աստծու իմաստությունը թույլ է տալիս հեգերին ժառանգելու երկիրը, այլ ոչ թե զորեղներին, իսկ տկարներին՝ հզորներին բացահայտելու: Մենք, իրականում, պետք է նվազենք, եթե ցանկանում ենք, որ նա աճի մեր կյանքում: Այս մտածողությունը հակառակ է մեր բնական՝ Ադամի մարմնական մտածողությանը, իսկ դա շատ հեշտությամբ է գրավում ու ներս թափանցում դեպի մեր եկեղեցական մտածողությունը:

Նոր մտածելակերպ

Ուշադիր կարդացեք, թե ինչ է ասում Պողոս առաքյալը կորնթացի քրիստոնյաներին: *«Որովհետև Քրիստոս զրկեց զիս ո՛չ թէ մկրտելու, հապա աւետարանելու. բայց ո՛չ խօսքերու իմաստութեամբ, որպէսզի Քրիստոսի խաչը ընդունայն չըլլայ: Արդարեւ խաչին քարոզութիւնը յիմարութիւն է անոնց համար՝ որ կը կորսուին, իսկ մեզ համար՝ որ փրկված ենք՝ Աստուծոյ զօրութիւնն է: Որովհետև գրուած է. «Իմաստուններուն իմաստութիւնը պիտի կորսնցնեմ, ու խելացիներուն խելքը պիտի ջնջեմ»: Ու՞ր է իմաստունը, ու՞ր է դպիրը, ու՞ր է աշխարհի վիճարանողը. միթէ Աստուած չյիմարացո՞ւց այս աշխարհի իմաստութիւնը: ...որովհետև Աստուծոյ յիմարութիւնը մարդոցմէ աւելի իմաստուն է, եւ Աստուծոյ տկարութիւնը մարդոցմէ աւելի ուժեղ է: ...հապա Աստուած ընտրեց աշխարհի յիմարները՝ որպէսզի ամօթահար ընէ իմաստունները: Աստուած ընտրեց աշխարհի տկարները՝ որպէսզի ամօթահար ընէ հզօրները» (Ա Կորնթացիս 1:17-27):*

Հակոբոսը նույնպես մեզ է ներկայացնում երկու իմաստությունների պարզ պատկերը, այն է՝ Աստծու և աշխարհի: Նկատեք, թե ինչպես է Հակոբոսը թվարկում երանությունների հատկությունները՝ նկարագրելով ի վերուստ եղող իմաստությունը.

«Ո՛վ որ իմաստուն ու խելացի է ձեր մէջ, բարի վարքով թող ցոյց տայ իր գործերը՝ իմաստութեան հեղութեամբ: Բայց եթէ դառն նախանձ

Եւ հակառակութիւն ունենաք ձեր սիրտերուն մէջ, ճշմարտութեան դէմ մի՛ պարծենաք ու մի՛ ստէք: Այս իմաստութիւնը չ'իջներ վերէն, հապա՛ երկրային, չնչաւոր եւ դիւական է: ...Բայց վերէն եկող իմաստութիւնը՝ նախ անկեղծ է, յետոյ՝ խաղաղարար, ազնիւ, հլու, լի ողորմութեամբ ու բարի պտուղներով, անկողմնակալ եւ անկեղծ: Արդարութեան պտուղը խաղաղութեամբ կը սերմանուի անոնց միջոցով՝ որ խաղաղութիւն կ'ընեն» (Հակոբոս 3:13-18):

Խառնված փոխաբերութիւններ

Այժմ մեզ համար պետք է որ լիովին պարզ լինի, թե ինչու մենք չենք կարող խառնել ու հարմարեցնել Զիսուսի այս երկու պնդումները: Խավարը լույսի կարիք ունի, այլ ոչ աղի: Մութ սենյակում ցանված աղը բոլորովին էլ ազդեցություն չունի: Աղը փտումը կանգնեցնելու համար է, իսկ մենք տեսանք, որ **երկիրն** աղի կարիք ունի, որովհետև այն ապականվել է: Ուրեմն, քրիստոնաները երբեք չեն կարող համ ու հոտ տալ **աշխարհին: Մենք չենք կարող լինել հասարակության աղը:** Մենք կարող ենք միայն լույսը լինել:

Ինչո՞ւ է ժամանակակից եկեղեցին մոլորվել՝ հավատալով այդ ստին: Կարող եմ արդյոք առաջարկել, որ նրանք վախենում են խաչի անարգանքից: Լույսը հակառակվում է խավարին, և գոյություն չունի որևէ փոխզիջում: Լույսը տարրալուծում է խավարը: Եթե ցանկանում եք պահպանել խավարը, ապա լույսը պետք է հեռացվի, ինչպես պատահեց Զիսուսի հետ:

Ժամանակակից եկեղեցին բարի լուրը դարձրել է ոչ թե անարգանքի սյուն կամ էլ սալաքար, այլ մի շուկայական ապրանք՝ հրապուրիչ ու գրավիչ: Ամենակն էլ ոչ: Անձն ուրանալը, մեր խաչը վերցնելն ու Զիսուսին հետևելը ամենաթանկագին բանն է, որ մարդ արարածը կարող է անել:

Միայն մահը՝ սեփական անձի նկատմամբ կարող է ձեռք բերել Քրիստոսի թագավորությունը անհատի մեջ. բայց խաչելության մահը

դանդաղ ու ցավոտ է և պետք է հաշվի առնվի՝ նախքան անհատն իրեն այս մահվան կդատապարտի: Քրիստոսին հետևելու հուզումնալից որոշումը չի գոյատևի: Սա վախկոտ, «լավ եղանակի նավաստիների» համար չէ: Սա աշակերտների, առաքյալների համար է, քանզի *մենք շատ տառապանքով ենք մտնում Աստծու թագավորությունը* (Գործք Առաքելոց 14:22):

Լույս լինելը

Մենք այժմ կարող ենք ասել, որ քրիստոնյան չպետք է խոսի լույսի մասին, այլ պետք է **լինի** լույսը: Հիսուսն ասում է, որ նրա բնավորությամբ մարդիկ հենց այդ **լույսն են**: Լույսը դառնալու համար մենք պետք է ընթանանք լույսի ներքո: Հովհաննեսն առաքյալի՝ եկեղեցուն ուղղված ընդհանրական նամակները բազմիցս անգամ նշում են լույսի ներքո ընթանալու մասին: Դանդաղ ու զգուշորեն կարդացեք հետևյալը այն բանի հիման վրա, ինչ հենց սոր կարդացիք.

«Եվ սա՛ է այն պատգամը՝ որ լսեցինք իրմէ ու հաղորդենք ձեզի, թէ Աստուած լոյս է, եւ անոր մէջ բնաւ խաւար չկայ: Եթէ ըսենք. «Մենք հաղորդութիւն ունինք անոր հետ», սակայն խաւարի մէջ ընթանանք, կը ստենք ու չենք կիրարկեր ճշմարտութիւնը: Իսկ եթէ լոյսի մէջ ընթանանք, ինչպէս ան լոյսի մէջ է, հաղորդութիւն կ'ունենանք իրարու հետ, եւ անոր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի արիւնը կը մաքրէ մեզ ամէն մեղքէ» (Ա Հովհաննես 1:5-7):

Հովհաննեսն առաքյալը չի խոսում պարզապէս վերաբերմունքի մասին, այլ խոսում է մեր կենսակերպի մասին՝ աշխարհի այս համակարգում: *«Ա՛ն որ կ'ըսէ թէ լոյսի մէջ է եւ կ'ատէ իր եղբայրը, տակաւին խաւարի մէջ է: Ա՛ն որ կը սիրէ իր եղբայրը, կը բնակի լոյսի մէջ, ու գայթակղութիւն չկայ իր մէջ: Բայց ա՛ն որ կ'ատէ իր եղբայրը՝ խաւարի մէջ է, խաւարի մէջ կը քայլէ եւ չի գիտեր թէ ո՛ւր կ'երթայ, որովհետեւ խաւարը կուրցուցած է իր աչքերը» (Ա Հովհաննես 2:9-11):*

Թող ձեր լույսը փայլի

Աշխարհին, որ խավարում է, միայն կարող է կոչ անել մեր լույսը, այն է՝ Քրիստոսի բնավորությունը, որը փայլում է մեր մեջ: Դոկտրինան ու եկեղեցական ծրագրերը, զվարճանքն ու մշակույթը երբեք չեն փոխի խավարը: Աստծու արարչությունում ամեն բան չեզոք է, բայց դրանք օգտագործող հոգին չեզոք չէ, և մենք չենք կարող փոխզիջման գնալ՝ մեր լույսը կորցնելու հաշվին: Ամեն բան, որ մենք անում ենք, պետք է փառաբանի Աստծուն, այլ ոչ թե մեր եսը: Եթե մենք ամբողջությամբ չենք զատված՝ մեր կենսակերպով, վերաբերմունքով ու դրդապատճառներով, ապա մենք կրակի հետ ենք խաղ անում և լույսը զիջելու վտանգի տակ ենք: Հիսուսն ավելի ուշ իր քարոզում ասում է. *«...եթե քու մէջդ եղած լոյսը խաւար է, ա՛յլ ո՛րքան է այդ խաւարը» (Մատթեոս 6:23)²:*

Լույսը Քրիստոսի եղբայան մասին Աստվածաշնչում գրվածը չէ միայն: Մենք պետք է լինենք կենդանի լույսը, Քրիստոսի մարմնավորման կենդանի հայտնությունը այս անաստված աշխարհում: Սա է այն թանկ կոչը Քրիստոսի պնդումների ներքո, որ մենք, իրոք, դառնանք երկրի աղն ու աշխարհի լույսը՝ մեր կենսակերպով:

Նշումներ

1. Կարող է տարօրինակ ու հակասական պնդում թվալ այն, թե աշխարհի տեսակետերը բոլորը հիմնված են բարոյականության վրա, երբ ժամանակակից փիլիսոփայությունն ասում է, թե մենք որևէ կատարյալ պնդումներ չունենք և ինքներս ենք որոշում մեր իսկ չշմարտությունը: Թույլ տվեք ներկայացնելու այն, ինչին ես եմ հավատում: Այն պնդումը, թե գոյություն չունեն կատարյալ պնդումներ (աբսոլյուտներ), իրականում մի կատարյալ պնդում է և շատ մոլորեցնող է: Այն ինչ Նոր դարի ուսուցիչներն են անում, ոչ թե բարոյականությունը վերացնելն է, այլ այն փոխելը: Ոչ ոք

չի կարող փախչել բարոյականությունից, քանզի այն ներառում է ընտրությունը, իսկ ընտրությունը սկզբունքային է կյանքի համար: Բարոյական արժեքները պարզապես արգելված՝ բարին ու չարը գիտենալու ծառի դատողություններն են: Ողջ մարդկությունը ստիպված է ուտելու այդ ծառից ամեն օր՝ Ադամի մեղքի պատճառով: Ցանկացած մարդու համար միակ այլընտրանքը կենաց ծառից ուտելն է: Ճիշտ այնպես, ինչպես Աստվածաշունչն ասում է, թե դուք **այետք է** ծառայեք երկու

2. Չավատացած եմ, որ այս մոլորությունը խիստ տարածված է Քրիստոսի մարմնում: Այն տեղի է ունենում, երբ քրիստոնյաներն իրենց կյանքն ապրում են աշխարհի իմաստությամբ ու մեթոդներով, մինչդեռ հավատում, թե իրենք Քրիստոսի միտքն ու իմաստությունն ունեն: Սա առավելագույն մոլորություն է, և այն, որ հավատացած եմ, կմոլորեցնի այս վերջին օրերի ուխտադրուժ եկեղեցուն:



ԳԼՈՒԽ 16

Խոնարի բարեպաշտություն

*...ձախ ձեռքդ թող չզիտնայ աջ ձեռքիդ
ինչ տալը...:*

Մատթեոս 6:3

Առաջին պնդման մեջ, որ Հիսուսն անում է աղի մասին, որևէ ցուցում գոյություն չունի: Դա Աստծու հեռանկարն է այն քրիստոնյայի վերաբերյալ, ով իր բնավորությունն ունի, իսկաղը նպատակադրված չէ երկիրը վերջնականապես փոխելու: Այն կատարում է միայն այն, ինչ աղն է անում, այն է՝ պահպանում ու կանգնեցնում է փտած գարշահոտությունը, որ բարձրանում է դեպի Աստծու քթանցքերը: Հիսուսի երկրորդ պնդումը բուլորովին տարբեր է: Լույսը դանդաղ չի գործում խավարի մեջ տարածվելով: Այն ահռելի արագությամբ է ճանապարհորդում՝ 299 792 458 մ/վ կամ 1 079 252 848.8 կմ/ժ, և անմիջապես տարրալուծում է խավարը:

Այս երկրորդ պնդումը ցուցումներ է պարունակում: Հիսուսն ասաց, որ մենք պետք է *թողնենք, որ մեր լույսն այնպես փայլի մարդկանց առջև, որ տեսնեն մեր բարի գործերը* (Մատթեոս 5:16):

Վախ գործերի նկատմամբ

Շատ տարօրինակ պատճառով «գործերը» նշելն անգամ ապշեցուցիչ վախ է առաջ բերում շատ քրիստոնյաների մեջ, որոնք համոզված են, որ փրկությունն Աստծու շնորհքով է: Սա տեղի է ունենում չնայած այն փաստի, որ Հիսուսի և առաքյալների ուսմունքները լի են գործերի մասին ուսուցումներով: Այս բարի գործերը,

թեպետ, հավատքի փոխարինիչը չեն. դրանք ապացույցն են այն բանի, որ մենք հավատքով շնորհ և ողորմածություն ենք ձեռք բերել: Պողոս առաքյալի՝ Եբրայեցիս 11:1-ում նշված հավատքի սահմանումն ասում է, որ դա այն բաների **փաստն է, ապացույցը**, որ տեսանելի չեն: **Փաստը** չի կարող մեր մտքում լինել, այն միայն կարող է ակներև, հայտնի դառնալ մեր գործողություններով: Սուրբ գրությունը նաև ասում է, որ հավատքը իրերի **խարհսխն է, սուբստանցիան**: Կրկին, սուբստանցիան որևէ կապ չունի մտքի հետ, այլ այն կապ ունի նյութական բաների հետ՝ մատերիայի:

Որպես քրիստոնյաներ, մենք պետք է ապացուցենք, որ շնորհք ենք ստացել, և որ այդ շնորհքը մեզ ուժ է տվել դառնալու Աստծու որդիները, այն է՝ ցույց տալու մեր Հոր բնավորությունը՝ թույլ տալու, որ մեր լույսը փայլի:

Ինչպես մեր Հայրը

Սա միայն այն բանի զուգահեռական է, ինչը տեղի է ունենում բնական ոլորտում: Եթե ես որևէ գործողություն կամ արարք կատարեմ, մարդիկ հաճախ կասեն. «Պահ, դու ճիշտ հորդ նման ես»: Սա որևէ կապ չունի այն բանի հետ, թե ես նմանակում կամ փորձում եմ հետամուտ լինել նրան, քանզի ես գործում եմ առանց գիտակից դիտավորության: Փաստն այն է, որ ինձ համար պարզապես անհնար է այլ բան անելը, անգամ եթե ես փորձեմ:

Միևնույնը տեղի է ունենում նաև իրական աշակերտների հետ: Նրանք գիտակցորեն չեն փորձում սուրբ լինել: Նրանք սուրբ են, որովհետև իրենց Հոր բնավորությունն ունեն և միշտ բացահայտում են այն: Իրական սրբությունն անկաշկանդ, խոնարհ բարեպաշտություն է, որ մենք պիտի տեսնենք Լեռան քարոզի մնացած մասում: Միակ արդարությունը, որ ընդունելի է Աստծու կողմից, ճիշտ, արդար ապրելն է, ինչը մեզանից թաքցված է, բայց ստիպում է մարդկանց փառաբանել Աստծուն երկնքում, այլ ոչ թե փառաբանել մեզ մեր բարի կյանքի համար:

Հաջորդ գիրքը

Հիսուսը ավելի ուշ իր քարոզում պարզորոշ կերպով ասում է մեզ, թե ինչպես բացահայտել այս անկաշկանդ սուրբ կյանքը, և ես այն ակնհայտ կդարձնեմ այս շարքի հաջորդ գրքերում: Այնուամենայնիվ, նախքան մենք կկարողանանք այս գաղտնիքն իմանալ, կարևոր է, որ հասկանանք Հիսուսի հաջորդ պնդումը, որը բազմաթիվ քրիստոնյաների համար սայթաքելու քար է եղել:

«Մի՛ կարծէք թէ եկայ՝ արելու Օրէնքը կամ Մարգարէները: Եկայ ո՛չ թէ արելու, հապա՛ գործադրելու: Որովհետեւ ճշմարտապես կը յայտարարեմ ձեզի. "Մինչեւ որ երկինքն ու երկիրը անցնին, Օրէնքէն յովտ մը կամ նշանագիր մը պիտի չանցնի՝ մինչեւ որ բոլորն ալ կատարուին" » (Մատթեոս 5:17-18):

Հավատացած եմ, որ պատճառն այն բանի, որ շատ քրիստոնյաներ այս տողերի վրա «սայթաքում» են, այն է, որ նրանք, իրականում, չեն հասկանում, թե ինչ է շնորհն ու ինչ է այն անում, կամ էլ թե ինչու էր օրենքը կիրառվում: Սա է լինելու Լեռան քարոզի վերաբերյալ այս շարքի հաջորդ գրքի նյութը. «Օրենքի իրագործումը»:





Մորիս Բարրաթը դաստիարակվել է իր հոր՝ Բիլլ Բարրաթի քրիստոնեական ծառայության ներքո: Նա քրիստոնյա է դարձել վեց տարեկանում և իր երիտասարդությունից ի վեր ապրել ավանդական քրիստոնյա կենսակերպով: Սակայն երեսուն տարեկանում նրա վրա խորը ազդեցություն է թողնում իր հոր ուսուցումը՝ հիմնված Հիսուսի Լեռան քարոզի վրա, որտեղ խոսվում է իրական քրիստոնյայի

սկզբունքների և կենսակերպի մասին: Այդ ժամանակվանից ի վեր նա սկսում է ավանդական, «նորմալ» քրիստոնյայից դառնալ մի մարդ, ով համոզված է, որ այն, ինչի պակասն այսօր քրիստոնյաներն ունեն, ոչ թե գերբնական զորությունն է կամ շնորհները, այլ պտուղը՝ Հիսուսի եռությունը, նրա բնավորությունը:

Վերջին երեսուն տարիների ընթացքում Մորիսը նվիրաբար հետևում է իր կանչին. ուսուցանում է եկեղեցուն (այսինքն հավատացյալ ժողովրդին) քրիստոնյա աշակերտի իրական կենսակերպը: Նա ուսուցանում է եկեղեցիներում, տնային խմբերում, բանտերում, դպրոցներում և աստվածաշնչյան դպրոցներում, Եվրոպայի, Աֆրիկայի, Ասիայի մի շարք պետություններում, ԱՄՆ-ում և Կանադայում:

Քրիստոնյայի կենսակերպին վերաբերող դասերի մեծամասնությունը հասանելի են համացանցում՝ www.barrattministries.org.uk կայքում, որտեղ ներառված է նաև Լեռան քարոզի շարքը՝ 64 դասից կազմված:

Մորիս Բարրաթը Մեծ Բրիտանիայի Մանչեսթեր քաղաքում գործող «Barratt Ministries»-ի տնօրենն է: Նրա «Արմատական քրիստոնեություն» շարքը ուղղված է Լեռան քարոզի խորաթափանց ուսումնասիրությանը, որի նպատակն է, կոչ անել այսօրվա քրիստոնյաներին հետևելու Հիսուսին՝ ապրելով նրա պատգամած կենսակերպով:



**«Barratt Ministries» հրատարակչության
կողմից հրատարակված այլ գրքեր**

**«Արմատական քրիստոնեություն» շարք - մաս 1
Կարող եմ արդյոք իրական քրիստոնյաները
ոտքի կանգնել**

**«Արմատական քրիստոնեություն» շարք - մաս 3
Օրենքի իրագործումը**

**«Արմատական քրիստոնեություն» շարք - մաս 4
Աշակերտի գաղտնի կյանքը**

**«Արմատական քրիստոնեություն» շարք - մաս 5
Ագա՞հ, թե՞ հագեցած**

**«Արմատական քրիստոնեություն» շարք - մաս 6
Աշակերտի ընտրությունը**



«Barratt Ministries»-ը քրիստոնյա կազմակերպություն է, հիմնադրվել է 1985 թ-ին Մեծ Բրիտանիայի Մանչեսթեր քաղաքում: Այն զբաղվում է գրքերի և գրականության հրատարակմամբ, երաժշտական, ուսուցողական սկավառակների ձայնագրմամբ և այլն:

«Barratt Ministries» հրատարակչություն

